Ֆ. Փ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Լ. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՅԱ. Ի. ՄՈՒԼՔԻՋԱՆՅԱՆ

# ԿԱՆԱՉ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ֆ. Փ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Լ. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
ՅԱ. Ի. ՄՈՒԼՔԻՋԱՆՅԱՆ

# ԿԱՆԱՉ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1986

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

Ф. П. АЙРАПЕТЯН, Л. В. АРУТЮНЯН,
Я. Н. МУЛКИДЖАНЯН

# АРМЯНО-РУССКИЙ ТОЛКОВЫЙ СЛОВАРЬ ПО ЗЕЛЕНОМУ СТРОИТЕЛЬСТВУ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1986

ԳՄԴ 28. 5 8 2
Հ 300

*Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

*Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու*
**Լ. Բ. Պետրոսյան**

*Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ Խ. Աբովյանի անվ. հայկական մանկավարժական ինստիտուտի գյուղհիմունքների ամբիոնը և կենսաբանական գիտությունների թեկնածու Հ. Ա. Մանուկյանը*

**Հայրապետյան Ֆ. Փ.** *և ուրիշ.*

**Հ 300** *Կանաչ շինարարության հայ-ռուսերեն բացատրական բառարան /Ֆ. Փ. Հայրապետյան, Լ. Վ. Հարությունյան, Յա. Ի. Մուլքիջանյան, Պատ. խմբ. Լ. Բ. Պետրոսյան.— Եր.։ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986.— 113 էջ.*

*Վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ, Հ. Աճառյանի անվ. լեզվի ին-տ.*

**Բառարանն** *ընդգրկում է կանաչ շինարարությունում օգտագործվող շուրջ 810 տերմին և հասկացություն, դրանց ժամանակակից համառոտ բացատրությունները հայերեն լեզվով, ինչպես նաև այդ տերմինների ռուսերեն համարժեքները։ Կից տրվում է ռուսերեն տերմինների այբբենական ցանկ՝ համապատասխան համարանիշով։*

*Նախատեսված է կանաչ շինարարության մասնագետների, բուսաբանների, ճարտարապետների, շինարարների, նախագծային ինստիտուտների աշխատակիցների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և տեխնիկումների համապատասխան ֆակուլտետների ուսանողների համար։*

20604000000
Հ ———————— 86—85 ԳՄԴ 28. 5 8 2
703(02) —86

© Հայկական ՍՍՀ ԳԱ.

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Կանաչ շինարարությունը պրակտիկ և գիտական գործունեության հնագույն բնագավառ է, որը մեր օրերում դարձել է սոցիալիստական քաղաքաշինության անբաժանելի մաս, ինչպես նաև՝ բնության պահպանության ու հարստացման կարևորագույն օղակը: Գիտագործնական այդ բնագավառի վերջին տասնամյակների բուռն զարգացումը կանաչապատման մասնագիտական գրականությունը հարստացրել է նոր հասկացություններով ու տերմիններով: Ցավոք, դրանք հայերեն հրատարակվող աշխատություններում ու կյանքում օգտագործվում են երբեմն առանց թարգմանվելու, երբեմն ոչ ճիշտ թարգմանությամբ, հաճախ՝ նաև ոչ ճիշտ իմաստով:

Ներկա բառարանը, որը ըստ կառուցվածքի և՛ տերմինարան է, և՛ թարգմանական, բացատրական ու տեղեկատու բառարան, նպատակ ունի հեշտացնելու կանաչ շինարարության հասկացությունների ու տերմինների հայերեն լեզվով ճիշտ ու տեղին օգտագործումը: Մանավանդ որ գեղազարդային պարտիզագործության վերաբերյալ հայերեն մասնագիտական գրականությունն էլ շատ չէ:

Բառարանն ամփոփում է շուրջ 810 հասկացություն, պարզ ու բաղադրյալ տերմին, ընդգրկելով՝ կանաչ շինարարությունում և հարակից մասնագիտություններում օգտագործվող հիմնական հասկացություններն ու տերմինները, դրանց համառոտ բնորոշումները և առանձին օրինակներ (նաև այդ տերմինների ռուսերեն համարժեքները):

Բառարանը կազմված է տերմինարանի սկզբունքով: Հասկացություններն ու տերմինները համարակալված են ու

դասավորված այբբենական կարգով: Վերջում տրվում է ռուսերեն տերմինների այբբենական ցանկ՝ համապատասխան համարանիշերով: Բաղադրյալ տերմինները որպես գլխաբառ տրվում են հիմնականում ուղիղ շարադասությամբ: Նույն տերմինի արտահայտած տարբեր հասկացությունները համարակալված են: Որոշ գլխաբառ տերմիններ ունեն նաև հոմանիշներ, որոնցից նախապատվությունը տրված է հիմնականում հայերեն տերմիններին, երբեմն՝ գիտական գրականությունում բաղաձայնության իրավունք ստացած միջազգային տերմիններին:

Բառարանը կանաչ շինարարության բնագավառի հայերեն առաջին փորձն է: Հեղինակները շնորհակալությամբ կընդունեն արված դիտողությունները ու լրացումները, որոնք հաշվի կառնվեն բառարանի հետագա հրատարակության ժամանակ:

# Ա

1. **ԱԲՈՐԻԳԵՆ ԲՈՒՅՍԵՐ**— АБОРИГЕННЫЕ РАСТЕНИЯ *Տեղաբնակ բույսեր, որոնք ծագել ու զարգացել են որոշակի շրջանում։ Նույնացվում են էնդեմիկ բույսերի հետ։*

2. **ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՊԱՐՏԵԶԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**— АГРОТЕХНИЧЕСКИЕ РАБОТЫ В САДОВО-ПАРКОВОМ СТРОИТЕЛЬСТВЕ *Ծառերի, թփերի, ածիլների տնկման, սիզամարգերի և ծաղկանոցների հարդարման, բույսերի խնամքի ու մշակության, տնկարկների ձևավորման միջոցառումներ պարտեզներում ու զբոսայգիներում։*

3. **ԱԳՐՈՑԵՆՈԶ**— АГРОЦЕНОЗ *Մարդու ստեղծած, պահպանվող փոքրաթիվ բիոտիկ համակեցություն։ Աչքի է ընկնում նվազ հուսալիությամբ, բայց բույսերի մեկ կամ մի քանի ընտրված տեսակների (սորտերի) բարձր բերքատվությամբ։*

4. **ԱԶԱՏ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ**— СВОБОДНАЯ ПЛАНИРОВКА *Պարտեզների և զբոսայգիների հատակագծման եղանակ։ Բնորոշվում է տարածության վրա տնկարկների և կառուցվածքների ազատ տեղադրմամբ։ Առավելագույն չափով են օգտագործվում տեղանքի ռելիեֆը, ջրամբարները, բուսականությունը։ Ընդգրկում է ինչպես կանոնավոր, այնպես էլ լանդշաֆտային հատակագծման տարրեր։*

5. **ԱԶԱՏ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ**— СВОБОДНОЕ ПРОСТРАНСТВО *Քաղաքի, շրջանի, միկրոշրջանի չկառուցապատված հատված։ Զբաղեցվում է տարբեր նշանակության կանաչապատման օբյեկտներով։*

6. **ԱԶԱՏԱՎԱՆԴԱԿ**— ВОЛЬЕР *Խրամատով, երկաթաճաղերով կամ ցանցով մեկուսացված հողամաս, որտեղ պահվում են կենդանիներ ու թռչուններ։ Հատուկ զբոսայգիներում, արգելավայրերում կամ մասնագիտացված (օրինակ՝ կենդանաբանական) այգիներում օգտագործվող ձևավորման տարր։*

7. **ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ**— НАЦИОНАЛЬНЫЙ ПАРК *Մարդու ազդեցությանը էապես չենթարկված բնական լանդշաֆտների ընդարձակ տարածք, որը պահպանում է պետությունը՝ նրա տեղական մարմինները։ Ունի բացառիկ բնական յուրահատկություններ՝ ժայռոտ լեռներ, բուսական հարուստ*

կազմով անտառներ, լճեր, գեյզերներ և այլն, որոնք ազգային հարստություն են։ Նախատեսվում է գիտահետազոտական աշխատանքների, տուրիզմի, հանգստի համար։

8. ԱԼԲԵԴՈ— АЛЬБЕДО Առարկաների մակերևույթին ընկնող ճառագայթային էներգիայի անդրադարձման ունակությունը բնորոշող մեծություն։ Չափվում է անդրադարձված և ստացված ճառագայթային էներգիաների քանակների հարաբերությամբ։ Բացարձակ սև մարմնի ալբեդոն 0 է, ծառերի սաղարթինը՝ 10—15%, խոտածածկինը՝ 20—25%, հողի մակերեսինը՝ մոտավորապես 40%։

9. ԱԼՅՈՒՎԻԱԼ ՀՈՂ— АЛЛЮВИАЛЬНАЯ ПОЧВА Գետային սանդղափուլերի վրա ձևավորվող ջրաբերուկային հող։ Բնորոշ է գետերի ողողատներում ստեղծված պարտեզներին ու զբոսայգիներին։

10. ԱԼՊԻԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐ— АЛЬПИЙСКИЕ РАСТЕНИЯ Բարձրլեռնային պայմաններում (ալպիական գոտում) աճելուն և զարգանալուն հարմարված բույսեր (կարճահասակ հացազգիներ, բոշխեր, գնարբուկներ և այլն)։ Կարող են օգտագործվել քարաբլրակների ստեղծման ժամանակ։

11. ԱԼՊԻՆԱՐԻՈՒՄ— АЛЬПИНАРИЙ Լեռնային լանդշաֆտի և նրա բուսականության գեղեցկությունը ալպիական բույսերի, ժայռաբեկորների ու ջրի զուգորդման միջոցով վերարտադրող քարքարոտ պարտեզ։ Ստեղծվում է արհեստական եղանակով։

12. ԱԼՏԱՆԿԱ— АЛЬТАНКА Տե՛ս ՏԱՂԱՎԱՐ։

13. ԱԿՎԱՐԻՈՒՄ— АКВАРИУМ Ջրավազան, թափանցիկ պատեր ունեցող, ջրով լցված հատուկ անոթ։ Նախատեսված է ձկների, ջրային կենդանիների ու բույսերի աճեցման և պահպանման համար։

14. ԱԿՎԵԴՈՒԿ— АКВЕДУК Տե՛ս ՋՐԱՆՑՈՒՅՑ։

15. ԱԿՏԻՎ ԳՈՒՅՆ— АКТИВНЫЙ КОЛЕР Կարմիր, նարնջագույն, դեղին գույները և դրանց նրբերանգները։ Ամենավառ, ամենատաք, ակտիվ գույնը նարնջագույնն է։ Հանրանկարում ակտիվ գույները լավ են դիտվում։ Զբոսայգու այս կամ այն հատվածը շեշտելու համար տեղադրվում են ակտիվ գույն ունեցող բույսեր կամ առարկաներ։

16. ԱՀ-ԱՀ— АХА XVII—XVIII դարերի պարտեզապուրակային արվեստում տարածված եղանակ, ըստ որի զբոսայգու սահմանը անտեսանելի, հանկարծակի բացվում էր դեպի շրջապատող լանդշաֆտը (օրինակ, դեպի գետի գեղատեսիլ կանյոնը)։ Հիացական «ահ-ահ» բացականչությունից։

17. ԱՂԱԲՈՒՅՍ— ГАЛОФИТ Աղակալած հողերին հարմարված բույս (կարմրան, օշան, սաքսաուլ և այլն)։

18. ԱՂԱԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ— СОЛЕУСТОЙЧИВОСТЬ Հողի աղակալման որոշակի պայմաններում բույսերի աճման ունակությունը։ Չորային պայմաններում աճող անապատային բույսերի բնորոշ հատկանիշներից մեկն է։

**19. ԱՂԱԿԱԼԱԾ ՀՈՂԵՐ — ЗАСОЛЕННЫЕ ПОЧВЫ** *Հողեր, որոնք պարունակում են 0,1% թունավոր, հեշտ լուծվող (քլորական, նատրիումական, սուլֆատային) աղեր կամ դրանց 0.25%-անոց թանձր նստվածք (ոչ գիպսային հողերում)։ Դրանք դուրս են կորզվում ջրային արտածծմամբ։*

**20. ԱՂՏՈՏՈՒՄ — ЗАГРЯЗНЕНИЕ** *Որևէ միջավայրի համար նոր, ոչ բնորոշ ֆիզիկական, քիմիական և կենսաբանական ազդակների ներմուծում կամ միջավայրում այդ ազդակների բնական երկարամյա մակարդակի գերազանցում։*

**21. ԱՃ — ПРИРОСТ** *Տարվա ընթացքում շիվերի երկարությամբ աճելու ցուցանիշ։ Յուրաքանչյուր տեսակի համար բնորոշվում է որոշակի տևողությամբ՝ մի քանի օրից մինչև մի քանի ամիս։ Լինում է ընդհատումներով կամ անընդհատ։*

**22. ԱՃՄԱՆ ԽԹԱՆԻՉ — СТИМУЛЯТОР РОСТА** *Հատուկ նյութ, որը նպաստում է բույսերի արագ աճին, արմատակալմանը (աուքսին, գիբերելին, ցիտոկինին, վիտամիններ և այլն)։ Օգտագործվում է հատկապես այն դեպքերում, երբ անհրաժեշտ է արագացնել բույսերի կտրոնների արմատակալումը կամ նպաստել դանդաղած բույսերի արագ աճին։*

**23. ԱՄԱՌՆԱՏՆԱԿ — ЛЕТНИЙ ДОМИК** *Փայտից, ստվարաթղթից և այլ նյութերից պատրաստված թեթև, բաց կառուցվածքի պարտեզապուրակային շինություն։*

**24. ԱՄՊԵԼԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐ — АМПЕЛЬНЫЕ РАСТЕНИЯ** *Փաթաթվող կամ ցած թափվող ցողուններով բույսեր։ Օգտագործվում են շենքերի ներքին և արտաքին ձևավորման համար։ Աճեցվում են կախովի ծաղկամաններում, հատուկ զամբյուղներում և այլն։ Կիրառվում են նաև հանդիպակաց կանաչապատման համար (երբ ներքևից բարձրանում են լիաններ, իսկ տանիքից ցած են իջնում ամպելային բույսեր)։*

**25. ԱՄՖԻԹԱՏՐՈՆ — АМФИТЕАТР** *Հելլենիստական ոճի հանդիսադիր կառույց։ Ունի ձվածիր տեսք, աստիճանաձև տեղադրված նստարանների շարքեր։ XVII—XVIII դդ. վերջում երևան է եկել զբոսայգիներում, որպես գեղազարդային կառույց՝ հանդիսավոր միջոցառումների համար։*

**26. ԱՅԳԻ — САД** *Տե՛ս* **ՊԱՐՏԵԶ**։

**27. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳԻ — АНГЛИЙСКИЙ ПАРК** *Տե՛ս ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳԻ։*

**28. ԱՆԴԱԼԻՍ — ОТВОДОК** *Ընձյուղի բողբոջակիր հատված, որը մայրական բույսից առանց անջատելու մի կողմ է տարված և միջին մասով թաղված է հողում։ Բույսերի վեգետատիվ բազմացման եղանակներից մեկն է (հոնենի, վարդենի, եղրևանի և այլն)։*

**29. ԱՆԹԱՌԱՄՆԵՐ — СУХОЦВЕТЫ, ИММОРТЕЛИ** *Աստղածաղկազգիների ընտանիքի բույսեր։ Ունեն չոր, կաշվեկերպ, կարծր ծաղիկներ, որոնք չեն թառամում և երկար են պահպանվում։ Օգտագործվում են ծաղկա-*

մարգերում, ծաղկաթմբերում, ինչպես նաև՝ ձմեռային ծաղկեփնջերում (անթառամ, հազարատերևուկ, ակրոկլինիում, ամոքիում և այլն)։

**30. ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ**— АСИММЕТРИЯ *Համաչափության առանցքի բացակայության պայմաններում ծավալատարածական տարրերի զուգակցում և բաշխում։ Զբոսայգու կոմպոզիցիայի լայնորեն օգտագործվող ձևանակ։*

**31. ԱՆՀԱՐՄԱՐ ՀՈՂԵՐ**— НЕУДОБНЫЕ ЗЕМЛИ *Անպետք, անօգտագործելի, դուրս գրված հողեր։ Տե՛ս* ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ՀՈՂԵՐ։

**32. ԱՆՁՐԵՎԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ** — СИСТЕМА ДОЖДЕВАНИЯ *Բույսերի ջրման նպատակով ջրի համաչափ փոշիացման և ցրման համակարգ։ Իրենից ներկայացնում է պտտվող անձրևացաններ և տրամաչափային անցքերով գլխադիրներ ունեցող խողովակաշար, ջրցան կաչիփող և այլն։*

**33. ԱՆՄՇԱԿ ՀՈՂԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ**— ПУСТОШЬ *Անտառազուրկ, նըվազ արտադրողական համակեցություն, երբեմն՝ բուսականությունից իսպառ զուրկ։ Մոտ է պարապուտ հասկացությանը։*

**34. ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ**— ДИССОНАНС *Ներդաշնակության բացակայություն։ Արտահայտվում է ձևի և բովանդակության, առարկաների ու երևույթների արտաքին տեսքի ու դրանց էության և այլնի անհամապատասխանության մեջ։ Կանաչ շինարարությունում ներկայացնում է ըստ չափերի, ճարտարակերտության և գույների, անհաջող ընտրված բույսերի խմբեր։*

**35. ԱՆՋՐԴԻ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ** — БОГАРНОЕ ЗЕМЛЕДЕЛИЕ *Միայն մթնոլորտային տեղումների հաշվին, ակտիվ հողամշակման (հողի փխրեցում, ցանքածածկում և այլն) պայմաններում իրագործվող հողագործություն։ Կիրառվում է հիմնականում ոչ չորային պայմաններում (300 մմ-ից ոչ պակաս տեղումների դեպքում)։*

**36. ԱՆՋՐԴԻ ԾԱՌԱԲՈՒԾՈՒՄ**— БОГАРНОЕ ДРЕВОВОДСТВО *Ոռոգման բացակայության պայմաններում բույսերի աճեցումը տարեկան 300 մմ-ից ոչ պակաս տեղումների, դրանց բարենպաստ բաշխվածության և մշակման լավ պայմանների (պարարտացում, փխրեցում, ցանքածածկ) առկայության դեպքում։*

**37. ԱՆՍԱՄԲԼ**— АНСАМБЛЬ *Պարտեզապուրակային արվեստում բուսականության և լանդշաֆտի մյուս տարրերի գործառական կապվածության ամբողջությունը, որը բերված է միասնական տեսքի և ձեռք է բերել որոշակի գեղարվեստական բնույթ։*

**38. ԱՆՏԱՌԱԿ** — РОЩА *Տնկարկների զանգված, զբոսայգու բնապատկերի տարր 1—1,5 հա տարածությամբ։ Կազմված է նույն ծառատեսակներից (սոճի, հաճարենի, կաղնի, կեչի)։ Հաշվի է առնվում ծառերի բների արանքով տարածության պարտադիր դիտելիությունը։*

**39. ԱՆՏԱՌԱՀՈՂ**— ЛЕСНАЯ ЗЕМЛЯ *Անտառածածկ հողի վերնաշերտ։ Պարունակում է անտառային փռվածքի մասնակիորեն հանքայնացված մնացորդներ։ Օգտագործվում է պարտիզահող ստանալու համար։*

**40. ԱՆՏԱՌԱՅԳԻ** — ЛЕСОСАД *Բնական կամ արհեստական անտառի հիման վրա ստեղծված հատուկ պարտեզ։ Ունի ինչպես դրոսայգու, այնպես էլ պտղատու այգու գործառական ու գործնական նշանակություն։ Ստեղծվում է վայրի պտղատուները (սզնի, արոսենի, զկեռենի, սալորենի, խնձորենի, տանձենի, հոնի, կեռասենի և այլն) պատվաստելով և ազնվացնելով։ Դրանով անտառի որոշ հատվածներ վերածվում են հատուկ տնկարկների, որտեղից ստացվում է պտղատու կուլտուրաների բերք։ Անտառայգիները միաժամանակ կուլտուրական ժամանցի վայր են աշխատավորության համար։ Այդ նպատակով ստեղծվում են ճանապարհներ, կածաններ, կառույցներ, ջրատար համակարգեր և այլն։*

**41. ԱՆՏԱՌԱՊՈՒՐԱԿ** — ЛЕСОПАРК *Բնական անտառազանգված (հնարավոր է՝ մասամբ արհեստական կամ բարեկարգված անտառ)։ Կազմակերպված է որոշակի լանդշաֆտածավալահատակագծային համակարգով՝ տնկարկների աստիճանական վերակառուցմամբ, ճանապարհների, ճեմածառուղիների, հետիոտն արահետների, բացատների, ջրամբարների և այլնի նպատակասլաց ստեղծմամբ։ Նախատեսված է բնական միջավայրում բնակչության կարճատև հանգստի համար։*

**42. ԱՆՏԱՌԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԳՈՏԻ** — ЛЕСОПАРКОВЫЙ ПОЯС *Քաղաքամերձ գոտու մի հատված։ Հարում է քաղաքի վարչական սահմաններին, ընդգրկում է քաղաքամերձ անտառները, անտառապուրակները, ամառանոցային ավանները, ինչպես նաև գյուղատնտեսական հողհանդակները և այլն։*

**43. ԱՆՏԱՌԵԶՐ** — ОПУШКА *Մարգագետինները և բացատները պարագծով եզերող տնկարկներ (խմբեր, ծառախմբեր, զանգվածներ)։*

**44. ԱՆՏԱՌՄԵԼԻՈՐԱՑԻԱ** — ЛЕСОМЕЛИОРАЦИЯ *Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու նպատակով շրջապատող միջավայրի բարելավում կամ բնական պայմանների ուղղորդված փոփոխում։ Ձեռք է բերվում անտառամշակման միջոցառումներով՝ անտառատնկմամբ, անտառների տեսակային կազմի կամ տեղադրության փոփոխմամբ։*

**45. ԱՆՏՈՑԻԱՆ** — АНТОЦИАН *Քրոմոպլաստների բաղադրության մասը կազմող բուսական պլաստիդ։ Դրանով է պայմանավորված ծաղիկների, պտուղների, տերևների կարմիր գույնը։*

**46. ԱՆՏՐՈՊՈԳԵՆ ԱՂՏՈՏՈՒՄ** — АНТРОПОГЕННОЕ ЗАГРЯЗНЕНИЕ *Աղտոտում, որն առաջացել է մարդու տնտեսական գործունեության, նաև բնական աղտոտման վրա նրա ուղղակի կամ անուղղակի ազդեցության հետևանքով։*

**47. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ** — РАБОЧИЙ ПРОЕКТ *Կանաչապատման օբյեկտի նախագծման փուլ։ Ընդգրկում է գլխավոր հատակագծի մանրամասն մշակումը, տարածքի հատակագծման ու կանաչապատման բաժանիչ գծագրի ու տնկագծագրերի պատրաստումը, ուղղաձիգ հատակագծման, ինժեներական սարքավորումների, ճարտարապետական փոքր ձևերի ու կառուցվածքների, նախագծերի աշխատանքային գծագրերի*

պատրաստումը։ Կազմվում է նախագծային առաջադրանքի հաստատումից հետո և պարունակում է մանրամասն մշակված գծագրեր՝ համապատասխան չափերով, թվական ցուցանիշներով, անվանակարգային մանրամասնությամբ, տեսակաշարի առանձնահատկությունով և տնկարկների քանակով։ Այդ գծագրերը փոխադարձաբար համաձայնեցվում են մեկը մյուսի հետ և ճշտորեն համապատասխանում են տեղանքի մանրամասներին։ Դրանք ապահովում են բոլոր տիպի աշխատանքների կատարումը ըստ օրացուցային պլանի։

48. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԶՈՆԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ — ГЕОГРАФИЧЕСКАЯ ЗОНАЛЬНОСТЬ Երկրագնդի աշխարհագրական թաղանթի տարբերակման օրինաչափություն։ Արտահայտվում է արևակի ճառագայթային էներգիայի (հասարակածից դեպի բևեռները այն փոքրանում է) և խոնավության անհավասարաչափ տեղաբաշխմամբ պայմանավորված աշխարհագրական գոտիների ու զոնաների հաջորդական ու որոշակի փոփոխմամբ։

49. ԱՉՔԱՊԱՏՎԱՍՏ — ОКУЛИРОВКА Պատվաստի շատ տարածված ձև։ Պատվաստացուի միայն մեկ բողբոջը, որի ներքին մակերեսին պահպանված է կամբիումը, տեղափոխում են կեղևի վրա նախօրոք T-աձև ճեղք բացված պատվաստակալի վրա և ներկալում այդ ճեղքում։ Առանձնապես հարմար է ծառաթփային բույսերի պարտիզային ձևերը և վարդերի սորտերը բազմացնելու համար։ Լավագույն ժամկետներն են գարունը և ամառը (օգոստոս)։ Գարնանային պատվաստը կատարում են ուռած, ամառայինը՝ քնած բողբոջներով։

50. ԱՌԱԳԱՍՏ — ПОЛОГ Բույսերի միամյա մորֆոլոգիական առաջացումների շերտ՝ բուսականության տարբեր շարահարկերում (ծառերի սաղարթների առագաստ, տափաստանային հացազգիների տերևների առագաստ, ստերից զուրկ ծառաբների առագաստ և այլն)։

51. ԱՌԱՓՆՅԱ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ — ПРИБРЕЖНАЯ РАСТИТЕЛЬНОСТЬ Ջրամբարների, արհեստական լճակների, լճերի, գետերի ափերին աճող խոնավասեր բուսականություն։ Սովորաբար ուռեններ (լացող ձևեր), բարդիներ, կարմրաններ, սոսիներ և ուրիշ տեսակներ։ Առափնյա բույսերը աչքի են ընկնում բարձր աղադիմացկունությամբ (մանգրային անտառներ)։

52. ԱՌՈՂՋԱՎԱՅՐԱՅԻՆ ՇՐՋԱՆ — КУРОРТНЫЙ РАЙОН Առողջարաններում, հանգստի տներում, հանգրվաններում, ստացիոնարներում բնակչության հանգստի և բուժվելու համար օգտագործվող բարենպաստ բնական պայմաններ ու բուժական գործոններ ունեցող տարածք։ Ընդգրկում է կանաչապատման օբյեկտներ՝ առողջարաններին ու առողջավայրային ավաններին կից պարտեզներ ու զբոսայգիներ, հասարակական շենքերին կից պուրակներ, ճանապարհներին ու ավտոմայրուղիներին կից ծառուղիներ ու տնկարկներ։

53. ԱՍԵՂՆԱԹԱՆԹ — НАКОЛКА Դուրս ցցված ասեղներով մետաղյա ծանր թանթ, որը տեղավորվում է ջրով լցված սկահակի հատակին և ծառա-

ցում է վրան ծաղկացողուններ ամրացնելու համար։ Ծաղկահարդարման հարմարանք։

54. ԱՍԻՄԻԼՅԱՑԻԱ — АССИМИЛЯЦИЯ Արևի լույսի ազդեցության տակ բույսի տերևներում օրգանական նյութ սինթեզելու պրոցեսը։

55. ԱՍՊԵԿՏՆԵՐԻ ՍԵԶՈՆԱՅԻՆ ՀԵՐԹԱՓՈԽՈՒՄ — СЕЗОННАЯ СМЕНА АСПЕКТОВ Տնկարկների արտաքին տեսքի փոփոխումը սեզոնի ընթացքում (օրինակ, տերևների գունափոխումը՝ առաջանալուց մինչև աշնանային տերևաթափը)։

56. ԱՎԱԶ — ПЕСОК Տարբեր լեռնային ապարների հողմահարման արգասիք, սովորաբար սիլիկահողի մեծ պարունակությամբ (մասնիկների տրամագիծը 0,1-ից մինչև 1 մմ), պարտիզահողային խառնուրդի անհրաժեշտ բաղադրամաս։

57. ԱՎԱԶԱԿԱՎ — СУПЕСЬ Փուխր գրունտ, կազմված 70—90% ավազանյութից և 10—30% կավամասնիկներից։

58. ԱՎԱԶ ԱՄՐԱՑՆՈՂ ԲՈՒՅՍԵՐ — ПЕСКОУКРЕПЛЯЮЩИЕ РАСТЕНИЯ Բույսեր, որոնք իրենց ճյուղավորված արմատային համակարգով կամ ամբողջ մակերեսով ամրացնում են շարժվող ավազները (սաքսաուլ, գեզածնկիկ, դաշտավլուկ մարգագետնային)։

59. ԱՎԱԶԵՑՈՒՄ — ПЕСКОВАНИЕ Հողը ավազով հարստացնելու միջոցով նրա ջրաֆիզիկական հատկությունները լավացնելու և մեխանիկական կազմը թեթևացնելու եղանակ։

60. ԱՎԵՐԱԿՆԵՐ — РУИНЫ XVIII դարի ռոմանտիկ զբոսայգիների բնապատկերի ձևավորման տարր։ Դրանք հնագույն տաճարների, դամբարանների և այլ շինությունների արհեստական կամ բնական փլատակներ են։

61. ԱՐԱԲԵՍԿԱ — АРАБЕСКА Զարդային ձևավորումների առանձին մանրամասեր, որոնք մի ամբողջություն են կազմում և ռիթմիկ կերպով կրկնվում են ծաղկաթմբերի կամ ծաղկամարգերի համաչափ հատվածներում։

62. ԱՐԱԳԱՃ ԾԱՌԱԹՓԵՐ — БЫСТРОРАСТУЩИЕ ДЕРЕВЬЯ И КУСТАРНИКИ Գեղազարդային ներգործություն ունեցող և կարճ ժամանակամիջոցում տնկարկներ ստեղծող ծառաթփեր զբոսայգիներում, պարտեզներում։ Սովորաբար լինում են անտառազանգվածների եզրերի պահեստային շերտերում։ Զբոսայգի հիմնելիս արագաճ ծառաթփերից ստեղծում են «մուշտակ», որը ծառայում է հիմնական տեսակների հարմարեցման համար։ Ծառերից են՝ բարդիները, ուռիները, կաղնիները, ունենիները, լորենիները, ռոբինիաները, թեղիները, թխկիները, թփերից՝ կոտկենին, ֆորզիցիան (ոսկեզանգ), սրնգենին, ճապկին, բոլոր լիանները։

63. ԱՐԱՀԵՏԱՑԱՆՑ — ТРОПИНОЧНАЯ СЕТЬ 1,5—2 մ լայնություն ունեցող արահետների և կածանների ցանց անտառապուրակներում և զբոսայգիներում։ Ստեղծվում է, հաշվի առնելով ռելիեֆի պայմանները (երկայնակի թեքությունները կարող են լինել 8°-ից բարձր)։

64. **ԱՐԲՈՐԵՏՈՒՄ — АРБОРЕТУМ** *Ծառաբանական պարտեզ, որտեղ ներկայացված է երկրագնդի տարբեր գոտիների ծառաբույսերի տվյալ վայրի բնահողում ազատորեն աճող և ձմեռող հավաքածու։ Բազա է բույսերի կլիմայավարժեցման աշխատանքների համար։*

65. **ԱՐԳԵԼԱՎԱՅՐ — ЗАКАЗНИК** *Բնական տարածքի հատված, որը որոշակի ժամանակով կամ մասնակիորեն հանված է ժողովրդատնտեսական օգտագործումից։ Սովորաբար ծառայում է բնության առանձին բաղադրամասերի (որսորդական, բուսաբանական, երկրաբանական արգելավայրեր) կամ դրանց համակցության (լանդշաֆտային արգելավայր) պահպանմանը։ Արգելավայրում իրագործվում է անձեռնմխելի ռեժիմ կամ բնական ռեսուրսների մասնակի օգտագործում։*

66. **ԱՐԳԵԼՈՑ — ЗАПОВЕДНИК** *Տարածք, որի բնական պայմանները՝ կենդանական ու բուսական աշխարհը, արժեքավոր լանդշաֆտները, բույսերի առանձին տեսակները, պատմական հուշարձանները գիտական և ուսումնալուսավորական նպատակներով հավերժ հանված են ժողովրդատնտեսական օգտագործումից և պահպանվում են պետության կողմից։*

67. **ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԾԱՂԿԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ — ПРОМЫШЛЕННОЕ ЦВЕТОВОДСТВО** *Ժողովրդական տնտեսության ճյուղ։ Նպատակ ունի աճեցնել ծաղիկներ, ծաղկամանային կուլտուրաներ և սածիլներ՝ շենքերի ներսի ձևավորման ու վաճառքի համար։*

68. **ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ — ПРОМЫШЛЕННЫЙ РАЙОН** *Քաղաքի հատված, որտեղ հիմնականում արդյունաբերական ձեռնարկություններ են և սպասարկող շենքեր, հիմնարկներ, ճանապարհներ և այլն։ Ընդգրկում է նաև կանաչապատված տարածություններ՝ գրոսայգիներ, պուրակներ, ծառուղիներ, փողոցներ։ Այլ շրջաններից բաժանվում է կանաչապատված սանիտարապաշտպանական գոտիով։ Ըստ քաղաքաշինական նորմաների, արդյունաբերական շրջանի տարածքի 20% պետք է կանաչապատված լինի։*

69. **ԱՐԵԱԼ — АРЕАЛ** *Գեղազարդային բույսերի տարածման մարզ։ Քարտեզի վրա սովորաբար նշանակվում է փակ շրջագծով կամ կետերով։ Ծառաբանական շրջանացման ժամանակ հաշվի առնվող կարևոր գործոն է։*

70. **ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄ — СОЛНЕЧНАЯ РАДИАЦИЯ** *Արեգակի էլեկտրամագնիսական և մանրամասնիկավոր ճառագայթումը։ Չափվում է միավոր տարածության վրա միավոր ժամանակահատվածում ստացված կալորիաներով (կալ/սմ2 րոպե)։ Երկրագնդի մակերևույթին ու մթնոլորտում կատարվող արտածին պրոցեսների էներգիայի միակ աղբյուրն է։ Տարբերում են ուղիղ, անդրադարձված, թափանցող (օրինակ, ծառերի սաղարթի միջով) ճառագայթումներ։*

71. **ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԼՃԱԿ — ПРУД** *Բնական փոսորակներում ստեղծվող արհեստական ջրամբար, ջրի, հիմնականում՝ մակերեսային հոսքի կուտակման և պահպանման համար։ Ջրոսայգիների, անտառապուրակների, պար-*

տեղերի գեղազարդային գլխավոր տարրերից մեկն է։ Նախատեսվում է նաև տնտեսական նպատակների, ջրային մարզաձևերի մրցումների համար։

72 ԱՐՄԱՏ — КОРЕНЬ *Բույսի առանցքային, սովորաբար հողի մեջ խորացող օրգան։ Բույսը ամրացնում է հողին, նրան մատակարարում ջրով՝ վերջինիս մեջ լուծված հանքային աղերով։ Տնկարաններում բույսերի աճեցման ընթացքում պահանջում է պարբերաբար ձևավորում՝ համարություն տալու նպատակով։*

73 ԱՐՄԱՏԱԸՆՁՅՈՒՂԱՅԻՆ ԳԵՂԱԶԱՐԴԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐ — КОРНЕОТПРЫСКОВЫЕ ДЕКОРАТИВНЫЕ РАСТЕНИЯ *Արմատային ընձյուղներ առաջացնելու միջոցով վեգետատիվ բազմացման ունակ բույսեր (տանձենի, սզնի, մասրենի, ազնվամորի)։*

74. ԱՐՄԱՏԱԿԱԼՈՒՄ — УКОРЕНЕНИЕ *1. Նոր բույսերի ստացման եղանակ՝ տերևների, տերևակոթունների, կանաչ ընձյուղների, ձմեռային տնկաշիվերի, անդալիսների արմատառաջացումը խթանելու միջոցով։*

*2. Փոխանկումից հետո բույսի արմատակալումը։*

75. ԱՐՄԱՏԱՅԻՆ ԸՆՁՅՈՒՂ — КОРНЕВОЙ ОТПРЫСК *Բույսերի բնական վեգետատիվ բազմացման օրգաններից մեկը (սզնի, տանձենի, կաղամախի և այլն)։*

76. ԱՐՎԵՍՏԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ — ИСКУССТВОМЕТРИЯ *Գեղարվեստական արժեքի անաչառ չափանիշների մշակման քանակական մեթոդ։*

77 ԱՐՏԱՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ՆՇԱՆ — ВНЕМАСШТАБНЫЙ ЗНАК *Նախագծվող օբյեկտում հիմնական բաղադրամասի առկայությունը մատնանշող պայմանական նշան, որը մասշտաբի պայմաններով հատակագծի վրա առանձին ուրվագծով պատկերվել չի կարող։*

78. ԱՐԵՎԱԼՈԳԱՐԱՆ — СОЛЯРИЙ *Արևալոգանքներ ընդունելու ոչ մեծ հրապարակ։ Հաճախ ստեղծվում է զբոսայգիներում, անտառապուրակներում, բաց, լավ արևահարվող վայրերում։*

79. ԱՐԵՎՆԱԿ — БЕЛЬВЕДЕР *Շենքի աշտարակ, վերնաշենք կամ հրապարակ, առանձին կառույց բարձրադիր վայրում, որտեղից դիտվում է գեղատեսիլ շրջակայքը (բառացիորեն՝ գեղեցիկ տեսարան)։ Պարտեզապուրակային կոմպոզիցիայում արևնակի տեղի ճիշտ ընտրությունից է կախված բնապատկերի լավ ընկալումը։*

80 ԱՓԱԳԻԾ — ПРИБРЕЖНАЯ ЛИНИЯ *Լճափի, գետափի կամ ծովափի արտաքին ուրվագիծը։*

## Բ

81. ԲԱԶՄԱԱՄԻԴԱՅԻՆ ԹԱՂԱՆԹ — ПОЛИАМИДНАЯ ПЛЕНКА *Բազմակապրոլակտամից պատրաստված անգույն, դիմացկուն թաղանթ՝ կապված բարձր գոլորշաթափանցելիության և ընդարձակման հետ՝ +50° ջերմաստիճանից հետո դառնում է պակաս դիմացկուն։ Հանձնարարվում է միայն ջերմոցներ ծածկելու համար։*

82. ԲԱԶՄԱԷԹԻԼԵՆԱՅԻՆ ԹԱՂԱՆԹ — ПОЛИЭТИЛЕНОВАЯ ПЛЕНКА *Էթիլենի պոլիմերացման արդյունք։ Տարբերում են բարձր ճնշման (100-ից մինչև 1500 մթնոլորտ) բազմաէթիլենային թաղանթ, որը փոքր խտություն ունի, առաձգական է, ցրտադիմացկուն (մինչև—60°) և քիչ ջերմադիմացկուն, բնորոշվում է լավ թափանցիկությամբ և պղտոր կաթնագույնով. ցածր ճնշման (4-ից 6 մթնոլորտ) բազմաէթիլենային թաղանթ, որը մեծ խտություն ունի, բնորոշվում է բարձր դիմացկունությամբ, պնդությամբ և ջերմադիմացկունությամբ։*

83. ԲԱԶՄԱԿՈՄՊԱԿՏ ԽՈՒՄԲ — ПОЛИКОМПАКТНАЯ ГРУППА *Ծառաթփերի կամ ծաղիկների խումբ, որը կազմված է երկուսից ավելի տեսակներից։ Պահանջում է տեսակային կազմի ճիշտ ընտրություն, ելնելով դրանց գեղազարդային և կենսաբանական առանձնահատկություններից։*

84. ԲԱԶՄԱԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍ — ПОЛИКУЛЬТУРНЫЙ УЧАСТОК *Գեղազարդային հատուկ ցուցադրանք, որում օգտագործվում են տարբեր ընտանիքների և ցեղերի ներկայացուցիչներ։ Ունի ինչպես գիտական (կոլեկցիոն), այնպես էլ գեղարվեստագեղազարդիչ նշանակություն։ Գեղազարդային պարտիզագործությունում առավելապես ընդունված են հետևյալ ձևավորումները. կոնիֆերետում (փշատերև բույսերի հողամաս), արբորետում (ծառաթփային բույսերի հողամաս), ալպինարիում, քարապարտեզ, երկարածաղկուն և մշտածաղկուն պարտեզներ, բուրաստան և այլն։*

85. ԲԱԶՄԱՄՅԱՆԵՐ — МНОГОЛЕТНИКИ *Կյանքի երկու տարուց ավելի տևողությամբ խոտաբույսեր։ Բաժանվում են խմբերի՝ կոճղարմատավորներ, պալարակոճղարմատավորներ, սոխուկավորներ և հաստացած արմատներ ունեցողներ։*

86. ԲԱԶՄԱՊԼԱՆՈՒԹՅՈՒՆ — МНОГОПЛАНОВОСТЬ *Զբոսայգիներում, անտառապուրակներում իրար հաջորդող պլաններ, որոնք բաժանված են կուլիսներով և ընկալվում են զգալի հեռավորությունից։*

87. ԲԱԶՄԱՊՏՂԱԲԵՐ ԲՈՒՅՍ — ПОЛИКАРПИК *Բազմամյա խոտաբույս, ծառ, թուփ, որը պտղաբերում է բազմաթիվ տարիների ընթացքում։*

88. ԲԱԶՄԱՑՈՒՄ — РАЗМНОЖЕНИЕ *Կանաչ շինարարության բնագավառում բույսերի վերահսկվող վերարտադրում։ Տարբերում են բազմացման երկու եղանակ՝ սեռական և վեգետատիվ։*

89. ԲԱԶՄԱՔԼՈՐՎԻՆԻԼԱՅԻՆ ԹԱՂԱՆԹ — ПЛЕНКА ПОЛИХЛОРВИНИЛОВАЯ *Բազմաքլորվինիլային ձյութից ստացվող ջրաթափանց թաղանթ։ Ցրտադիմացկուն չէ՝ ցածր ջերմաստիճանների ազդեցության տակ դառնում է դյուրաբեկ։*

90. ԲԱԺԱՆԻՉ ՇԵՐՏ — РАЗДЕЛИТЕЛЬНАЯ ПОЛОСА *Կանաչ տարածություն՝ երթևեկելի մասի և մայթի, հակառակ ուղղություններով երթևեկելի մասերի միջև։ Փողոցի կամ մայրուղու կանաչապատման կարևոր տարրերից է։*

**91. ԲԱԽԱՐԳԵԼՄԱՆ ԶՈՆԱ — БУФЕРНАЯ ЗОНА** *Պատմական զբոսայգուն, հուշահամալիրին, արգելոցին հարող հատուկ տարածք։ Նախատեսված է այցելուների ակտիվ, ազատ հանգստի և զբոսնության պահպանության ներքո գտնվող օբյեկտները վնասվելուց (տրորել, ծառերը ջարդել և այլն) պաշտպանելու նպատակով, նրանց ուշադրությունը մասնակիորեն շեղելու համար։*

**92. ԲԱՂԵՂ — ПЛЮЩ** *Բաղեղ ցեղի բույսերի անվանումը։ Միաժամանակ հայերենում նույնացվում է լիան (փաթաթվող, կառչող բույսեր) անվան հետ։*

**93. ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ — БЛАГОУСТРОЙСТВО** *Բնակչության բարենպաստ կենսապայմաններ ստեղծելու նպատակով քաղաքում կամ գյուղում իրագործվող միջոցառումներ (տարածքի ինժեներական նախապատրաստում, պարտեզապուրակային շինարարություն, հաղորդակցման ուղիների սարքավորում ու ձևավորում և այլն)։*

**94. ԲԱՐՁԱՆՄԱՆ ԲՈՒՅՍԵՐ — РАСТЕНИЯ ПОДУШКИ** *Կենսաձև, որը բնորոշվում է գետնահար գաճաճ հասակով, բարձ-կիսագունդ հիշեցնող հավաք՝ խիտ սաղարթով։ Օգտագործվում է ցայտերանգ խմբեր, քարքարուտներ և այլն ստեղծելիս (ցմախ սովորական, կորնգան եղջերավոր)։*

**95. ԲԱՐՁՐԱԴԻՐ ԶԲՈՍԱՅԳԻ — НАГОРНЫЙ ПАРК** *Զբոսայգի լեռան կամ բլրի լանջերին։ Աչքի է ընկնում ծավալատարածական լուծման բարդությամբ, տարբեր մակարդակների վրա սանդղափուլերի առկայությամբ։ Զբոսայգու միավորող և բարձրության նիշերի տարբերությունը հաղթահարող տարրերն են՝ աստիճաններն ու թեքամուտքերը (օրինակ, Կիրովի անվան զբոսայգին Բաքվում)։*

**96. ԲԱՐՁՈՒՆՔԱՅԻՆ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԱՓՈԽՈՒՄ — ВЫСОТНЫЙ ГРАДИЕНТ (ТЕМПЕРАТУРНЫЙ)** *Լեռնալանջով յուրաքանչյուր 100 մ բարձրանալիս ջերմաստիճանի իջեցման քանակական բնութագիրը (սովորաբար 0,5°-ով)։*

**97. ԲԱՐՈԿԿՈ — БАРОККО** *XVI դարի վերջից մինչև XVIII դարի կեսը Արևմտյան Եվրոպայի արվեստում իշխող գեղարվեստական ոճ։ Այդ արվեստին բնորոշ են վիթխարիությունը, ճոխությունն ու դինամիկան, պաթետիկ ազդեցությունը, զգացմունքի լարվածությունը, մասշտաբների ու ռիթմերի, նյութի ու ֆակտուրաների, լույսի և ստվերի ուժեղ հակադրությունների հակումը։ Իր արտահայտությունն է գտել Ֆրանսիայի, Իտալիայի պարտեզներում և զբոսայգիներում։*

**98. ԲԱՑԱՏ — ПОЛЯНА** *Անտառի, անտառապուրակի, զբոսայգու, պարտեզի հատակագծային կարևոր տարր։ Ազատ է ծառերից ու խոշոր թփերից, ծածկված է սիզամարգով։ Խոշոր զբոսայգում գրավում է 1,0—2,5 հա և ավելի տարածություն։*

**99. ԲԱՑԱՏԻԿ — ЛУЖАЙКА** *Խոտաբույսերով ծածկված ոչ մեծ, 0,5—1,0 հա մակերեսով տարածություն անտառում, անտառապուրակում, զբոսայգում։*

100. ԲԵԼՎԵԴԵՐ — БЕЛЬВЕДЕР *Տե՛ս ԱՐԵՎՆԱԿ։*

101. ԲԵՐՍՈ — БЕРСО *Կամարաձև արահ, ծառուղի կամ թարմա կեչու, լորենու, բոխու ծառերից։ Որպես նեցուկ օգտագործվում է կիսակլոր, գործված հիմնակմախքը։*

102. ԲԻՆԴԱԺ — БИНДАЖ *Տե՛ս ԲԵՐՍՈ։*

103. ԲՆԱԿԱՆ ԱՂՏՈՏՈՒՄ — ЕСТЕСТВЕННОЕ ЗАГРЯЗНЕНИЕ *Բնական, հիմնականում տարերային երևույթների (հրաբխի ժայթքում և այլն) հետևանքով առաջացած աղտոտում։ Բնական պրոցեսների վրա մարդու ազդեցության հետևանք չէ։*

104. ԲՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ — ЕСТЕСТВЕННОЕ ВОЗОБНОВЛЕНИЕ *Բուսականության վերականգնում սերմերով, արմատային ընձյուղներով, շիվերով՝ մայրական կամ այլ առագաստի տակ։ Նոր պայմաններում բույսերի կլիմայավարժեցման ցուցանիշներից է։ Զբոսայգիներում առաջացնում է սիզամարգի աղտոտում։*

105. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԼԱՆ — ПЕРСПЕКТИВНЫЙ ПЛАН ОЗЕЛЕНЕНИЯ НАСЕЛЕННЫХ МЕСТ *Բնակավայրում տնկարկներ ստեղծելու պլան։ Նախատեսված է 20—25 տարվա համար։ Ընդգրկում է քաղաքի, ավանի և քաղաքամերձ գոտու կոմպլեքսային կանաչապատումը։*

106. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ — ГРАДОСТРОИТЕЛЬНЫЕ ТРЕБОВАНИЯ К ОЗЕЛЕНЕНИЮ НАСЕЛЕННЫХ МЕСТ *Հիմնական հրահանգներ, նորմաներ, կանաչապատման օբյեկտների նախագծման և շինարարության կանոններ, որոնք անհրաժեշտ կապ ունեն ընդհանուր ճարտարապետանախագծային խնդիրների լուծման հետ։*

107. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ — ОЗЕЛЕНЕНИЕ НАСЕЛЕННЫХ МЕСТ *Բնակչության աշխատանքի, կենցաղի և հանգստի բարենպաստ միջավայր ստեղծելու, բնակելի թաղամասերի միկրոկլիման, սանիտարահիգիենիկ պայմանները և ճարտարապետանախագծային ձևավորումը բարելավելու նպատակով պարտեզներ, զբոսայգիներ և տարբեր նշանակության տնկարկներ ստեղծելու միջոցառումներ քաղաքներում ու բնակավայրերում։*

108. ԲՆԱԿԵԼԻ ՇՐՋԱՆ — ЖИЛОЙ РАЙОН *Քաղաքի բնակելի տարածքի մաս։ Բաղկացած է միկրոշրջաններից։ Սպասարկվում է կուլտուր-կենցաղային հիմնարկների համալիրով։ Ունի կանաչապատման զարգացած համակարգ՝ զբոսայգի, պուրակներ, ծառուղիներ, փողոցներ, հասարակական շենքերի մատույցներ։ Ժամանակակից նորմաներով, բնակելի շրջանի մինչև 60%-ը պետք է կանաչապատված լինի։*

109. ԲՆԱԿԵԼԻ ՇՐՋԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ — ВОЗРАСТНАЯ СТРУКТУРА НАСЕЛЕНИЯ ЖИЛОГО РАЙОНА *Բնակելի տարածքի բարեկարգումը և կանաչապատումը պլանավորելու, նախագծե-*

լու, բնակիչների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված տարբեր նպատակներով օգտագործվող հրապարակները տեղադրելու համար անհրաժեշտ ցուցանիշ։ Չափվում է բացարձակ (1000 մարդուն ընկնող) և հարաբերական (%) մեծություններով։

110. ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔ — ЖИЛАЯ ТЕРРИТОРИЯ Բնակելի շրջանի (միկրոշրջանի) հատված՝ բնակելի շենքերը, դրանց մատույցները, մայթերը, հետիոտն շարժման ուղիները։ Կանաչապատման կարևոր օբյեկտ է։ Բնակչության հանգստի համար ունի տարբեր հրապարակներ՝ մանկական, մարզական, տնտեսական, տնկարկների հատվածներ, բացատներ, որոնք տեղաբաշխված են շենքերի և կառույցների միջև։

111. ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ — СЕЛИТЕБНАЯ ТЕРРИТОРИЯ Քաղաքի հատակագծային կառուցվածքի մաս։ Ընդգրկում է բնակելի շրջաններն ու միկրոշրջանները, հասարակական-առևտրական կենտրոնները, փողոցները, ուղանցումները, մայրուղիները, ինչպես նաև կանաչապատման օբյեկտները՝ պարտեզները, զբոսայգիները, պուրակները։

112. ԲՆԱՀՈՂ — ГРУНТ Երկրակեղևի հողմահարման գոտում, անմիջապես հողածածկի տակ գտնվող և մարդու ինժեներական գործունեության օբյեկտ հանդիսացող լեռնային ապարների ընդհանուր անվանումը։ Բնահողի և հողի միջև կատարվում է գազերի, լուծույթների և ջերմային էներգիայի մշտական փոխանակություն։

113. ԲՆԱՅԻՆ ՄԱՑԱՌ — ПНЕВАЯ ПОРОСЛЬ Ծառաթփային որոշ բույսերի (լորենի, սոսի, ուռենի) մահանալուց կամ վերերկրյա մասի հատումից հետո արմատավզիկից առաջացած վերականգնման շիվեր։

114. ԲՆԱՊԱՏԿԵՐ — ПЕЙЗАЖ Տեսողական ընկալման որոշակի սահմաններով ու պայմաններով սահմանափակված լանդշաֆտի մի հատված։ Մարդու մեջ առաջացնում է այնպիսի զգացումներ ու տրամադրություններ, ինչպես նկարչի կտավը դիտելիս։ Ըստ տարածական սկզբունքի լինում է բաց, կիսաբաց, կիսափակ։

115. ԲՆԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԱՐՎԵՍՏ — ПЕЙЗАЖНОЕ ИСКУССТВО Տե՛ս ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԱՐՎԵՍՏ։

116. ԲՆԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳԻ — ПЕЙЗАЖНЫЙ ПАРК Տե՛ս ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳԻ։

117. ԲՆԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ — ПЕЙЗАЖНАЯ ПЛАНИРОВКА Չինաստանի և Ճապոնիայի հնագույն այգիներին բնորոշ պարտեզապուրակային արվեստի ոճ։ Իր զարգացումն է ապրել Անգլիայում և Ֆրանսիայում XVIII—XIX դարերում։ Աչքի է ընկնում մարգագետիններում ու բաց տարածություններում ազատորեն տեղադրված ծառախմբերի գեղատեսիլությամբ, կածանների ուղեգալարներով, ժայռոտ հատվածների ընդգրկմամբ, սանդղաշրվեժներ ունեցող ջրհոսքերով, ինչպես նաև ճարտարապետական փոքր ձևերով, նստարաններով, տաղավարներով։

118. ԲՆԱՊԱՐՏԵԶ — ПРИРОДНЫЙ ПАРК *Տեղանքի որոշակի լանդշաֆտային յուրահատկություններով բնորոշվող տարածք (անտառ, տափաստան, լճեր, ժայռեր, գետ, ջրվեժներ, ինքնատիպ բուսական և կենդանական աշխարհ), որը ենթակա է հատուկ պահպանության և միաժամանակ մատչելի է գիտական հետազոտությունների և ուսուցման համար։ Ունի որոշակի արգելոցային ռեժիմ։*

119. ԲՆԱՏԵՍԱՐԱՆ — ВИД *Բնապատկերի մաս։ Լանդշաֆտային ճարտարապետության օբյեկտների նախագծման մեջ լայնորեն օգտագործվող տերմին։ Կանաչապատման օբյեկտների նախագծման ընթացքում բնապատկերի գեղարվեստորեն աչքի ընկնող առանձին մասերի հմուտ առանձնացման արվեստ։*

120. ԲՆԱՏԵՍԱՐԱՆԱՅԻՆ ԿԵՏ — ВИДОВАЯ ТОЧКА *Բնատեսարանը ավելի լավ ընկալելու տեղ անտառապուրակի, զբոսայգու, պարտեզի տարածքում։ Սովորաբար ընտրվում է կանաչապատման օբյեկտի հատակագծի գեղարվեստական վերլուծման և ուրվագծային մշակման ժամանակ։*

121. ԲՆԻ ՏՐԱՄԱԳԻԾ — ДИАМЕТР СТВОЛА *Տնկիների ստանդարտները բնութագրող ցուցանիշ։ Չափվում է հողի մակերևույթից 1,3 մ բարձրության վրա։*

122. ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ — ПАМЯТНИК ПРИРОДЫ *Բնության առանձին օբյեկտ, որը պահպանվում է կամ արժանի է պահպանման իր գիտական, ուսումնալուսավորական, պատմահուշային նշանակության շնորհիվ (երկրաբանական բացառիկ օբյեկտ, շատ հին ծառ, էկզոտ բույսերի խումբ, քարանձավ, ջրվեժ, աղբյուր և այլն)։ Հաճախ կապված է որոշակի պատմական իրադարձությունների և անձերի հետ։*

123. ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ — ОХРАНА ПРИРОДЫ *Միջազգային ու պետական միջոցառումների համակարգ, որը նպատակաուղղված է բնական հարստությունների՝ մթնոլորտի, բուսական և կենդանական աշխարհի, հողերի, ջրերի և այլնի պահպանմանը, ընդլայնմանը և ռացիոնալ օգտագործմանը։ Կանաչ շինարարության բնագավառում այն նպատակ ունի պահպանել և վերականգնել պատմական զբոսայգիները, լանդշաֆտը, ստեղծել կանաչապատման տարբեր օբյեկտներ՝ անտառապուրակներ, զբոսայգիներ, պարտեզներ, պաշտպանական տնկարկներ։*

124. ԲՈՆԶԱՅ — БОНЗАЙ *Տե՛ս ՍԵՂԱՆԱՅԳԻ։*

125. ԲՈՍԿԵՏ — БОСКЕТ *Խուզված ծառերով ու թփերով մեկուսացված ճիշտ երկրաչափական ձևի հողակտոր (բառացիորեն՝ զամբյուղ)։ Բոսկետի ներսում կարող է լինել նաև շատրվան, ծաղկանոց, կանաչ թատրոն։*

126. ԲՈՍԿԵՏԱՍԵՆՅԱԿ — КАБИНЕТ В БОСКЕТЕ *Խուզված լորենիներից կամ բոխիներից ստեղծված մեկուսացված կանաչ կառույց բոսկետի ներսում։ Բնորոշ է ֆրանսիական պարտեզներին ու զբոսայգիներին։ Եվրոպայում տարածված է եղել XVII—XVIII դարերում։*

127. **ԲՈՈՒԼԻՆԳՐԻՆ — БОУЛИНГРИН** *Տե՛ս ԿԵԳԼԱԴԱՇՏ։*

128. **ԲՈՒԼՎԱՐ — БУЛЬВАР** *Կանաչապատման օբյեկտ։ Ստեղծվում է մայրուղիների, առափնյա և բնակելի փողոցների երկարությամբ, լայն գոտու ձևով (16 մ-ից ոչ պակաս), ծառերի ու թփերի ծառուղու տեսքով։*

129. **ԲՈՒՅՍԵՐԻ ԱՐԱԳ ԱՃԵՑՈՒՄ — ВЫГОНКА РАСТЕНИЙ** *Ծածկած բնահողի պայմաններում բույսերի հանգստի շրջանի արհեստական փոփոխման պրոցես։ Նպատակ ունի արագ ծաղկող բույսեր ստանալ ձմռան ընթացքում (եղրևանիներ, փաղաշուշաններ, թրաշուշաններ, վարդկակաչներ և այլն)։*

130. **ԲՈՒՅՍԵՐԻ ԲՆԱՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ — НАТУРАЛИЗАЦИЯ РАСТЕНИЙ** *Բույսերի փոխադրումը և աճեցումը նոր՝ նախկինի նման պայմաններ ունեցող տարածքում, որում բույսերը նորմալ են զարգանում։*

131. **ԲՈՒՅՍԵՐԻ ԳՈՒՆԱՎՈՐՈՒՄ — ОКРАСКА РАСТЕНИЙ** *Տերևների գույնի փոփոխությունը՝ տերևաբացից մինչև աշնանային տերևաթափը, ինչպես նաև ծաղիկների, պտուղների, բնակեղևի գունավորումը։ Կապված է քրոմոպլաստների առկայության հետ։*

132. **ԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՂԱԶԱՐԴԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ — ДЕКОРАТИВНЫЕ КАЧЕСТВА РАСТЕНИЙ** *Բույսերի որակական և քանակական բնութագրությունները (չափսը, տեսքը, սաղարթի ճարտարապետությունը և այլն)։ Հաստատուն են տերևների, ծաղիկների, ծաղկաբույլերի ձևավորման ժամանակաշրջանում և փոփոխվող՝ տարեկան կյանքի ընթացքում։ Հաշվի է առնվում կանաչապատվող օբյեկտների նախագծման ժամանակ (տեսականու ընտրություն, բույսերի տեղաբաշխում, խմբերի, ծաղկաթմբերի, զանգվածների ձևավորում)։*

133. **ԲՈՒՅՍԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱ — ЭКОЛОГИЯ РАСТЕНИЙ** *Գիտություն բույսերի և շրջապատող միջավայրի փոխկապվածության և փոխազդեցության մասին։ Ուսումնասիրում է միջավայրի ազդեցությունը բույսերի կյանքի բոլոր դրսևորումների, ինչպես նաև դրանց տեղաբաշխման վրա։*

134. **ԲՈՒՅՍԵՐԻ ԷՏՈՒՄ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ — ОБРЕЗКА И ФОРМОВКА РАСТЕНИЙ** *Բույսի վրա ազդելու ֆիտոտեխնիկական միջոցառումների համակարգ։ Կիրառվում է սաղարթի ձևավորման և նրա խնամքի (կտրված, չոր և հիվանդ ճյուղերի հեռացում), խուզված գեղազարդային ձևեր ստանալու նպատակով։ Էտման հիմնական նպատակներից մեկն էլ արմատասաղարթային հավասարակշռության պահպանումն է։ Կախված տնկարկների բնույթից, տարիքից, տեսակից, սորտից, ոռոգումից և բույսի սնուցման բնույթից, էտումը կատարվում է տարբեր եղանակներով։ Տարբերում են էտման երկու հիմնական ձև՝ նոսրացում, երբ ճյուղերի մի մասը ամբողջությամբ հեռացվում է հիմքից և կարճացում (հեռացվում է ճյուղի որոշ մասը)։*

135. **ԲՈՒՅՍԵՐԻ ԻՆՏՐՈԴՈՒԿՑԻԱ — ИНТРОДУКЦИЯ РАСТЕНИЙ** *Տե՛ս ԲՈՒՅՍԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ։*

136. ԲՈՒՅՍԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ — ИНТРОДУКЦИЯ РАСТЕНИЙ Բնապատմական նման պայմաններ ունեցող երկրների բույսերի ներմուծում։ Պարտեզները և զբոսայգիները արժեքավոր բուսատեսակներով հարստացնելու աղբյուր է։

137. ԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ԲԱԶՄԱՑՈՒՄ — РАЗМНОЖЕНИЕ РАСТЕНИЙ ПОЛОВОЕ Տնկարաններում սերմերով գեղազարդային բույսերի աճեցման սովորական մեթոդ։

138. ԲՈՒՅՍԵՐԻ ՎԵԳԵՏԱՏԻՎ ԲԱԶՄԱՑՈՒՄ — РАЗМНОЖЕНИЕ РАСТЕНИЙ ВЕГЕТАТИВНОЕ Բույսերի բազմացման եղանակ։ Կիրառվում է այն բույսերի աճեցման համար, որոնք սերմերով դժվար են աճում, ինչպես նաև պարտեզային տաբբեր ձևերի (լացող, բրգաձև, գնդաձև, բազմեբանգատերև, հատվածքատերև և այլն) բազմացման համար։ Գեղազարդային ծառաբուծության բնագավառում բազմացման հիմնական եղանակներից մեկն է։

139. ԲՈՒՅՍԵՐԻ ՎՆԱՍԱՏՈՒ — ВРЕДИТЕЛЬ РАСТЕНИЙ Մարդու համար արժեքավոր համարվող բույսերը վնասող, տնտեսական տեսակետից անօգտակար կամ այնպիսի օրգանիզմ, որի արժեքը ավելի փոքր է, քան նրա օգտագործած կերի արժեքը։ Տերմինի պայմանականությունը ընդգծվում է նրանով, որ վնասատուներով բացարձակապես չվնասվող բույսերը ավելի քիչ օգտակար արտադրանք են տալիս։

140. ԲՈՒՅՍԻ ԾԱԳՄԱՆ ՎԱՅՐ — МЕСТОПРОИСХОЖДЕНИЕ РАСТЕНИЯ Բույսի սկզբնական օրինակի (սերմ, տնկաշիվ, տնկի) ծագման աշխարհագրական շրջան։

141. ԲՈՒՅՍԻ ՍԵԼԵԿՑԻՈՆ ՍՈՐՏ — СЕЛЕКЦИОННЫЙ СОРТ РАСТЕНИЯ Սելեկցիայի շնորհիվ բարելավված սորտ (տե՛ս նաև՝ ԿՈՒԼՏԻՎԱՐ)։

142. ԲՈՒՅՍԻ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՕՐԳԱՆՆԵՐ — ПОДЗЕМНЫЕ ОРГАНЫ РАСТЕНИЯ Բույսի արմատավզիկից ցածր գտնվող օրգաններ՝ արմատներ, կոճղարմատներ, պալարներ, կոճղեզներ։

143. Բուն — СТВОЛ Ծառի՝ ճյուղերը կրող կենտրոնական մասը, արմատավզիկից մինչև գագաթնարնձյուղը։

144. ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ — БОТАНИЧЕСКИЙ САД Գիտահետազոտական, ուսումնաօժանդակ և կուլտուր-լուսավորական հիմնարկ, որտեղ մշակվում, ուսումնասիրվում են բույսերը և պրոպագանդվում բուսաբանական գիտելիքներ։ Հիմքը կազմում են կենդանի բույսերի հավաքածուները, որոնք աճեցվում են բաց տարածություններում ու ջերմատներում։ Նախատեսված է բուսաբանության, կլիմայավարժեցման, գեղազարդային պարտիզագործության և բնակավայրերի կանաչապատման գծով գիտահետազոտական և կուլտուր-լուսավորական աշխատանքների համար։ Ձևավորվում է ինչպես կանոնավոր, այնպես էլ լանդշաֆտային ոճով։

**145. ԲՈՒՍԱԾԱԾԿԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ** — СОМКНУТОСТЬ РАСТИТЕЛЬНОГО ПОКРОВА *Միավոր տարածության վրա բույսերի սաղարթների կամ արմատային համակարգերի առկայության ցուցանիշ։ Տարբերում են ուղղաձիգ ու հորիզոնական խտություն։*

**146. ԲՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ** — РАСТИТЕЛЬНОЕ СООБЩЕСТВО *Երկրի մակերևույթի միատեսակ տեղամասեր զբաղեցնող, իրար ու շրջապատող միջավայրի հետ սերտ փոխներգործության մեջ գտնվող բույսերի ամբողջություն։ Տե՛ս նաև՝ ՖԻՏՈՑԵՆՈԶ։*

**147. ԲՈՒՍԱՀՈՂ** — ПЕРЕГНОЙ *Հողում գտնվող մուգ գույնի օրգանական նյութեր (բույսերի մնացորդներ), որոնք չեն հասցրել լրիվ քայքայվել (հանքայնացվել)։ Տե՛ս նաև՝ ՀՈՒՄՈՒՍ։*

**148. ԲՈՒՍԱՐԿՂ** — КОНТЕЙНЕР *1. Խոնավացման ինքնուրույն պայմաններ ունեցող ապակյա շարժական կառուցվածք։ Օգտագործվում է շենքերի ներսի ազատ տարածությունների, սրահների, սենյակների, լսարանների և դահլիճների կանաչապատման համար։ 2. Գեղազարդային ծառաբուծությունում ջերմաստիճանի և խոնավության ինքնուրույն կարգավորմամբ, փայտից ու մետաղից արկղ, որն օգտագործվում է բույսեր աճեցնելու կամ գրանք կանաչապատման օբյեկտ տեղափոխելու համար։*

**149. ԲՈՒՍՈԼԱՅԻՆ ՀԱՆՈՒՅԹ** — БУСОЛЬНАЯ СЪЕМКА *Տարածքի հորիզոնական հանույթի եղանակ։ Բուսոլով ազիմուտային հաշվարկ կատարելով, որոշում են հողամասի մշտակայուն առարկաների ձևերը, փոխդասավորությունը։ Նման եղանակով արված հատակագիծը պատկերացում է տալիս հողամասի սահմանների և ուրվագծի մասին։*

**150. ԲՈՒՐԱՍՏԱՆ** — ДУШИСТЫЙ САД *Պարտեզ, որտեղ գերակշռում են բուրումնավետ, հոտավետ, ախորժաբույր բույսերը։ Ամենայն հավանականությամբ հին Հայաստանում եղել են այդպիսի պարտեզներ, քանի որ պատմիչները (Մովսես Խորենացի, Եղիշե, Թովմա Արծրունի) հաճախ են գործածում այդ բառը։*

**151. ԲՈՒՐԱՎԵՏ ԲՈՒՅՍԵՐ** — ДУШИСТЫЕ РАСТЕНИЯ *Բույսեր, որոնք արտադրում են բուրավետ, ցնդող եթերային յուղեր (տերպեններ, կամարիններ)։ Օրինակ՝ եղրևանի, սրնգենի, լորենի, փշատենի, մագնոլիա։*

## Գ

**152. ԳԱԶԱԴԻՄԱՑԿՈՒՆ ԲՈՒՅՍԵՐ** — ГАЗОУСТОЙЧИВЫЕ РАСТЕНИЯ *Բույսեր, որոնք դիմանում են արդյունաբերական օբյեկտների և ավտոտրանսպորտի օդ արտանետած թունավոր գազերի մեծ քանակին։*

**153. ԳԱԶԱՆԱՆՈՑ** — ЗВЕРИНЕЦ *XVIII դարի զբոսայգիներում (Գատչինա, Կուզմինկի) որսորդության համար առանձնացված տարածք։*

**154. ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** — ЭСТЕТИКА *Գիտություն, որն ուսումնասիրում է գեղարվեստական ստեղծագործության ընդհանուր օրինաչափու-*

*թյուններն ու սկզբունքները, արվեստի (այդ թվում պարտեզապուրակային) էությունը, ծագումը և զարգացումը։ Բացահայտում է հասարակության կյանքում արվեստի դերը։*

155. **ԳԵՂԱԶԱՐԴԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐ — ДЕКОРАТИВНЫЕ РАСТЕНИЯ** *Հատուկ տնկարաններում, ջերմոցներում, ծաղկատնտեսություններում կանաչ շինարարության համար աճեցվող խոտեր, թփեր, ծառեր։ Աչքի են ընկնում ուրվագծի բարեկազմությամբ, սաղարթի գեղատեսիլությամբ, ծաղիկների առատությամբ և ծաղկման երկարատևությամբ, տարվա ընթացքում փոփոխվող գույնով և, վերջապես, կայունությամբ՝ անբարենպաստ պայմանների, հատկապես քաղաքային միջավայրի ազդեցության նկատմամբ։*

156. **ԳԵՂԱԶԱՐԴԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ — ЖИЗНЕСПОСОБНОСТЬ ДЕКОРАТИВНЫХ РАСТЕНИЙ** *Անբարենպաստ պայմանների (երաշտ, ավելցուկային խոնավացում, հողի աղակալում, ցածր ջերմաստիճան և այլն) ազդեցության նկատմամբ գեղազարդային բույսերի կայունությունը։*

157. **ԳԵՂԱԶԱՐԴԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՇՐՋԱՆԱՑՈՒՄ — РАЙОНИРОВАНИЕ ДЕКОРАТИВНЫХ РАСТЕНИЙ** *Տե՛ս* ***ԾԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄ։***

158. **ԳԵՂԱԶԱՐԴԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ — ДЕКОРАТИВНАЯ РАСТИТЕЛЬНОСТЬ** *Կանաչ շինարարությունում որոշակի համակցությամբ օգտագործվող գեղազարդային, պաշտպանական և սանիտարահիգիենիկ հատկություններ ունեցող ծառաթփեր ու խոտաբույսեր։*

159. **ԳԵՂԱԶԱՐԴԱՅԻՆ ԾԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ — ДЕКОРАТИВНАЯ ДЕНДРОЛОГИЯ** *Գիտություն գեղազարդային ծառաթփերի մասին։ Կանաչ շինարարությունում օգտագործելու նպատակով ուսումնասիրում է դրանց կազմաբանությունը, կարգաբանությունը, գեղազարդային որակները։*

160. **ԳԵՂԱԶԱՐԴԱՅԻՆ ԾԱՂԿԱԲՈՒՅՍԵՐ — ДЕКОРАТИВНЫЕ ЦВЕТОЧНЫЕ РАСТЕНИЯ** *Բույսեր, որոնք օգտագործվում են ծաղկեփնջերի համար ծաղիկներ ստանալու, պարտեզների և զբոսայգիների ծաղկային ձևավորման, ծաղկամարգերում ու ծաղկաթմբերում աճեցնելու համար։ Ստորաբաժանվում են միամյաների, երկամյաների, բազմամյաների։*

161. **ԳԵՂԱԶԱՐԴԱՅԻՆ ԾԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ — ДЕКОРАТИВНОЕ ДРЕВОВОДСТВО** *Գիտություն գեղազարդային ծառաթփերի, դրանց կենսաբանական և էկոլոգիական յուրահատկությունների, տնկարաններում ու կանաչապատման օբյեկտներում բազմացման, աճեցման և ձևավորման եղանակների մասին։*

162. **ԳԵՂԱԶԱՐԴԱՅԻՆ ԾԱՌԱՏՆԿԱՐԱՆ — ДЕКОРАТИВНЫЙ ДРЕВЕСНЫЙ ПИТОМНИК** *Կանաչ շինարարության համար տնկանյութ (գեղազարդային ծառաթփեր, պարտեզային պատվաստված և խուզված ձևեր) աճեցնող տնտեսություն։ Ըստ ենթակայության լինում են հանրապետական*

*(150—300 հա ավելի տարածությամբ), թաղային (50—150 հա), շրջանային (մինչև 50 հա) տնկարաններ։*

*163.* **ԳԵՂԱԶԱՐԴԱՅԻՆ ՊԱՐՏԵԶԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ** — ЗАЩИТА ДЕКОРАТИВНОЙ САДОВО—ПАРКОВОЙ РАСТИТЕЛЬНОСТИ *Գեղազարդային բույսերի վնասատուների, հիվանդությունների դեմ պայքարի տարբեր միջոցների կոմպլեքսային կիրառում։*

*164.* **ԳԵՂԱԶԱՐԴԱՏԵՐԵՎԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ** — ДЕКОРАТИВНО—ЛИСТВЕННЫЕ РАСТЕНИЯ *Վառ գունավորված կամ յուրատեսակ ձևի գեղեցիկ տերևներով ծառեր, թփեր ու խոտաբույսեր, որոնք օգտագործվում են զբոսայգու մերկ հատվածների, եզրաշերտերի, ծաղկամարգերի ձևավորման համար։*

*165.* **ԳԵՂԱԶԱՐԴՈՒԹՅՈՒՆ** — ДЕКОРАТИВНОСТЬ *Հատկանիշների բազմազանությամբ բնութագրվող առանձին բույսերի, խմբերի, զանգվածների գեղագիտական արժեքավորության ցուցանիշ։ Որոշվում է բույսերի գեղազարդային հատկությունների ուսումնասիրմամբ։*

*166.* **ԳԵՂԱԾԱՂԻԿ ԹՓԵՐ** — КРАСИВОЦВЕТУЩИЕ КУСТАРНИКИ *Գեղազարդային բույսեր, որոնք լայնորեն օգտագործվում են կանաչ շինարարությունում և աչքի են ընկնում վառ գունավորված կամ ինքնատիպ խոշոր ծաղիկներով ու ծաղկաբույլերով, ինչպես նաև երկարատև ծաղկմամբ (30-ից 120 օր)։*

*167.* **ԳԵՏԱԿ** — РУЧЕЙ *Ոլորապտույտ հունով և քարե հատակով ոչ մեծ արհեստական կամ բնական ջրհոսք, որը փոքր թեքություն ունեցող ռելիեֆի վրա առաջացնում է ջրի քչքչացող հոսանք։ Զբոսայգու կոմպոզիցիայի ցանկալի տարրերից է։*

*168.* **ԳԵՏՆԱՏԱՐԱԾ ԲՈՒՅՍԵՐ** — ПОЛЗУЧИЕ РАСТЕНИЯ *Բազեղների խմբին պատկանող, արմատավորվող ընձյուղներով բույսեր (բազեղ, կուսածաղիկ և այլն)։*

*169.* **ԳԵՐԱԿՇՌՈՂ ՀԱՏԿԱՆԻՇ** — ДОМИНАНТА *Գեղարվեստական արտահայտչականության ազդեցության տեսակետից գլխավոր տարր զբոսայգու բնապատկերում, որին ենթարկվում են մյուս տարրերը։ Կարող է լինել բույսի գույնը, ֆակտուրայի, չափսերի և այլն։*

*170.* **ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ** — КЛАДБИЩЕ *Հատուկ նշանակության կանաչապատման օբյեկտ, սովորաբար քաղաքամերձ գոտում։*

*171.* **ԳԻԲԵՐԵԼԻՆ** — ГИББЕРЕЛЛИН *Նյութ, որն իր բարձր ֆիզիոլոգիական ակտիվության շնորհիվ օգտագործվում է բույսերի աճի, զարգացման և նյութափոխանակության կարգավորման, ինչպես նաև տնկաշիվերի արմատակալման համար (տե՛ս նաև՝* **ԱՃՄԱՆ ԽԹԱՆԻՉ***)։*

*172.* **ԳԻՏՆԱԿԱՆ ՊԱՐՏԻԶԱԳՈՐԾ** — УЧЕНЫЙ САДОВОД *Կանաչ շինարարության բնագավառի բարձրագույն որակավորման մասնագետ։*

173. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ — ГЕНЕРАЛЬНЫЙ ПЛАН *Կանաչապատման օբյեկտի հիմնական գծագիրը։ Պատկերում է ապագա կանաչ զանգվածի տեղը ընդհանուր տարածքում, նրա կապը բնակավայրի տարբեր տարրերի, հատկապես այլ կանաչ տարածությունների հետ, ոռոգման, լուսավորության ցանցերի անցկացման հնարավորությունները, շրջակա կառույցները, լանդշաֆտի ինքնատիպ տարրերը՝ ձորակը, ժայռերը, լճակը, գետակը, անտառակը, մենավոր ծառերը։*

174. ԳԼՈՐԻԵՏ — ГЛОРИЕТТА *Բաց, սյունազարդ տաղավարի ձև ունեցող ոչ մեծ կառույց՝ գրոսայգում։ Սովորաբար տեղադրվում է բարձրության վրա կամ եզրափակում է հեռապատկերը։*

175. ԳԾԱՅԻՆ ՀԵՌԱՊԱՏԿԵՐ — ЛИНЕЙНАЯ ПЕРСПЕКТИВА *Տե՛ս ՀԵՌԱՊԱՏԿԵՐ։*

176. ԳՆԴԱՁԵՎ ԲՈՒՅՍԵՐ — ШАРОВИДНЫЕ РАСТЕНИЯ *Բույսեր, որոնք առաջացնում են խիտ և ուժեղ ճյուղավորվող գնդատեսք սաղարթ։ Դրանց թվին են պատկանում նաև բարձանման բույսերը և գնդաձև բույսերի կտրոնները սովորական բույսերի բներին պատվաստելու միջոցով ստացված բույսերը (թեղի խիտ լյապրանդ, ռոբինիա գնդաձև, թխկի սրատերև գնդաձև)։*

177. ԳՈՐԳԱԲՈՒՅՍԵՐ — КОВРОВЫЕ РАСТЕНИЯ *Կարճ (2—10 սմ), գեղեցիկ գունավորված տերևներով, առատ ծաղկող կամ ավելի բարձր, բայց լավ խուզվող, սովորաբար փռվող խոտաբույսեր։ Օգտագործվում են զարդանկար սիզամարգերի, ծաղկաթմբերի, ծաղկամարգերի, գորգանման ծաղկանոցների ստեղծման համար։*

178. ԳՈՒՆԱՅԻՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱ — ЦВЕТОВАЯ КОМПОЗИЦИЯ *Ակտիվ և պասսիվ գույների ճիշտ համադրում, որի շնորհիվ ստեղծվում են ներդաշնակ զուգակցումներ։ Գույների և երանգների լրիվ ներդաշնակություն ստեղծելու նպատակով մուգ գույները զուգակցվում են բաց գույների հետ, միայն այնպես, որ երանգներն աստիճանաբար հաջորդեն մեկը մյուսին՝ թուլացնելով գունային անցումների ցայտագունությունը։*

179. ԳՈՒՆԱԴԵՂՈՒԹՅՈՒՆ — КОЛОРИТ *Ծաղիկների գույնի և ներդաշնակության ընդհանուր բնույթը կոմպոզիցիայում։ Տարբերում են տաք գունեղություն՝ տաք գուներանգների գերակշռման դեպքում և սառը գունեղություն՝ սառը գուներանգների տիրապետման դեպքում։*

## Դ

180. ԴԱՆԴԱՂԱՃ ՏԵՍԱԿՆԵՐ — МЕДЛЕННОРАСТУЩИЕ ПОРОДЫ *Դանդաղարդյուն ծառաթփային բույսեր, որոնց տարեկան աճը չի գերազանցում 10—30 սմ (սերկևիլենի, գիհի կազակական և այլն)։ Այս տեսակների տնկանյութը ստացվում է մեծ տարիք ունեցող ծառերի հողամասից։*

181. ԴԱՇՆԱԿՈՒՄ — АРАНЖИРОВКА *Հասարակական և բնակելի շենքերի ներսը ձևավորելու նպատակով առանձին բույսերից, ճյուղերից, կա-*

ու ծաղկաշղթաներից, պսակներից, ծաղիկներից, տերևներից ծաղկեփնջեր կազմելու ու դրանք սկահակներում ու զամբյուղներում դասավորելու արվեստ։ Տե՛ս նաև՝ ԾԱՂԿԱՀԱՐԴԱՐՈՒՄ։

**182. ԴԱՇՏԱՎԼՈՒԿԱՅԻՆ ՄԱՐԳԱԳԵՏԻՆ — ЛУГ МЯТЛИКОВЫЙ (МЯТЛИЧНИК)** Բնական կամ ցանված հողամաս, որի գերակշռող բուսածածկը մարգագետնային (մեզոֆիլային մարգագետիններում) կամ սոխուկավոր դաշտավլուկն է (կիսաանապատում)։

**183. ԴԱՐԱՎԱՆԴԻ ԶԱՌԻԹԱՓՈՒԹՅՈՒՆ — КРУТИЗНА ОТКОСА** Դարավանդի մակերևույթի թեքությունը բնութագրող ցուցանիշ։ Արտահայտվում հարաբերական (%) ու բացարձակ մեծություններով և կախված է դարավանդի լանդշաֆտի ու հողածածկի բնույթից։

**184. ԴԵԳՐԱԴԱՑՎԱԾ ԼԱՆԴՇԱՖՏ — ДЕГРАДИРОВАННЫЙ ЛАНДШАФТ** Լանդշաֆտ, որը վատթարացել է մարդու ոչ նպատակահարմար տնտեսական գործունեության՝ անտառների հատման, օգտակար հանածոների շահագործման, արտադրության մնացորդներով աղտոտելու, ինչպես և բնական ձորագոյացման, կարստային փլվածքների և այլնի հետևանքով։

**185. ԴԵԿՈՐԱՏԻՎ ԲՈՒՅՍԵՐ — ДЕКОРАТИВНЫЕ РАСТЕНИЯ** Տե՛ս ԳԵՂԱԶԱՐԴԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐ։

**186. ԴԵՆԴՐԱՐԻ — ДЕНДРАРИЙ** Կանաչապատման ինքնուրույն օբյեկտ կամ բուսաբանական այգու, զբոսայգու, տնկարանի կոլեկցիոն հատված։ Նախատեսված է տարբեր տեսակի ծառերի և թփերի ներմուծման և կլիմայավարժեցման նպատակով կատարվող գիտական աշխատանքների համար։ Կազմակերպվում է աշխարհագրական, կարգաբանական, էկոլոգիական սկզբունքով։

**187. ԴԵՆԴՐՈԼՈԳԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ — ДЕНДРОЛОГИЧЕСКИЙ ПРОЕКТ** Տե՛ս ԾԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ։

**188. ԴԵՆԴՐՈԼՈԳԻԱԿԱՆ ՇՐՋԱՆ — ДЕНДРОЛОГИЧЕСКИЙ РАЙОН** Տե՛ս ԾԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ։

**189. ԴԵՆԴՐՈԼՈԳԻԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄ — ДЕНДРОЛОГИЧЕСКОЕ РАЙОНИРОВАНИЕ** Տե՛ս ԾԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄ։

**190. ԴՅՈՒՆԵՐ — ДЮНЫ** Ծովերի, լճերի և գետերի ցածրադիր ավազային ափերին քամու ազդեցությամբ առաջացող բլրակներ ու բլրաշարեր։ Հարթվող դյունային ավազները ամրացվում են բուսատնկումներով։

**191. «ԴՐԱԽՏ» — ПАРАДИЗ** Հին պարսկական պարտեզ, որին բնորոշ էր վարդերի, շատրվանների, ջրամբարների առատությունը։

**192. ԴՐԱՍԱՆԳ — ГИРЛЯНДА** Նույնն է՝ ԾԱՂԿԱՇՂԹԱ։

**193. ԴՐՈՇԱԿԱՆՄԱՆ ԾԱՌԵՐ — ФЛАГООБРАЗНЫЕ ДЕРЕВЬЯ** Քամու ազդեցությամբ ձևավորվող ծառեր։ Ունենում են միակողմանի՝ դրոշականման սաղարթ։

**194. ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ՀՈՂԵՐ — БРОСОВЫЕ ЗЕМЛИ** Գյուղատնտե-

սական օգտագործման համար ոչ պիտանի հողեր։ Ճահճակալած, քարքարոտ, աղակալած, հանքերի մշակումից հետո մնացած հողեր, ավազներ և այլն։ Կանաչապատման նպատակով օգտագործելուց առաջ պահանջում են արմատական ջրարբիացում, վերականգնում։

# Ե

**195.** ԵԶՐԱՇԵՐՏ — БОРДЮР *Որոշակի տեսակի ոչ բարձր (ոչ ավելի՝ 50 սմ), ծաղկող թփերի կամ գեղազարդատերև խոտաբույսերի մեկ կամ երկու շարքով, նեղ (10—30 սմ) տնկարկ։ Ծառայում է ծաղկաթմբերի, ծաղկամարգերի կամ արահետների եզրապատման, ծաղկանոցների զարդանկարի ընդգծման համար։*

**196.** ԵԶՐԱՇԵՐՏԱՅԻՆ ՄԿՐԱՏ — БОРДЮРНАЯ НОЖНИЦА *Կանաչ ցանկապատերը և եզրաշերտերը էտելու մկրատ։ Ձեռքի մկրատների հետ կան նաև էլեկտրականությամբ աշխատող օդամղիչ մկրատներ կամ կանաչ ցանկապատերի մեքենայացված խուզման ագրեգատներ։*

**197.** ԵԶՐԱՊԱՏ — ПАРАПЕТ *Ոչ բարձր պատ, սովորաբար քարից։ Ծառայում է որպես սանդղափուլերի, առափերի, աստիճանների, թեք լանջերի, ճանապարհների պարիսպ։*

**198.** ԵԶՐԱՌՈՒ — КЮВЕТ *Անտառապուրակի, զբոսայգու ճանապարհային պաստառի մակերեսային ջրերը հավաքելու և հեռացնելու համար հատուկ կառուցվածք՝ ճանապարհի երկարությամբ։*

**199.** ԵԼՈՒՆԴ — КАЛЛУС *Հյուսվածքների (արմատների) առաջացումը և տարբերակումը ապահովող նորագոյացություն (խիլ)՝ բույսի կամ տնկաշիվի վրա։*

**200.** ԵՂՐԵՎԱՆՈՑ — СИРИНГАРИЙ *Միակուլտուրային հողամաս, որտեղ աճեցվում են եղրևանու տեսակներ և սորտեր։*

**201.** ԵՆԹԱՆՏԱՌ — ПОДЛЕСОК *Թփերի, հաճախ ոչ մեծ ծառերի ամբողջությունը՝ ծառախմբերի ու զանգվածների գերիշխող առագաստի տակ։*

**202.** ԵՆԹԱՏԵՍԱԿ — ПОДВИД *Տաքսոնոմիական միավոր։ Հատկանիշների միագումարով գտնվում է տեսակի և տարատեսակի միջև։*

**203.** ԵՐԱՇՏ — ЗАСУХА *Օդի բարձր ջերմաստիճանով, մթնոլորտային տեղումների երկարատև անբավարարությամբ ու խոնավության խիստ նվազումով պայմանավորված երկարատև (բազմօրյա, բազմամսյա կամ նույնիսկ՝ բազմամյա) չոր եղանակ։ Հանգեցնում է հողում խոնավության պաշարների սպառմանը, որի հետևանքով բույսերի զարգացման համար ստեղծվում են անբարենպաստ պայմաններ։*

**204.** ԵՐԱՇՏԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ — ЗАСУХОУСТОПЧИВОСТЬ *Առանց կենսագործունեության նշանակալից և անդառնալի խախտումների՝ երաշտին դիմանալու բույսերի ունակությունը։*

**205.** ԵՐԿԱՄՅԱՆԻ — ДВУЛЕТНИКИ *Զարգացման երկամյա շրջան*

ունեցող բույսեր։ Առաջին տարում առաջացնում են տերևավարդակ, երկրորդում ծաղկում, պտղաբերում և մահանում են։

206. ԵՐԿԱՐԱԿՅԱՑ ԲՈՒՅՍԵՐ — ДОЛГОВЕЧНЫЕ РАСТЕНИЯ Կյանքի 100 տարուց ավելի տևողությամբ բույսեր։ Ստորաբաժանվում են խիստ երկարակյացների՝ 500 և ավելի (սեքվոյա, կաղնի, տոսախ), երկարակյացների՝ 200-ից 500 (լորենի, սոսի, հաճարենի), ոչ երկարակյացների՝ 100-ից 200 (բարդի, ուռենի, կեչի, կաղամախի) տարի ապրողների։

207. ԵՐԿԱՐԱՏԱՂԿՈՒՆ ՊԱՐՏԵԶ — САД ДЛИТЕЛЬНОГО ЦВЕТЕНИЯ Վաղ գարնանից մինչև ուշ աշուն ծաղկող բույսերով ձևավորված պարտեզ։ Գեղագարդային տպավորության համար միաժամանակ օգտագործվում են գեղեցիկ պտուղներ ունեցող բույսեր և տերևների աշնանային գունափոխումը։

208. ԵՐԿԱՐՕՐՅԱ ԲՈՒՅՍԵՐ — ДЛИННОДНЕВНЫЕ РАСТЕНИЯ Բույսեր, որոնց զարգացման (ծաղկման ու պտղաբերման) համար անհրաժեշտ է ցերեկվա երկարատևություն։ Սովորաբար բարձր լայնությունների բույսեր են (օրինակ՝ խեժափիճի սիբիրյան)։

209. ԵՐԿՐԱՊԼԱՍՏԻԿԱ — ГЕОПЛАСТИКА Կանաչապատման ենթակա տարածքի ուղղաձիգ հատակագծման եղանակ։ Նպատակ ունի ճարտարապետագեղարվեստորեն վերափոխել ռելիեֆը։ Տե՛ս ՄԻԿՐՈԳԵՈՄՈՐՖՈՊԼԱՍՏԻԿԱ։

210. ԵՐԿՐԱՖԻՏՆԵՐ — ГЕОФИТЫ Բազմամյա խոտաբույսեր, որոնց վերականգնման բողբոջները հողում են։ Հիմնականում սոխուկավոր, կոճղարմատավոր, պալարավոր բույսեր են (վարդկակաչ, սոխ, հակինթ, հիրիկ, նարգիս, շուշաններ)։

211. ԵՐԿՈՒՆԿԱՆԻ ՍԱՓՈՐ — АМФОРА Նեղ բերանով և երկու բռնակներով կավե սափոր։ Օգտագործվում է գրոսայգիների, պարտեզների, պուրակների առանձին հատվածների զարդարման համար։

## Զ

212. ԶԱՆԳՎԱԾ — МАССИВ Ծառաթփային բուսականությունից կազմված խառը ոճի կանաչապատ տարածություն։ Զբոսայգու բնապատկերի հիմնական տարրերից է։ Բնորոշվում է կառուցվածքով, խտությամբ և տեսակային կազմով։ Լինում է անտառային տիպի, նոսր և պուրակային։

213. ԶԲՈՍԱՅԳԻ — ПАРК Ծառուղիներով, ջրային մակերեսներով, խաղահրապարակներով, քանդակներով, ճարտարապետական փոքր ձևերով, զվարճանքի կառույցներով, բնական կամ արհեստական կանաչապատ հողամաս՝ զբոսանքի, հանգստի, կուլտուրական ժամանցի և այլնի համար։ Կանաչապատման համակարգի ամենախոշոր օբյեկտն է։ Զբոսայգիները ըստ նշանակության լինում են կուլտուրայի և հանգստի, մանկական, մարզական, զբոսանքային, հուշահամալիրային։ Ըստ տեղադրության և բնակչության օգտագործման ստորաբաժանվում են համաքաղաքային, շրջանային,

քաղաքամերձ զբոսայգիների, ըստ ռելիեֆի բնույթի՝ գետափնյա, խանդակային, բարձրադիր զբոսայգիների:

214. ԶԲՈՍԱՅԳՈՒ ԶԱՆԳՎԱԾ — МАССИВ ПАРКОВЫЙ Զբոսայգու հատված: Կազմված է հորիզոնական կամ ուղղաձիգ խտություն ունեցող, զբոսայգուն բնորոշ և զուգակցող ծառերից ու թփերից: Տարբերում են զբոսայգու մաքուր (սոճուտ, եղևնուտ) և խառը (կեչի, եղևնի) զանգվածներ: Զբոսայգիներում զանգվածները 0,5—4 հա են, անտառապուրակներում՝ 10 հա-ից ավելի:

215. ԶԲՈՍԱՅԳՈՒ ԽԱՂԱՂ ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻ — ЗОНА ТИХОГО ОТДЫХА ПАРКА Զբոսայգու մի հատված, որը նախատեսված է այցելուների խաղաղ հանգստի համար:

216. ԶԲՈՍԱՅԳՈՒ ԿԱՄՐՋԱԿ — ПАРКОВЫЙ МОСТИК Գեղազարդային կառուցվածք զբոսայգում: Ստեղծվում է ջրային արգելքների կամ ձորակների հաղթահարման համար: Տարբերում են կախված, կամարաստապատավոր և այլ կամրջակներ:

217. ԶԲՈՍԱՅԳՈՒ ՀՐԱՊԱՐԱԿ — ПАРКОВАЯ ПЛОЩАДЬ Զբոսայգու կամ պուրակի կոմպոզիցիոն առանցքի վրա գտնվող, առավել գեղազարդված հատված, որը մի ամբողջության մեջ կապում է ծառուղիները, կածանները: Սովորաբար այստեղ են զբոսայգու կարևորագույն կառույցները՝ կինոթատրոնը, էստրադան, կանաչ թատրոնը, տաղավարները, խաղասենյակները, ցուցասրահները և այլն.

218. ԶԲՈՍԱՅԳՈՒ ՏԱՐԱԾՔԻ ԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ ԶՈՆԱՅԱՎՈՐՈՒՄ — КОМПОЗИЦИОННОЕ ЗОНИРОВАНИЕ ТЕРРИТОРИИ ПАРКА Զբոսայգու տարբեր մասերի ձևավորման սկզբունքի հիման վրա նախագծային և ճարտարապետագեղարվեստական կազմակերպման հատկանիշների զոնայավորում:

219. ԶՈՆԱՅԱԿԱՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ — ЗОНАЛЬНАЯ РАСТИТЕЛЬНОСТЬ Ինքնուրույն զոնաներ (տունդրա, անտառ, տափաստան և այլն) առաջացնող բուսականություն:

220. ԶՈՒԳԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ — СИММЕТРИЯ Մեկ կամ մի քանի առանցքի շուրջը անշարժ առարկաների հայելանման կրկնություն: Պահանջում է նմանության և չափերի լրիվ համապատասխանություն: Պարտեզապուրակային արվեստում զուգաչափական հատակագծումը բնորոշ է միայն կանոնավոր ոճին և բացառվում է լանդշաֆտային հատակագծման համակարգում:

## Է

221. ԷԴԻՖԻԿԱՏՈՐ — ЭДИФИКАТОР Կենսամիջավայրի առաջացման և կենսացենոզի կառուցվածքում հիմնական դեր կատարող տեսակ:

222. ԷԼԵԿՏՐԱԼՈՒՍԱԿՈՒԼՏՈՒՐԱ — ЭЛЕКТРОСВЕТОКУЛЬТУРА

Ծածկած բնահողում անընդհատ կամ պարբերաբար ընդհատվող էլեկտրալուսավորության պայմաններում աճող գեղազարդային բույսեր։

223. ԷԿԵՐԱՅԻՆ ՀԱՆՈՒՅԹ — ЭККЕРНАЯ СЪЕМКА Տարածքի հորիզոնական հանույթի եղանակ՝ էկերի միջոցով որոշվում են հողամասի հաստատուն ձևը, չափերը, փոխադարձ դիրքը։

224. ԷԿԶՈՏ ԲՈՒՅՍԵՐ — ЭКЗОТИЧЕСКИЕ РАСТЕНИЯ Արժեքավոր հատկություններ (գեղազարդային, պտղատու, տեխնիկական) ունեցող, տվյալ վայրում վայրի վիճակում չհանդիպող, ներմուծված (սովորաբար մերձարևադարձային կամ արևադարձային) բույսեր։ Լայն կիրառում են գտել հատկապես ծառաթփային այն տեսակները, որոնք հաջողությամբ կլիմայավարժվել են, պահանջկոտ չեն աճման պայմանների նկատմամբ և կարող են օգտագործվել ամենատարբեր էկոլոգիական պայմաններում (կաղնի, հացենի, թխկի, սոճի, կեչի, ռոբինիա, ասպիրակ, ճապկի, բարդի, ուռենի, լորենի և այլն)։

225. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԼԱՅՆՈՒՅԹ — ЭКОЛОГИЧЕСКАЯ АМПЛИТУДА Միջավայրի պայմաններին բուսատեսակի կամ համակեցության հարմարվողականության սահմանները։

226. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ — БАЛАНС ЭКОЛОГИЧЕСКИХ КОМПОНЕНТОВ Բնական հավասարակշռություն ապահովող էկոլոգիական բաղադրամասերի քանակական զուգորդում։ Օրինակ, անտառի աճի համար անհրաժեշտ են որոշակի խոնավություն և հողային պայմաններ։ Սակայն խոնավությունը կախված է անտառային բուսականության առկայությունից, իսկ հողերը ձևավորվում են վերջինիս կենսագործունեության հետևանքով։

227. ԷՆԴԵՄԻԿ ԲՈՒՅՍԵՐ — ЭНДЕМИЧЕСКИЕ РАСТЕНИЯ Կանաչապատման բնագավառում լայնորեն օգտագործվող տեղական ծագում ունեցող և ուրիշ վայրերում չհանդիպող բուսատեսակներ։ Ի տարբերություն էկզոտ բույսերի, ավելի լավ են հարմարված տեղի հողակլիմայական պայմաններին, ավելի դյուրին է տնկանյութի ու սերմանյութի հայթայթումը։

228. ԷՊԻՖԻՏՆԵՐ — ЭПИФИТЫ Տե՛ս ԿԻՍԱՄԱԿԱԲՈՒՅԾ ԲՈՒՅՍԵՐ։

229. ԷՍՊԼԱՆԱԴ — ЭСПЛАНАДА Սիզամարգի ստեղծման, ծառերի տնկման համար նախատեսված լայն, չկառուցապատված տարածություն հրապարակներում եղած հասարակական մեծ շենքերի առջև (հնում՝ ամրոցի և քաղաքային շինությունների միջև)։ Միավորում է հրապարակի ճարտարապետական անսամբլները։

230. ԷՏԵԼՈՒ ՄԿՐԱՏ — СЕКАТОР Ընձյուղներ, ճյուղեր կտրատելու, պատվաստաշիվեր կտրելու պարտեզային մկրատ։

231. ԷՐՄԻՏԱԺ — ЭРМИТАЖ Ֆրանսիայի և Գերմանիայի XVII—XVIII դարերի պալատական և պարտեզապուրակային արվեստի զարգացմանը բնորոշ կառույց (բառացիորեն՝ մենավոր տուն, մեկուսացած անկյուն)։ Մեկուսի հանգստի, մտորումների, ինչպես նաև ժողովների, հավաքածուների ցուցա-

դրման, համերգների կազմակերպման և այլնի համար նախատեսված նրբագեղ ճարտարապետական շինություն է։

232. ԷՔՍՊՈԶԻՑԻՈՆ ԾԱՂԿԱՆՈՑ — ЭКСПОЗИЦИОННЫЙ ЦВЕТНИК *1. Ծաղկային միակուլտուրային հողամաս՝ գեորգինանոց, հիրիկանոց, վարդկակաչանոց, եղրևանոց, վարդանոց, քաջվարդանոց և այլն։*

*2. Սեզոնային էֆեկտների հատուկ պարտեզներ, մշտածաղկուն վարդանոցներ և այլն։*

233. ԷՖԵՄԵՐՆԵՐ — ЭФЕМЕРЫ *Կարճատև կենսացիկլով, հիմնականում գարնանային կամ աշնանային միամյա խոտաբույսեր։*

234. ԷՖԵՄԵՐԱՆՄԱՆՆԵՐ — ЭФЕМЕРОИДЫ *Ամենամյա կարճատև վեգետացիա և երկարատև հանգիստ ունեցող բազմամյա խոտաբույսեր։*

## Ը

235. ԸՆԿԱԼԱԿԵՏ — ТОЧКА ВОСПРИЯТИЯ *Երթուղու կամ զբոսայգու կոմպոզիցիայի որոշակի տեղ, որտեղից լավ է ընկալվում բնապատկերը։*

## Թ

236. ԹԱՂԱՐ — КАДКА *Հողային սննդարար խառնուրդից պատրաստված տարբեր մեծության գլաններ, բուրգեր, խորանարդներ։ Կիրառվում են բանջարանոցային բույսեր և ծաղիկների սածիլներ աճեցնելու համար։*

237. ԹԱՐՄԱ — ПЕРГОЛА *Ծածկի, կամարի կամ թունելի ձև ունեցող փայտյա կամ մետաղյա հենարաններ, որոնք պատված են փաթաթվող բույսերով։ Որպես փաթաթվող բույս Հայաստանում հիմնականում օգտագործվել և օգտագործվում է խաղողը։ Ներկայումս գեղազարդային պարտիզագործության մեջ թարմայի համար օգտագործվում են նաև բազմատեսակ բաղեղներ (լիաններ)։*

238. ԹԱՓՎԱԾՔ — ОТПАД *Մահացած, բայց չտապալված բույսերը և չորացած, բայց կենդանի բույսից չբաժանված մասերը։*

239. ԹԵԹԵՎ ԻՈՆՆԵՐ — ЛЕГКИЕ ИОНЫ *Օդի բացասական լիցքավորված մասնիկներ, որոնցով որոշվում է օդի մաքրության աստիճանը։ Որոշ ծառեր ավելացնում են դրանց քանակը օդում (օրինակ, կաղնի կարմիր, կաղնի ամառային, ուռենի սպիտակ, հացենի սովորական, եղրևանի և այլն)։*

240. ԹԵՔԱՄՈՒՏՔ — ПАНДУС *Պարտեզապուրակային կառուցվածք։ Մեկ սանդղափուլից մյուսին անցնելու կամ մուտք գործելու համար աստիճանին փոխարինող թեք հարթություն։ Թեքությունը 8°-ից ավելի չէ։ Օգտագործվել է XVII—XVIII դարերի սանդղափուլային զբոսայգիներում։*

241. ԹԵՔՈՒԹՅՈՒՆ — УКЛОН *Լանջի դառիթափության հիմնական ցուցանիշը։ Բնութագրում է հորիզոնի նկատմամբ մակերևույթի առանձին*

հատվածների թեքությամբ։ Արտահայտվում է որպես տվյալ հատվածում հիմնամասի բարձրության (H) հարաբերությունը երկարությանը (L)՝ տոկոսներով և բացարձակ մեծություններով $\left(i = \frac{H}{L}\right)$։

242. ԹԶՈՒԿ ԲՈՒՅՍԵՐ — КАРЛИКОВЫЕ РАСТЕНИЯ Ծառաթփային բույսերի պարտեզային ձևի ներկայացուցիչներ, որոնց բարձրությունը չի անցնում 0,5—0,6 մետրից։ Օգտագործվում են պարտեզային ձևավորումների մեջ, ինչպես նաև քարապարտեզներում և ալպինարիումներում։ Ճապոնացիները արհեստական եղանակով ստանում են խոշոր ծառերի (կաղնի, եղևնի, սոճի, սոֆորա և այլն) թզուկ տեսակներ, որոնք օգտագործվում են սեղանայգիների ձևավորման համար։

243. ԹՈՒՆԱՆՅՈՒԹԵՐ — ЯДОХИМИКАТЫ Տե՛ս ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐ։

244. ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐ — ЯДОХИМИКАТЫ Քիմիական հատուկ պատրաստուկներ, որոնք օգտագործվում են վնասատուների (ինսեկտիցիդներ, պեստիցիդներ, զոոցիդներ, ակարոցիդներ), սնկային հիվանդությունների (ֆունգիցիդներ), բակտերիալ հիվանդությունների (բակտերիոցիդներ), վիրուսային հիվանդությունների, մոլախոտերի (հերբիցիդներ) դեմ պայքարելու համար։ Ներկայումս խիստ սահմանափակվում է նման նյութերի կիրառումը, քանի որ դրանք անվտանգ չեն շրջակա միջավայրի համար։ Աստիճանաբար փոխարինվում են պայքարի կենսաբանական եղանակով։

245. ԹՈՒՓ — КУСТАРНИК Ծառաբուսական կենսաձև։ Սովորաբար արմատավզիկից սկսած բազմաբուն է, ճյուղավորված։ Ծառի հետ համեմատած ավելի պակաս երկարակյաց է։ Հասնում է մինչև 3—5 մ բարձրության։

246. ԹՓԱԿԱԼՈՒՄ — КУЩЕНИЕ Բույսերի՝ արմատավզիկից շիվեր (առանցքներ) տալու ունակությունը։ Խոտերի, թփերի և որոշ ծառերի (սոսի, լորենի) բնորոշ առանձնահատկությունն է։

247. ԹՓԱԽՈՒՄԲ — ГРУППА КУСТАРНИКОВ Ջրոսայգու բնապատկերի օժանդակ տարր։ Կարող է ունենալ ինքնուրույն նշանակություն. լանջերի վրա հողը պաշտպանում է էրոզիայից։

248. ԹՓԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ — ФОРМИРОВАНИЕ КУСТОВ Տե՛ս ԲՈՒՅՍԵՐԻ ԷՏՈՒՄ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ։

249. ԹՓԻԿ — КУСТАРНИЧЕК Բուսական կենսաձև։ Փոքր թուփ, որի շիվերի մի մասը փայտացած է, մյուս մասը՝ խոտային։ Բարձրությունը հասնում է մինչև 0,5 մետրի։

## Ժ

250. ԺԱՅՌԱԲՈՒՅՍԵՐ — СКАЛЬНЫЕ РАСТЕНИЯ Ժայռերի ճեղքերում, շենքերի պատերին աճող բույսեր։ Լայնորեն օգտագործվում են քարապարտեզներ, ըլրակներ ստեղծելիս (ճռճռուկ արծաթագույն, բոցենի թփային, զանգակածաղիկ գարմանահրաշ, թանձրատերևի տեսակներ և այլն)։

251. ԺԱՆՅԱԿԱՊԱՐՏԵՐ — КРУЖЕВНОЙ ПАРТЕР *Ծաղկային ձևավորման ամենաբարդ եղանակներից մեկը։*

252. ԺԱՆՐ — ЖАНР *Գեղարվեստական ստեղծագործության որոշակի տեսակ։ Արվեստում արտացոլվող կենսական երևույթների, ինչպես նաև հեղինակային մոտեցման բազմազանության շնորհիվ, պատմական զարգացման ընթացքում ամեն մի արվեստում գոյացել են ստեղծագործության տարբեր ժանրեր։ Պարտեզապուրակային արվեստում ժանրային տարատեսակությունների կարելի է վերագրել սպորտճանապարհների, բնակելի համալիրների, շրջանային պարտեզների և գրոսայգիների կանաչապատումը։*

253. ԺԱՊԱՎԵՆԱՑԱՆՔԸ ՏՆԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ — ЛЕНТОЧНЫЙ ПОСЕВ В ПИТОМНИКАХ *Խնամքի հետագա մեքենայացումը հաշվի առնող ցանք։ Բացի շարքերից, սերմերը ցանվում են 2—3—4 շարքանի ժապավեններում, ըստ որում շարքերի միջև հեռավորությունը 20 սմ է, ժապավենների միջև՝ 60 սմ։*

254. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԿ — НАРОДНЫЙ ПАРК *Լանդշաֆտի ակնառու յուրահատկություններ՝ լճեր, ջրամբարներ, գետեր ունեցող տարածք, որը համապետական արժեք ունի և պահպանվում է օրենքով։ Նախատեսված է կազմակերպված հանգստի ու տուրիզմի, գիտահետազոտական աշխատանքների համար։*

## Ի

255. ԻԿԵԲԱՆԱ — ИКЭБАНА *Տե՛ս* ԾԱՂԿԱՀԱՐԴԱՐՈՒՄ։

256. ԻՆՍԵԿՏԻՑԻԴՆԵՐ — ИНСЕКТИЦИДЫ *Տե՛ս* ՄԻՋԱՏԱՍՊԱՆՆԵՐ։

257. ԻՆՔՆԱՑԱՆՔԸ — САМОСЕВ *Բույսերի բնական վերականգնումը սերմերով։ Ներմուծված բույսի՝ տվյալ կլիմայական պայմաններին հարմարվելու ցուցանիշ է։*

258. ԻՈՆԱՑՈՒՄ — ИОНИЗАЦИЯ *Բացասական լիցքավորված մասնիկներով կամ թեթև իոններով օդը հարստացնելու միջոցով այն մաքրելու պրոցես։ Կանաչ տնկարկները մեծապես նպաստում են օդի իոնացմանը։*

259. ԻՏԱԼԱԿԱՆ ԹԵՔԱՄՈՒՏՔ — ИТАЛЬЯНСКИЙ ПАНДУС *Նեղ և թեք աստիճաններով զառիկող սանդուղք։*

260. ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԵԶ — ИТАЛЬЯНСКИЙ САД *Պարտեզի ոճ կամ տեսակ։ Բնորոշ էր Իտալիայի Վերածննդի դարաշրջանին։*

## Լ

261. ԼԱԲԻՐԻՆԹՈՍ — ЛАБИРИНТ *1. Բազմաթիվ խճճված միջանցքներով բարդ կառույց (օրինակ՝ Կրետե կղզու պալատի խճճված անցումները)։ 2. Միջնադարում լաբիրինթոսներ երևան եկան Վերածննդի և Բարոկկոյի պարտեզներում։ Լայն տարածում ստացան XVIII—XIX դարերի ռուսական գրոսայգիներում, որտեղ լաբիրինթոսը ստեղծվում էր բարձր խուզ-*

վաճ կենդանի ցանկապատերով (օգտագործվում էին բոխի, յորենի, գաղձենի և այլն)։

**262. ԼԱՆԴՇԱՖՏ — ЛАНДШАФТ** *Աշխարհագրական թաղանթի բնական զարգացման ընթացքում առաջացած համասեռ տեղամաս, որը այլ տեղամասերից որակապես տարբերվում է նրբին կառուցվածքով, տարածքային փոքր միավորներով, երևույթների սեզոնային ռիթմի յուրօրինակությամբ և այլն։ Բնութագրվում է բնորոշ հատկանիշների գումարով, որում տարբեր տարրերը՝ կլիման, ռելիեֆը, հողածածկը, բուսական և կենդանական աշխարհը, մարդը և նրա մշակույթը կազմում են մի ամբողջություն, փոխադարձաբար ներգործելով միմյանց վրա։ Լանդշաֆտները լինում են բնական, կուլտուրական, գեգրադացված։*

**263. ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԱՐՎԵՍՏ — ЛАНДШАФТНОЕ ИСКУССТВО** *Մարդու տնտեսական գործունեության, ինչպես նաև սողանքների, հեղեղատների և այլնի առաջացման հետևանքով խախտված լանդշաֆտի վերականգնման, գեղարվեստական բարելավման ու ձևավորման միջոցառումների նախագծում ու մշակում։ Նպատակ ունի բնակչության հանգստի համար ստեղծել բարենպաստ միջավայր։*

**264. ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ — ЛАНДШАФТНАЯ ТАКСАЦИЯ** *Կանաչապատման օբյեկտի ստեղծման մինչնախագծային փուլ։ Բնակավայրերի անտառագոտիների անտառապուրակների վերածելու նպատակով բնական տնկարկների գեղագիտական արժանիքների պայմանական գնահատում։ Հիմնական խնդիրն է բնության մեջ հայտնաբերել և հատակագծում նշել լանդշաֆտային առանձին միավորներ, տալ դրանց ճարտարապետագեղարվեստական ու կենսատեխնիկական լրիվ բնութագիրը։ Գնահատականը տրվում է պայմանական հինգ կատեգորիաներով՝ բարձր, միջինից բարձր, միջին, միջինից ցածր, ցածր։ Գնահատման հիմնական գործոններն են՝ բույսերի գերակշռող տեսակները, դրանց խմբավորումները, տարիքը և շարահարկությունը, ռելիեֆի և հողածածկի բնույթը, ենթանտառի, բացատների, ջրամբարների առկայությունը և այլն։*

**265. ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳԻ — ЛАНДШАФТНЫЙ ПАРК** *Լանդշաֆտային որոշակի կոմպլեքսով տարածք (5—100 հա), որի հատակագծային տարրերը բնական դասավորություն ունեն։ Օգտագործվում է սահմանափակ ռեժիմով հանգստի համար։*

**266. ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԶՈՆԱՅԱՎՈՐՈՒՄ — ЛАНДШАФТНОЕ ЗОНИРОВАНИЕ** *Մեծ մակերես ունեցող տարածքի և նրա առանձին տարրերի գնահատումը լանդշաֆտային վերլուծության մեթոդով։*

**267. ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱ — ЛАНДШАФТНАЯ КОМПОЗИЦИЯ** *Կանաչապատման օբյեկտների նախագծման հիմնական եղանակ։ Հաշվի առնելով տեղական յուրահատկությունները, կառույցների և ճարտարապետական փոքր ձևերի հետ զուգորդված, ազատորեն ու գեղեցիկ տեղադրվում են բուսականությունը, քարերը, ջրավազանները։*

**268. ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍ** — ЛАНДШАФТНЫЙ УЧАСТОК *Տարածքի լանդշաֆտային վերլուծությամբ հայտնաբերված տեղամաս, լանդշաֆտային շրջանի հատված։ Բնութագրվում է տեսանելի պատկերի միատարրությամբ, որը պայմանավորված է բուսականության միատեսակությամբ, տարիքի և որակավորման դասերով, տնկարկների ստվարությամբ և շարահարկությամբ, ռելիեֆով և այլնով։*

**269. ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ** — ЛАНДШАФТНЫЙ АРХИТЕКТОР *Լանդշաֆտային ճարտարապետության մասնագետ։*

**270. ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ** — ЛАНДШАФТНАЯ АРХИТЕКТУРА *Արվեստի բարդ տեսակ, որը զբաղվում է մարդուն շրջապատող միջավայրի կազմակերպմամբ։ Քաղաքաշինության պարտադիր տարրն է։ Բնակչության կենսագործունեության ու հանգստի համար նպաստավոր միջավայր ստեղծելու գործառական, գեղագիտական ու տնտեսական պահանջները հաշվի առնելով լուծում է լանդշաֆտի, քաղաքի և քաղաքամերձ գոտու ձևավորման տեսական ու գործնական խնդիրները։*

**271. ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ** — ЛАНДШАФТНОЕ ПРОЕКТИРОВАНИЕ *Լանդշաֆտային ճարտարապետության մեջ կիրառվող մեթոդ, ըստ որի մշակվում են քաղաքային միջավայրի, ինչպես նաև քաղաքամերձ գոտու բաց տարածությունների վերակառուցման, գեղարվեստական ձևավորման եղանակները։*

**272. ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՏԱՔՍԱՑԻԱ** — ЛАНДШАФТНАЯ ТАКСАЦИЯ *Տե՛ս ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ։*

**273. ԼԱՆԴՇԱՖՏԻ ԳԵՂԱՏԵՍԻԼՈՒԹՅՈՒՆ** — ЖИВОПИСНОСТЬ ЛАНДШАФТА *Այս կամ այն անձի համար լանդշաֆտի գեղագիտական կերպարի (հաճելիության) սուբյեկտիվ գնահատական։*

**274. ԼԱՆԴՇԱՖՏԻ ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ** — КОМФОРТНОСТЬ ЛАНДШАФТА *Մարդու համար սովորական կամ նոր միջավայրում հանգստի սուբյեկտիվ զգացում և օբյեկտիվ վիճակ, որը լիցքաթափում է նրա նյարդային համակարգը և ապահովում բազմակողմանի հանգիստ։*

**275. ԼԱՑՈՂ ԲՈՒՅՍԵՐ** — ПЛАКУЧИЕ РАСТЕНИЯ *Տե՛ս* **ԿԱՐՍԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ**։

**276. ԼԻԱԹԵՐԹ ԾԱՂԻԿ** — МАХРОВЫЙ ЦВЕТОК *Բազմաթիվ պսակաթերթիկներով ամուլ ծաղիկ։ Ծաղկի առէջները և վարսանդները ձևափոխվելով վերածվել են պսակաթերթիկների։ Բնորոշ օրինակ է կուլտուրական վարդը։ Լիաթերթիկությունը հատուկ է ինչպես ծառաթփային, այնպես էլ ծաղկային բույսերին։*

**277. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ԼԱՄՊԵՐ** — ЛАМПЫ ДОСВЕЧИВАНИЯ *Աղեղնային, սնդիկային, լյումինեսցենտային, բարձր ճնշման լամպեր 250 վ հզորությամբ։ Ջերմոցներում օգտագործվում են որպես լույսի լրացուցիչ աղբյուր, ձմռանը ծաղիկներ աճեցնելու համար։*

**278.** ԼՅԱԿՈՒՅՏ — ТЕРРИКОН *Անօգտագործելի ապարի կոնաձև կուտակում։ Սովորաբար կուտակվում է հանքավայրի կամ հանքահորի մոտ։ Անտառապատման կամ կանաչապատման օբյեկտ է հողերի վերաօգտագործման պրոցեսում։*

**279.** ԼՈՒՍԱՄԻՏՈՒԹՅՈՒՆ — ФОТОТРОПИЗМ *Լույսի աղբյուրի ազդեցության տակ բույսերի օրգանների աճի ուղղության փոփոխումը դեպի լույսը (դրական լուսամիտություն) կամ հակառակ կողմը (բացասական լուսամիտություն)։*

**280.** ԼՈՒՍԱՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ — ФОТОПЕРИОДИЗМ *Օրվա ընթացքում ցերեկային լուսավորվածության տևողության (լույսի և մթության պարբերական հերթափոխման) ազդեցությունը բույսերի զարգացման վրա։ Տարբերում են երկարօրյա (բարձր լայնությունների), բարեխառն ու կարճօրյա (արևադարձների և մերձարևադարձների) բույսեր։ Լայնորեն օգտագործվում է ծաղիկների ձմեռային աճեցման ժամանակ։ Տե՛ս նաև՝ ԷԼԵԿՏՐԱԼՈՒՍԱԿՈՒԼՏՈՒՐԱ։*

**281.** ԼՈՒՍԱՍԵՐ ԲՈՒՅՍԵՐ — СВЕТОЛЮБИВЫЕ РАСТЕНИЯ *Իրենց կենսաբանական հատկություններով դեպի արևը ձգտող և աճման ազատ պայմաններ (կիսաանապատներ, անապատներ, տափաստաններ և այլն) պահանջող բույսեր։*

**282.** ԼՈՒՍԱՍԵՐ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ — СВЕТОЛЮБИВЫЕ ДРЕВЕСНЫЕ ПОРОДЫ *Աճման համար արևի լիառատ լուսավորման կարիք ունեցող ծառատեսակներ (սոսի, կաղնի, բարդի, սոճի, տանձենի, պիստակենի, փշնի, գիհի և այլն)։*

**283.** ԼՈՒՍԱՍՏՎԵՐԱՅԻՆ ԷՖԵԿՏ — СВЕТОТЕНЕВОЙ ЭФФЕКТ *Լույսի և ստվերի խաղ, որի նպատակահարմար տեղաբաշխումը որոշիչ գործոն է տնկարկների կոմպոզիցիոն ձևավորման գործում։ Զբոսայգու կոմպոզիցիաներում լույսի և ստվերի զանազան փոխհարաբերությունները՝ խաղերը, կախված են արևի ճառագայթումից, կանաչապատվող օբյեկտի աշխարհագրական դիրքից, տարվա եղանակից և օրվա պահից։ Լույսը լուսաստվերային էֆեկտի գլխավոր գործոնն է։ Այն ընդգծում է զբոսայգու տարրերի ուրվագիծը, չափը, գույնը, բնույթը, նպաստում է բնապատկերի պլաստիկությանը և կենսունակություն է հաղորդում նրան, բացահայտում զբոսայգու կոմպոզիցիայի գեղեցիկ ու գեղարվեստական կողմերը։*

*Լուսաստվերային էֆեկտը ունի ոչ միայն գեղարվեստական, այլ նաև գործնական նշանակություն, հատկապես հարավում, որտեղ ստվերը խիստ կարևոր նախապայման է այցելուների նորմալ հանգիստը ապահովելու համար։*

*Լուսաստվերային էֆեկտներ ստեղծելիս հաշվի են առնվում բույսերի կենսաբանական առանձնահատկությունները, որպեսզի լուսասեր բույսերը մշտապես ապահովված լինեն արեգակնային ուղղակի լուսավորվածությամբ,*

իսկ ստվերասեր բույսերը որոշակի ժամերի գտնվեն ստվերում՝ այրվածքներից խուսափելու համար։

## Խ

284. ԽԱՂԱՂ ՀԱՆԳՍՏԻ ՀՐԱՊԱՐԱԿ — ПЛОЩАДКА ДЛЯ ТИХОГО ОТДЫХА *Կանաչապատման օբյեկտի հատակագծային տարր։ Նախատեսվում է այցելուների խաղաղ հանգստի համար։ Կան սեղանի զանազան խաղեր, հարմարավետ նստարաններ։ Լինում է ծառերի ստվերում, ջրամբարի մոտ և այլն։*

285. ԽԱՉԱՍԵՐՈՒՄ — ГИБРИДИЗАЦИЯ *Ժառանգականորեն տարասեռ ծնողական ձևերի խառը հատկանիշները կրող երկու տարբեր սորտերի, ձևերի, տարատեսակների կամ տեսակների, երբեմն ցեղերի սեռական բջիջների միավորման ճանապարհով նոր բույսերի ստացման կենսաբանական մեթոդ։ Հիբրիդային տեսակներ են, օրինակ, բեռլինյան, պետրովյան, կանադական և այլ բարդիները։*

286. ԽԻՂՃԵՐ — УСИКИ *Օրգան, որով փաթաթվող բույսերը (վիկ հոտավետ, խաղող և այլն) ամրանում են հենարաններին։ Ձևափոխված ընձյուղ կամ տերև է։*

287. ԽԻՍՏ ԴԱՆԴԱՂԱՃ ԲՈՒՅՍԵՐ — ОЧЕНЬ МЕДЛЕННОРАСТУЩИЕ РАСТЕНИЯ *Բույսեր, որոնց տարեկան աճը չի գերազանցում 0,15 մ (ծառերից՝ տոսախ, մայրու մացառաթուփ, գիհի բարձր, կենի հատապտղային, թփերից՝ գայլահատ, մրտավարդ, գազի մի քանի տեսակներ և այլն)։*

288. ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐ — ТРАВЯНИСТЫЕ РАСТЕНИЯ *Բույսեր, որոնց վերգետնյա ընձյուղները չեն փայտանում և ձմռանը մահանում են։ Ծաղկային կամ գեղազարդային բույսերի մեծ խումբ (միամյա, երկամյա, բազմամյա, այդ թվում՝ սոխուկավորներ, պալարասոխուկավորներ)։ Խոտաբույսերի շարքն են դասվում նաև հնդկեղեգը, ադամաթզենին և այլն։*

289. ԽՈՏԱՅԻՆ ԵԶՐԱՇԵՐՏ — ТРАВЯНИСТЫЙ БОРДЮР *Ծաղկանոցը կամ պարտերը եզերող, առանձին տարրերը ցայտուն և ընդգծված դարձնող բուսաշերտ (լոբելիա, գեղմնախոտ, ակնտակ, մոխրածաղիկ ծովային, պատիեննի, պիրիլլա նանկինյան և այլն)։*

290. ԽՈՏԵՐ — ТРАВЫ *Կանաչ շինարարությունում օգտագործվող բույսերի մեծ խումբ։ Դրանցով են ստեղծվում գրոսայգու հիմնական կոմպոզիցիաները՝ սիզամարգերը, ծաղկախմբերը, պարտերները, ծաղկաթմբերը և այլն։*

291. ԽՏԱՑՎԱԾ ՏՆԿԱՐԿ — ЗАГУЩЕННАЯ ПОСАДКА *Զբոսայգու բնապատկերի ձևավորման եղանակ։ Նպատակ ունի արագորեն ստանալ ուղիղ բներով խիտ տնկարկներ։ Հետագայում անհրաժեշտ է պարտադիր նոսրացում կատարել։*

292. **ԽՈՒԶՈՒՄ** — СТРИЖКА *Ծառերի և թփերի ձևավորման հատուկ ձև, երբ պարբերաբար խուզելով, բույսերին որոշակի ձև են տալիս։ Կիրառվել է հատկապես հին աշխարհում և անվանվել է տոպիար արվեստ։ Զարգացման բարձր մակարդակի է հասել հատկապես ֆրանսիական պարտեզներում և մասնավորապես Վերսալի թագավորական պարտեզում, որտեղ բույսերից ստեղծվում էին պալատներ, արձաններ, շատրվաններ, կենդանիների ֆիգուրներ, սյունաշարեր և այլն։ Ներկայումս կորցրել է իր նշանակությունը որպես արվեստ։ Կիրառվում է կենդանի ցանկապատերի և եզրաշերտերի ձևավորման համար։ Որոշ գրոսայգիներում դեռևս պահպանվել է խուզման եղանակով կենդանիների ֆիգուրներ ստեղծելու արվեստը։*

293. **ԽՈՒՄԲ** — ГРУППА *Կանաչապատման տիպ, գրոսայգու բաց տարածությունների ծավալային և երանգային ձևավորման հիմնական տարր։ Ձևավորվում է գրոսայգու առաջին, միջին և հեռու պլանները, այցելուների ուշադրությունը կենտրոնացնելով նրա հիմնական տարրերի վրա։ Կազմվում է մեկը մյուսից 4—5 մետր հեռավորությամբ տնկված երկու և ավելի ծառերից։ Խումբը կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի տեսակներից՝ ինչպես ծառերից, այնպես էլ թփերից։ Մեկ տեսակից կազմված խումբը կոչվում է միակոմպակտ, երկու տեսակից կազմվածը՝ երկկոմպակտ, երկուսից ավելի տեսակներից՝ բազմակոմպակտ։*

## Ծ

294. **ԾԱՂԿԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ** — ЦВЕТОВОДСТВО *Արժեքավոր գեղազարդային, բազմերանգ, բուրավետ ծաղիկներով կամ գեղեցիկ տերևներով բույսերի բազմացման ու աճեցման ագրոտեխնիկայի, գեղազարդային տեսակներից արժեքավոր ծաղկաբույսերի սորտերի ստացման գիտություն և պրակտիկա։ Հիմնված է այդ բույսերի աճի և զարգացման կենսաբանական յուրահատկությունների օգտագործման վրա։ Նպատակ ունի ձևավորել կանաչապատման տարբեր օբյեկտներն ու նրանց մասերը (պարտեզներ, գրոսայգիներ, պարտերային հատվածներ, փողոցներ և այլն)։*

295. **ԾԱՂԿԱԲՈՒՅԼ** — СОЦВЕТИЕ *Բույսերի տարեկան ընձյուղի ծաղիկներ կրող մասը։ Կազմված է ճյուղավորված համակարգից և ծաղիկներից, որոնք զարգանում են տերևածոցերում։ Առաջացել է հիմնականում ծաղիկների ծաղկակիր ընձյուղների կարճացման հետևանքով։ Ունի ողկույզի (թխենի, եղրևանի), ծաղկաբույլի (ոսկեշիվ), զամբյուղի (քրիզանթեմ, աստղածաղիկ), հովանոցի (ժախ) և այլ ձևեր։*

296. **ԾԱՂԿԱԲՈՒՅՍԵՐ** — ЦВЕТОЧНЫЕ РАСТЕНИЯ *Խոշոր, վառ գունավորված, գեղեցիկ կամ հոտավետ ծաղիկներով միամյա, երկամյա և բազմամյա խոտաբույսեր։ Աճեցվում են ծաղիկներ և ծաղկաբույլեր ստանալու, ինչպես նաև գեղազարդային ձևավորումների համար։ Բաժանվում են մի շարք խմբերի (գորգային, պարտերային, սոխարմատավոր, կոճղարմա-*

*տավոր, էֆեմերային, թաղարային, ամպելային, բուրավետ, տերևազեղազարդային և այլն)։*

297. **ԾԱՂԿԱԴՈՐԳԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ** — ЦВЕТОЧНО-КОВРОВОЕ ОФОРМЛЕНИЕ *Ծաղկային ձևավորում ցածրահասակ գորգային բույսերով (ակնտակ, թանթռնիկ, պատնեշնի և այլն)։*

298. **ԾԱՂԿԱԹԱՂԱՐԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ** — ЦВЕТОЧНО-КАДОЧНАЯ КУЛЬТУРА *Թաղարներում աճեցվող բազմամյա արևադարձային (երբեմն՝ մերձարևադարձային) բույս։ Օգտագործվում է բնակարանների, ձմեռային պարտեզների, աշխատասենյակների, արտադրամասերի, լսարանների, դասասենյակների ձևավորման համար։ Երբեմն օգտագործվում է նաև բաց բնահողի պարտերային ժամանակավոր (մինչև ձմեռ) ձևավորումներում։*

299. **ԾԱՂԿԱԹՈՒՄԲ** — КЛУМБА *Զբոսայգու ազատ հատվածներում տեղադրված ճիշտ երկրաչափական ձևի (կլոր, ուռուցիկ, տափակ, ճկված, ուղղանկյուն) ծաղկանոց։ Տարբերում են ծաղկաթմբեր, ինչպես գունային լուծմամբ (միագույն և բազմագույն), այնպես էլ տեսակային կազմով (պարզ՝ կազմված մեկ և բարդ՝ 2—3 բուսատեսակներից) և ըստ կենսացիկլի (միամյա, երկամյա, բազմամյա բույսերով)։*

300. **ԾԱՂԿԱՀԱՐԴԱՐՈՒՄ** — ИКЭБАНА *Ծաղիկներից, ընձյուղներից, չորացած պտուղներից հատուկ անոթներում կոմպոզիցիաներ ստեղծելու, ձևավորելու և դրանք շենքի ներսում տեղադրելու արվեստ։ Սկզբնավորվել է XV դարում, Ճապոնիայում, որպես «թեյի ծիսակատարության» մաս։ Կոմպոզիցիայում վճռորոշ են երեք հիմնական ծառաճյուղերը կամ ծաղիկները, որոնք խորհրդանշում են. բարձրը՝ երկինք, միջինը՝ մարդ, ցածրը՝ երկիր։*

301. **ԾԱՂԿԱՄԱՐԳ** — РАБАТКА *Ծաղկաբույսերի աճեցման, գեղազարդային ձևավորման համար առանձնացված հողաշերտի նեղ, երկար մարգանման հատված։ Լայնությունը ընդունված է 0,5—1,5 մ, երկարությունը՝ 1—25 մետր։ Տնկում են մեծամասամբ միամյա, հաճախ նաև՝ բազմամյա ծաղկային և տերևածաղկային բույսեր, երբեմն ստեղծելով գեղեցիկ նախշեր (հատկապես գորգային ձևավորումներում)։ Եզրային մասերում ցածր, իսկ կենտրոններում համեմատաբար բարձրաճ բույսեր են։ Տեղադրվում են զբոսայգու կենտրոնական, շքամուտքային մասերում, ճանապարհների միջին մասում կամ եզրերում, մայրուղիների բաժանարար շերտերում, պուրակներում և այլուր։*

302. **ԾԱՂԿԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ** — ЦВЕТОЧНЫЙ МАССИВ *Բացառապես բազմամյա ծաղկաբույսերից ստեղծված մեծածավալ ծաղկային կոմպոզիցիա (80—150 մ²-ից մինչև 1000 մ² տարածքով)։ Տպավորիչ են միագույն (վառ կարմիր, սպիտակ, ոսկեդեղին) կամ 2—3 գույների հակադրական զուգակցումով ստեղծված ծաղկային զանգվածները։ Լայնորեն կիրառվում է զբոսայգու պարտերային հատվածներում։*

**303. ԾԱՂԿԱՅԻՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ** — ЦВЕТОЧНАЯ ГРУППИРОВКА *Ծաղկային ձևավորման ներգործուն տեսակ։ Կազմված է տարբեր չափի շրջանների, քառակուսիների, անկանոն երկրաչափական ձևերի կոմպլեքսից. հագեցված ծաղկաբույսերով (սովորաբար նույն տեսակի, բայց տարբեր սորտերի՝ բազմամյաներ, երկամյաներ և միամյաներ)։*

**304. ԾԱՂԿԱՅԻՆ ԿՈՆՏԵՅՆԵՐ** — ЦВЕТОЧНЫЙ КОНТЕЙНЕР *Տե՛ս ԲՈՒՍԱՐԿՂ։*

**305. ԾԱՂԿԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ** — ЦВЕТОЧНОЕ ОФОРМЛЕНИЕ *Ծաղկապատ տարածություններ շենքերի և կառույցների առջև, փողոցների մայթերի երկարությամբ, ինչպես նաև պարտեզների և զբոսայգիների առանձին հատվածների կամ էքսպոզիցիաների ձևավորում՝ հատակագծային որոշակի կոմպոզիցիայով։*

**306. ԾԱՂԿԱՅԻՆ ՄԱՐԳԱԳԵՏԻՆ** — ЦВЕТОЧНЫЙ ЛУГ *Բնական, ծաղկավետ ընդարձակ թեքամարգային մարգագետին՝ շրջապատված ծառերով ու թփերով։ Ծառայում է հանգստի, խաղերի, մարզական միջոցառումների և մրցումների համար։ Միջին դարերում նման մարգագետիններում կազմակերպում էին ասպետական մրցաշարեր։*

**307. ԾԱՂԿԱՅԻՆ ՍԻՁԱՄԱՐԳ** — ЦВЕТОЧНЫЙ ГАЗОН *Տե՛ս ՄԱՎՐԻՏԱՆԱԿԱՆ ՍԻՁԱՄԱՐԳ։*

**308. ԾԱՂԿԱՆՈՑ** — ЦВЕТНИК *Զբոսայգու, պարտեզի, պուրակի, փողոցի, գործարանի տարածքի և այլնի ձևավորման ծաղկագեղազարդային տարր։ Ձևավորման միջոցներից են եզրածունները, ծաղկաթմբերը կամ ծաղկային խմբերի ազատ տեղադրումը արահետների ու անտառաեզրերի սիզամարգում։ Ծաղկանոցների համար առանձնացվում է կանաչապատվող տարածության 3—5 %-ը։*

**309. ԾԱՂԿԱՇՂԹԱ** — ГИРЛЯНДА *1. Ծաղիկներից, ճյուղերից հյուսված շղթա, որով հնում պսակում էին հերոսներին, մրցումներում հաղթողներին։ 2. Գեղեցիկ ծաղկող լիաններով (հիմնականում փաթաթվող լիաթերթ վարդերով) հատուկ ձևավորում զբոսայգիներում, պուրակներում, բուլվարներում։ Լիաններր տնկվում են իրարից 2—3 մետր հեռավորության վրա։ Շիվերը ձևավորում են այնպես, որ ստացվեն կիսակլոր ֆիգուրներ, իրար հաջորդող օղակներ։*

**310. ԾԱՂԿԱՍԿԱՀԱԿ** — ЦВЕТОЧНИЦА *Տարբեր նյութերից (փայտ, խեցեղեն, երկաթբետոն) պատրաստված հատուկ ամաններ, որոնցում սածիլվում են ծաղկաբույսեր՝ փողոցներում, շենքերի ներսում կամ սահմանափակ տարածություն ունեցող ձևավորումներում դրվելու համար։*

**311. ԾԱՂԻԿ** — ЦВЕТОК *Սերմնավոր բույսերի օրգան։ Առաջանում է տերևազուրկ ցողունի՝ ծաղկակոթունի վրա։ Պատմականորեն ձևափոխված (կարճացած) ընձյուղ է, որը կրում է սերմնային բազմացման օրգաններ՝ առէջներ և վարսանդներ։ Վերջիններս կարող են ձևափոխվել ծաղկաթերթերի (ռոնչի, կակաչ, սզնի լիաթերթ)։*

**312. ԾԱՂԿԵՓՆՋԱԿԱԼ** — БУТОНЬЕРКА *Հոտավետ բույսերի (մանուշակ, թաղթ, անմոռուկ, երիցուկ) ու մեծ փնջերի ամրացման հարմարանք։ Փնջի հետ ագուցվում է բաճկոնի լամբակին։*

**313. ԾԱՂԿԵՓՈՒՆՋ** — БУКЕТ *Ծաղիկների և տերևազեղազարդային բույսերի գեղեցիկ զուգակցում սկահակներում, ափսեներում, ասեղների վրա։ Տե՛ս նաև՝ ԾԱՂԿԱՀԱՐԴԱՐՈՒՄ։*

**314. ԾԱՂԿՄԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ** — КАЛЕНДАРЬ ЦВЕТЕНИЯ *Կենսաբանական առանձնահատկություններով, ֆենոլոգիայով և տեղանքի կլիմայով պայմանավորված ամբողջ վեգետացիայի ընթացքում, ըստ ամիսների, գեղեցիկ ծաղկող բույսերի ընտրություն։ Կազմվում է կանաչապատման օբյեկտների նախագծման և ծաղկատեսակների ընտրության ժամանակ։ Նպատակ ունի ստեղծել հնարավորին չափ երկար ժամանակահատվածում ծաղկող առանձին կոմպոզիցիաներ։*

**315. ԾԱԾԿԱԾ ԱՐԱՀԵՏ** — КРЫТАЯ ДОРОЖКА *Տե՛ս ԹԱՐՄԱ, ԲԵՐՍՈ։*

**316. ԾԱՆԾԱՂԱՐՄԱՏ ԲՈՒՅՍԵՐ** — МЕЛКОУКОРЕНЯЮЩИЕСЯ РАСТЕНИЯ *Մակերեսային արմատային համակարգ ունեցող բույսեր (եղևնի, կեչի, սոսի և այլն)։*

**317. ԾԱՌ** — ДЕРЕВО *Երկարակյաց բույս։ Բնորոշվում է վեգետատիվ մասերի փայտացմամբ, սաղարթ կրող ծառաբնի, բնափայտի կառուցվածքում երկրորդական կամբիումի առկայությամբ։ Վերջինս ապահովում է բնի աճը լայնքով։ Գագաթնային բողբոջներն անընդհատ աճում են։ Կանաչ շինարարության հիմնական տարրն է։*

**318. ԾԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ** — ДЕНДРОЛОГИЧЕСКИЙ ПРОЕКТ *Ծառաթփային բուսականության նախագծային տեղաբաշխումը կանաչապատվող օբյեկտի հատակագծի վրա։ Նշվում է ծառաթփային բուսականության տեսակաշարը, տեսակների բաշխումը խմբերում, զանգվածներում, մանրապուրակներում։ Առանձնացվում են նաև միզամարգերը, ծաղկանոցները։ Տեսակաշարը նշվում է համարներով կամ պայմանական նշաններով։*

**319. ԾԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ** — ДЕНДРОЛОГИЧЕСКИЙ РАЙОН *Ծառաբույսերի շրջանացման տարրական միավոր։ Բնորոշվում է վայրի ծառաթփային բույսերի նույն տեսակային կազմով, ֆիզիկաաշխարհագրական համանման պայմաններով և նոր բուսատեսակների ներմուծման համար մոտավորապես միատեսակ հնարավորություններով։*

**320. ԾԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄ** — ДЕНДРОЛОГИЧЕСКОЕ РАЙОНИРОВАНИЕ *Երկրագնդի կամ նրա առանձին խոշոր մասերի ստորաբաժանումը բույսերի որոշակի խմբերի աճման ընդհանուր պայմաններ ունեցող ավելի փոքր միավորների՝ մարզերի, պրովինցիաների, օկրուգների, շրջանների։*

**321. ԾԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ** — ДЕНДРОЛОГИЯ *Բուսաբանության բաժին, որն ուսումնասիրում է անտառային կենսաերկրացենոզի մասը հանդի-*

*աճեցող փայտացողուն բույսերը՝ ծառաթփային բուսականությունը, նրա կազմավորման ու զարգացման առանձնահատկությունները, բնական տարածվածությունը, տեղաբաշխվածությունը։*

**322. ԾԱՌԱԲՈՒՆ** — ШТАМБ *Բնի անտերև և ճյուղերից մաքրված մասը՝ արմատավզիկից մինչև սաղարթի առաջին կմախքային ճյուղերը։ Որպես օրենք, ծառաբնային ծառերը ձևավորում են փողոցների, բուլվարների ծառուղիները, օգտագործվում են որպես մենածառեր։*

**323. ԾԱՌԱԹՓԱՅԻՆ ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՈՒՄ** — ОМОЛАЖИВАНИЕ ДРЕВЕСНО-КУСТАРНИКОВЫХ ПОРОД *Խոր էտման եղանակ, երբ հին ճյուղերի փոխարեն խթանվում է երիտասարդ, ուժեղ շիվերի առաջացումը։*

**324. ԾԱՌԱԽՈՒՄԲ** — ДРЕВЕСНАЯ ГРУППА *Տե՛ս* ***ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ԽՈՒՄԲ։***

**325. ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԲՈՒԾԱՐԱՆ** — РАССАДНИК ДРЕВЕСНЫХ ПОРОД *Տե՛ս* ***ԾԱՌԱՏՆԿԱՐԱՆ։***

**326. ԾԱՌԱՏՆԿԱՐԱՆ** — ДРЕВЕСНЫЙ ПИТОМНИК *Տնկանյութի բազմացման և աճեցման հատուկ տնտեսություն։ Ըստ ենթակայության լինում է հանրապետական, քաղաքային, շրջանային, ըստ նպատակային նշանակության՝ գեղազարդային, անտառային, պտղատու, ինչպես նաև առանձին կուլտուրաների (խաղողի, ցիտրուսների և այլն) աճեցման։ Բաժիններն են՝ մայրական կամ դենդրարի, բազմացման (բաց և ծածկած բնահող)՝ ցանքային և պատվաստման բաժանմունքներով, ձևավորման։*

**327. ԾԱՌԱՏՆԿԻՉ ՄԵՔԵՆԱ** — ДЕРЕВОПОСАДОЧНАЯ МАШИНА *Նստաթփեր, պտղատու ծառեր, սերմնարույսեր, տնկաշիվեր ու խաղողի մատեր տնկող մեքենա։ Լինում է միաշարք, երկշարք, կախովի կամ կցովի։ Տնկիների հեռավորությունը շարքերում կարող է տատանվել 0,5—1,5 մ, իսկ միջշարքերինը՝ 1,0—2,5 մ սահմաններում։*

**328. ԾԱՌԵՐԻ ՎԵՐԱՏՆԿՈՒՄ** — ПЕРЕСАДКА ДЕРЕВЬЕВ *Պտղաբուծության և գեղազարդային պարտիզագործության ագրոտեխնիկական միջոցառում։ Ջրոսայգիներ, պարտեզներ, պուրակներ ստեղծելու նպատակով կարճ ժամկետում ծառերը տեղափոխվում են մի տեղից մյուսը։ Կիրառվում է վաղ գարնանը կամ ուշ աշնանը (երբեմն՝ ձմռանը)։ Ծառերը վերատնկում են հողագնդով կամ առանց դրա։ Հիմնականում կատարվում է բույսերի աճման վաղ շրջանում (սովորաբար 4—5 տարեկան)։ Հասուն ծառերի տեղափոխում հազվադեպ է կատարվում։*

**329. ԾԱՌԵՐԻ ԵՎ ԹՓԵՐԻ ՏՆԿՈՒՄՆԵՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ** — ГУСТОТА ПОСАДОК ДЕРЕВЬЕВ И КУСТАРНИКОВ *Մեկ հա կանաչապատվող տարածքի բույսերի քանակը բնութագրող ցուցանիշ։ Կախված է տեղանքի բնակլիմայական պայմաններից։*

**330. ԾԱՌԻ ՍԱՂԱՐԹ** — КРОНА ДЕРЕВА *Ծառի այն հատվածը, որը բունը շարունակում է առաջին ճյուղավորումից մինչև գագաթը, ընդգրկելով*

բոլոր կողային ճյուղավորումները և տերևները։ Ըստ ձևի լինում է սյունաձև, ճյուղատարած, հովանոցաձև, վարսավոր և այլն, ըստ խտության՝ ցանցկեն, նոսր, խիտ, գերխիտ և այլն։

**331. ԾԱՌԻԿ — ДЕРЕВЦО** *Մինչև 7 մ բարձրության հասնող միաբուն կամ բազմաբուն, ոչ մեծ ծառ (նշենի, դժնիկ, սզնենի, տանձենու որոշ տեսակներ)։*

**332. ԾԱՌՈՒՂԻ — АЛЛЕЯ** *Իրարից հավասար հեռավորությամբ տընկված ծառերով ու թփերով եզրավորված հետիոտնի կամ տրանսպորտային ճանապարհ։*

**333. ԾԱՌՈՒՏ — ДРЕВОСТОЙ** *Անտառում բնականորեն աճող ծառերի ամբողջությունը։*

**334. ԾԵՐԱՏՈՒՄ — КИЛЬЧЕВАНИЕ** *Տնկարաններում ծառային սերմնաբույսերի արմատիկների հատումը ծլման փուլում։ Նպատակ ունի խթանել արմատագոյացումը։ Գեղազարդային նպատակներով հաճախ ծերատում են նաև սերմնաբույսերի գագաթնային հատվածը։*

**335. ԾԻԼ — ПРОРОСТОК** *Սերմերի ծլումից առաջացած մատղաշ բույս։*

## Կ

**336. ԿԱԴԱՍՏՐ — КАДАСТР** *Տվյալների դասակարգված ժողովածու։ Ընդգրկում է օբյեկտների կամ երևույթների որակական ու քանակական նկարագրությունը՝ որոշ դեպքերում դրանց տնտեսական (էկոլոգիատնտեսական) գնահատականով։ Պարունակում է ֆիզիկաաշխարհագրական բնութագիր, դասակարգում, դինամիկայի, ուսումնասիրվածության աստիճանի և վերը նշված գնահատականի մասին ցուցանիշներ, կից ներկայացվող քարտեզագրական և վիճակագրական տվյալներ։ Կարող է ընդգրկել օբյեկտների կամ երևույթների օգտագործման, դրանց պահպանության միջոցների և այլնի վերաբերյալ տվյալներ։ Լինում են ջրային (տվյալներ գետակների, գետերի, ծովերի, լճերի, ճահիճների, սառցադաշտերի և ստորգետնյա ջրերի մասին), դետերիորացիոն (կենսամիջավայրի՝ օդի, ջրերի, հողերի և այլնի, աղտոտման մասին տվյալներ), հողային (տնտեսական օգտագործման համար պիտանի և ոչ պիտանի կամ միայն մշակելի հողերի մասին տվյալներ), լանդշաֆտային, անտառային, բժշկաաշխարհագրական (շրջապատող բնական միջավայրի ազդեցությունը մարդու վրա), հատուկ պահպանվող բնական օբյեկտների և տարածքների, արդյունագործական (ձկնային ռեսուրսների, որսորդաարդյունագործական, սպորտաորսորդական), հանգստյան (ռեկրեացիոն՝ հանգստի ռեսուրսներ) և հատուկ՝ ավելի մասնավոր (էմիսիոն՝ վնասակար ցնդող նյութերի ստացման և առկայության, աղմուկի և այլնի) կադաստրներ։*

**337. ԿԱՂՆՈՒՏ — ДУБРАВА** *Սերմնային բարձրաբուն, մեզոֆիլ և ընձյուղային ծագման ցածրաբուն կաղնու անտառ։*

**338. ԿԱՄԱՐ** — АРКА *Կամարակերպ կառուցվածք պարտեզապուրակային ճարտարապետության մեջ (փաթաթվող բույսերով պատված քարե, երկաթե, փայտե կամար)։*

**339. ԿԱՄԲԻՈՒՄ** — КАМБИЙ *Երկրորդային գոյացնող հյուսվածք՝ երկշաքիլավորների և փշատերև բույսերի բնափայտի ու լուբի միջև։*

**340. ԿԱՆԱՉ ԳՈՏԻ** — ЗЕЛЕНАЯ ЗОНА *Տնկարկների լայն գոտի (ՍՍՀՄ-ում մինչև 50 կմ լայնությամբ) բնակավայրերի և արդյունաբերական ձեռնարկությունների շուրջը։ Ունի սանիտարահիգիենիկ նշանակություն։ Այն մեղմում է շոգը, պայքարում քամիների, փոշու, աղմուկի, ծխի, գազերի, մրի դեմ, առատ թթվածին մատակարարում, ծառայում բնակիչների լիարժեք հանգստին։*

**341. ԿԱՆԱՉ ԹԱՏՐՈՆ** — ЗЕЛЕНЫЙ ТЕАТР *Բացօթյա ներկայացումների համար նախատեսված կառույց։ Ստեղծվում է զբոսայգիներում և պարտեզներում՝ տեղանքի բնական ռելիեֆի օգտագործմամբ։ Որպես պատեր օգտագործվում են կենդանի ցանկապատեր կամ հատուկ հենակների ու հենքերի վրա փաթաթվող լիաններ։*

**342. ԿԱՆԱՉ ՇԻԹԻԼՈՒՄ** — ЗЕЛЕНАЯ ПИКИРОВКА *Սածիլում գլխավոր արմատի ծերատումով։*

**343. ԿԱՆԱՉ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐ** — ИНЖЕНЕР ЗЕЛЕНОГО СТРОИТЕЛЬСТВА *Կանաչ շինարարության ասպարեզի բարձրագույն որակավորման մասնագետ։ Նախագծում և իրագործում է կանաչապատման օբյեկտների շինարարությունը, ծառային և ծաղկային տնկանյութի աճեցումը։*

**344. ԿԱՆԱՉ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ** — РЕКОНСТРУКЦИЯ ОБЪЕКТОВ ЗЕЛЕНОГО СТРОИТЕЛЬСТВА *Զբոսայգու, պարտեզի, պուրակի, բնակելի շրջանի կանաչապատման վերակառուցման կոմպլեքս միջոցառում։ Կատարվում է տնկարկների փոխարինում, ծառուղակածանային ցանցի մասնակի փոփոխում, առանձին կոմպոզիցիոն խմբերի վերապլանավորման նախագծային առաջարկությունների մշակում և, վերջապես, պատմական զբոսայգու կամ պարտեզի տեսքը պահպանված տարրերով կամ նկարագրություններով, փորագրանկարներով և այլնով վերականգնում։*

**345. ԿԱՆԱՉ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** — ЗЕЛЕНОЕ СТРОИТЕЛЬСТВО *Ժողովրդական տնտեսության ճյուղ, քաղաքաշինության կարևոր բաժին։ Ընդգրկում է կանաչապատման տարրերի տիպերի ու կատեգորիաների ստեղծման համակարգը։ Նպատակ ունի բնական միջավայրը մոտեցնել մարդուն։ Կանաչ շինարարության խնդիրներն են՝ քաղաքային միջավայրի սանիտարահիգիենիկ մակարդակի բարձրացումը, քաղաքի, բնակավայրի, ամբողջ լանդշաֆտի գեղագիտական տեսքի հարստացումը, աշխատավորների աշխատանքի, կենցաղի և հանգստի համար հարմարավետ պայմանների ստեղ-*

*ծումը, արդյունաբերության անբարենպաստ ազդեցությունից շրջապատող միջավայրի պաշտպանումը, օդի ջերմաստիճանի կարգավորումը։*

**346.** ԿԱՆԱՉ ՊԱՏ — ЗЕЛЕНАЯ СТЕНА *Խիտ տնկված ծառերից ու թփերից ստեղծված հատուկ կառուցվածք, որը պարսպում է զբոսայգու, պարտեզի, տնտեսության մի հատվածը, առաջացնելով խիտ, անանցանելի պատ (տե՛ս նաև՝ ԿԵՆԴԱՆԻ ՑԱՆԿԱՊԱՏ)։*

**347.** ԿԱՆԱՉ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ — ЗЕЛЕНОЕ УДОБРЕНИЕ *Պարարտացման հատուկ ձև։ Պարարտացվող հողամասում աճեցվում են տերևացողունային հարուստ զանգվածով թիթեռնածաղկավոր բույսեր (մաշ, շամբալա)։ Ծաղկման շրջանում հողը հերկելով, բույսերը վարելաշերտի տակ են տալիս, որտեղ դրանք քայքայվելով հողը հարստացնում են օրգանական նյութերով և ազոտով։*

**348.** ԿԱՆԱՉ ՏՆԿԱՐԿՆԵՐ — ЗЕЛЕНЫЕ НАСАЖДЕНИЯ *Բույսերի տիպերի և կատեգորիաների կանաչապատ տարածություններ։ Ստեղծվում են գեղագիտական կամ սանիտարահիգիենիկ, կլիմայակարգավորիչ նպատակներով։*

**349.** ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՅՑ — КАЛЕНДАРЬ ОЗЕЛЕНИТЕЛЬНЫХ РАБОТ *Գեղազարդային բույսերը տնկելու և խնամելու աշխատանքները ըստ տարվա եղանակների, բույսերի կենսաբանական առանձնահատկությունների և տեղանքի կլիմայական պայմանների բաշխելու ժամկետացանկ, պլան։*

**350.** ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԵՂԱՆԱԿ — ПРИЕМ ОЗЕЛЕНЕНИЯ *Կանաչապատման-ձևավորման համակարգ։ Ընդգրկում է հատակագծային (լանդշաֆտային կոմպոզիցիա, կանոնավոր և ազատ հատակագծում) և ագրոտեխնիկական (ծառերի, թփերի, ծաղկաբույսերի տնկման, դրանց խնամքի, սիզամարգի ստեղծման տեխնոլոգիական կանոններ) եղանակներ։*

**351.** ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱ — КАТЕГОРИЯ ОЗЕЛЕНЕНИЯ *Գործառական կարևոր նշանակություն ունեցող խոշորամասշտաբ տնկարկ (զբոսայգի, պուրակ, անտառապուրակ, անտառայգի, պաշտպանիչ կանաչ գոտի, բուսաբանական այգի, կենդանաբանական այգի, հատուկ նշանակության տնկարկներ և այլն)։*

**352.** ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ — СИСТЕМА ОЗЕЛЕНЕНИЯ *Ընդհանուր հատակագծային կառուցվածքին ու բնակչության կուլտուր-կենցաղային սպասարկման համակարգին ներդաշնակ կանաչապատման օբյեկտների կազմակերպված, փոխկապված տեղադրում բնակավայրի և քաղաքամերձ գոտու տարածքում։ Այդ համակարգի ստեղծման և ձևավորման հիմնական սկզբունքներն են՝ կանաչապատման օբյեկտների տեղադրման համաչափությունը և հավասարամատչելիությունը, տնկարկների անընդհատությունը և փոխկապվածությունը։*

**353.** ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՆՈՐՄԱ — НОРМА ОЗЕЛЕНЕНИЯ *Բնակչության մեկ շնչին բաժին ընկնող կանաչապատ տարածքի նվազագույն*

քանակը՝ արտահայտված մետրերով (500 հազարից ավելի բնակիչ ունեցող քաղաքի համար այն կազմում է 21 մ$^{2}$, 250—500 հազար բնակիչ ունեցող քաղաքի համար՝ 14 մ$^{2}$, մինչև 30 հազար բնակիչ ունեցող բնակավայրերի համար՝ 12 մ$^{2}$)։

354. ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՏԱՐՐ — ЭЛЕМЕНТ ОЗЕЛЕНЕНИЯ *Տարրեր հողամասերի ձևավորման համար օգտագործվող ծառեր, թփեր, լիաններ (տնկված առանձին-առանձին, խմբերով, զանգվածներով, շարքերով), ծաղկանոցներ, սիզամարգեր, զանազան խոտաբույսերի խմբավորումներ, քարաբլրակներ, ինչպես նաև տեղափոխելի սկահակներում, բուսարկղերում, ծաղկամաններում, արկղերում տնկված ջերմոցային բույսեր։*

355. ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՏԻՊ — ТИП ОЗЕЛЕНЕНИЯ *Կանաչ տնկարկների բաղադրիչ մաս՝ զանգված, խումբ, մենածառ, ծառուղի, կենդանի ցանկապատ, եզրաշերտ, ուղղաձիգ կանաչապատման տնկարկ, ալպինարիում, քարապարտեզ, երկարածաղկուն և մշտածաղկուն պարտեզներ, միակուլտուրային հողամաս և այլն։*

356. ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՏՆԿԱԳԾԱԳԻՐ — ПОСАДОЧНЫЙ ЧЕРТЕЖ ОЗЕЛЕНЕНИЯ *Կանաչապատման օբյեկտի աշխատանքային գծագիր։ Սովորաբար կազմված է լինում 1:500, 1:250 մասշտաբով և նախատեսված է տնկման վայրերը ծառեր, թփեր, ծաղկաբույսեր տեղափոխելու համար։ Նրա ցուցակում նշված են լինում փոսերի, խրամատների կտրվածքները, արմատամերձ գուղձի և տնկատեղերի չափերը։*

357. ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՕԲՅԵԿՏ — ОБЪЕКТ ОЗЕЛЕНЕНИЯ *Որոշակի հատակագծային համակարգով կազմակերպված տարածք (պուրակ, պարտեզ, զբոսայգի և այլն)։ Կանաչապատման համակարգի հիմնական կառուցվածքային տարրն է։*

358. ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ ԲԱԺԱՆԻՉ ԳԾԱԳԻՐ — РАЗБИВОЧНЫЙ ЧЕРТЕЖ ПЛАНИРОВКИ ОБЪЕКТА ОЗЕЛЕНЕНИЯ *1:500 մասշտաբի, այդ թվում նաև առանձին մանրամասերը 1:10, 1:20, 1:50 մասշտաբի աշխատանքային գծագիր։ Համաձայնեցված է քաղաքային գծերի հետ և նշում է հատակագծման բոլոր տարրերի չափերը։ Վերջիններս բաժանիչ գծագրից գեոդեզիական մեթոդների օգնությամբ տեղափոխվում են բնական միջավայր։ Բաժանիչ գծագրի վրա տրվում է տարածքի հաշվեկշիռը, ճեմուղիների, հրապարակների կառուցվածքը, ճանապարհների լայնակի կտրվածքը։*

359. ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ — ВОДОСНАБЖЕНИЕ ОБЪЕКТА ОЗЕЛЕНЕНИЯ *Տնկարկների ոռոգման, տնտեսական նպատակներով ջրամբարի լցման, ինչպես նաև այցելուներին խմելու ջրով ապահովելու համար ջրատարի շինարարական աշխատանքներ։*

360. ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՏԱՐԱԾՔ — ТЕРРИТОРИЯ ОБЪЕКТА ОЗЕЛЕНЕНИЯ *Կարմիր գծերի սահմաններում տվյալ օբյեկտի հատակագծային տարրերն ընդգրկող տարածք։ Օրինակ, գյուղատնտեսական*

*հողհանդակներով սահմանափակված անտառապուրակ, փողոցներով սահմանափակված պուրակ և այլն։*

*361.* **ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԶՈՆԱՅԱՎՈՐՈՒՄ** — ЗОНИРОВАНИЕ (ФУНКЦИОНАЛЬНОЕ) ТЕРРИТОРИИ ОБЪЕКТА ОЗЕЛЕНЕНИЯ *Գործառական տարբեր նշանակության տեղամասերի կամ զոնաների առանձնացում նախագծման ընթացքում։ Օրինակ, հանդիսավոր միջոցառումների, սպորտի, զբոսանքի կամ խաղաղ հանգստի զոնաների առանձնացում՝ ավելի նպատակահարմար հատակագծման համար։*

*362.* **ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ** — БАЛАНС ТЕРРИТОРИИ ОБЪЕКТА ОЗЕЛЕНЕНИЯ *Տնկարկների, ծառուղիների, ճանապարհների, հրապարակների, շենքերի, կառույցների, ջրամբարների հատակագծային տարրերի մակերեսների քանակական հարաբերակցությունը։ Արտահայտվում է բացարձակ (մ$^2$, հա) և հարաբերական (%) մեծություններով։*

*363.* **ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՈՒՂՂԱՁԻԳ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ** — ВЕРТИКАЛЬНАЯ ПЛАНИРОВКА ОБЪЕКТОВ ОЗЕЛЕНЕНИЯ *Կոմպոզիցիոն նպատակներով ռելիեֆի ձևափոխման ու հարմարեցման, տարածքի մակերեսային հոսքի կազմակերպման, գոյություն ունեցող արժեքավոր բուսականության և հողածածկի պահպանման նպատակով կիրառվող կոմպլեքս միջոցառումներ։ Դրանց թվին են պատկանում սանդղափուլերի, աստիճանների, հենարանային պատերի ստեղծումը, հեղեղատների լցումը, ջրամբարների փոսերի փորումը։*

*364.* **ԿԱՆԱՉԱՊԱՏՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՑԱՄԱՔԵՑՄԱՆ ՆՈՐՄԱ** — НОРМА ОСУШЕНИЯ ОЗЕЛЕНЕННОЙ ТЕРРИТОРИИ *Գրունտային ջրերի մակարդակի իջեցումը մինչև տնկարկների նորմալ աճի համար անհրաժեշտ խորությունը (սովորաբար մինչև 1,5 մետր)։*

*365.* **ԿԱՆԱՉԱՊԱՏՎՈՂ ՏԱՐԱԾՔ** — ОЗЕЛЕНЯЕМАЯ ТЕРРИТОРИЯ *Տնկարկներով՝ ծառերով, թփերով, սիզամարգով, ծաղկանոցներով զբաղեցված տարածությունը։ Այս կատեգորիայի մեջ չեն մտնում ճեմուղիների, հրապարակների, կառույցների զբաղեցրած տարածքները։*

*366.* **ԿԱՆԱՉԱՊԱՏՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՈՌՈԳՈՒՄ** — ОРОШЕНИЕ ОЗЕЛЕНЯЕМОЙ ТЕРРИТОРИИ *Չորային պայմաններում բույսերի կենսագործունեության ապահովմանը նպատակաուղղված միջոցառումների կոմպլեքս։*

*367.* **ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ** — ОЗЕЛЕНЕНИЕ *Տե՛ս* ***ԿԱՆԱՉ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ։***

*368.* **ԿԱՆՈՆԱՎՈՐ ՊԱՐՏԵԶ** — РЕГУЛЯРНЫЙ САД *Կանոնավոր ոճի պարտեզ։ Նրանում բույսերը, կածանները, ջրամբարները, ծաղկաթմբերը և այլ տարրերը տեղադրված են զուգաչափորեն։*

*369.* **ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ** — РЕГУЛЯРНАЯ ПЛАНИРОВКА *Պարտեզապուրակային արվեստի ոճ։ Սկզբնավորվել է հնագույն ժամա-*

նակներում (Բաբելոն) և լայն տարածում ստացել Իտալիայի և Ֆրանսիայի XVI—XVIII դարերի պարտեզներում։ Աչքի է ընկնում երկրաչափական ճիշտ ուրվագծերի օգտագործմամբ՝ ծառուղիների, ճանապարհների ուղիղ գծերով, զուգաչափ կոմպոզիցիաներով, բույսերի շարային տնկարկներով, ճարտարապետական մանր ձևերի, ջրային տարածությունների առկայությամբ։ Բույսերը դիտվում են որպես խիստ որոշակի արտաքին ձև և դասավորություն ունեցող շինանյութ։

**370. ԿԱՇՊՈ — КАШПО** Խեցեղեն, պլաստմասսայից, փայտից գեղազարդային արկղ, սափոր։ Նախատեսված է մեջը ծաղկամաններ տեղադրելու համար։ Ձևավորելու, զարդարելու նպատակով դրվում է ինչպես շենքի ներսում, այնպես էլ բաց օդում, պատշգամբում։

**371. ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԶՈՆԱ — ЗОНА ТЯГОТЕНИЯ** Քաղաքային կամ ավանային կառուցապատման հատված, որի բնակչությունը կապված է շրջակա աշխատավայրերի, հասարակական կենտրոնների, հանգստավայրերի (անտառապուրակներ, զբոսայգիներ, պարտեզներ) հետ։ Հաշվի է առնվում կանաչապատման օբյեկտների ծավալների հաշվարկման ժամանակ։

**372. ԿԱՎ — ГЛИНА** Կապված, չցեմենտացած նստվածքային լեռնային ապար։ Կազմված է 0,01 մմ-ից փոքր տրամագիծ ունեցող մասնիկներից։ Ստորաբաժանվում է թեթև (40—60-ից մինչև 50—70%), միջին (50—75-ից մինչև 65—85%) և ծանր (65—85%-ից ավելի) կավերի։

**373. ԿԱՎԱՎԱԶ — СУГЛИНОК** Ցամաքային փուխր նստվածք։ Կազմված է 0,01 մմ-ից փոքր մասնիկներից (30—50%) և 0,01-ից խոշոր բեկորային նյութից (70—50%)։

**374. ԿԱՏԵԳՈՐԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ — КАТЕГОРИЙНОСТЬ** Զբոսայգու կոմպոզիցիայի ընդհանուր համակարգում աչքի ընկնող, իշխող տարր։ Ինչպես սիմֆոնիկ նվագախմբում երաժշտության ընդհանուր տոն տվողը մի որևէ գործիք է, այնպես էլ զբոսայգու կոմպոզիցիայում առանձնացվում է այն տարրը (տնկարկներ, խմբեր, ճարտարապետական կառույցներ, ծաղկանոց-պարտեզներ և այլն), որը ամենից ավելի է աչքի ընկնում, իշխող է։ Կատեգորիականության գործոնը վերաբերում է նաև զբոսայգու կոմպոզիցիայի գունեղությանը։ Իշխող գունավորումը պետք է որոշակիորեն աչքի ընկնի այն ժամանակ, երբ մյուս գույները նպաստում են դրան։ Եթե այցելուն առաջին իսկ հայացքից չկարողանա որոշել զբոսայգու կոմպոզիցիայի ամենակարևոր տարրը, ապա նշանակում է, որ նրա կատեգորիականությունը անորոշ է։

**375. ԿԱՐՃՕՐՅԱ ԲՈՒՅՍԵՐ — КОРОТКОДНЕВНЫЕ РАСТЕНИЯ** Աճի ու զարգացման համար կարճ լուսային օր պահանջող (առավելապես հարավային լայնությունների) բույսեր։

**376. ԿԱՐՄԻՐ ԳԻԾ — КРАСНАЯ ЛИНИЯ** Կառուցապատման ու փողոցի (կամ մայրուղու), ինչպես նաև կառուցապատման ու կանաչապատման օբյեկտի տարածքի բաժանման և սահմանազատման գիծ։ Կանաչապատման օբյեկտների նախագծման համար ունի կարգավորող նշանակություն։

377. ԿԱՈՒԼԻՖԼՈՐԻԱ — КАУЛИФЛОРИЯ Ստորի բնի քնած բողբոջներից ծաղիկներ առաջացնելու՝ բույսերի կենսաբանական ունակությունը։ Հատուկ է արևադարձային ծառաբուսականությանը (կակաոյի ծառ, Հուդայածառ, արթոկարպուս)։

378. ԿԵԳԼԱԴԱՇՏ — БОУЛИНГРИН Սպորտային տիպի հատուկ սիզամարգ կեգլախաղի համար։ Կենտրոնական մասը տափակ փոսորակի տեսք ունի։ Օգտագործվում է զբոսայգիների ու պարտեզների ընդարձակությունը ընդգծելու համար։

379. ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ — ЗООЛОГИЧЕСКИЙ САД Հատուկ այգի, որտեղ կենտրոնացված են կենդանական աշխարհի տեղական և ներմուծված ներկայացուցիչներ։ Հաշվի առնելով կենդանիների կենսաէկոլոգիական առանձնահատկությունները և այգու ծանրաբեռնվածությունը այցելուներով, ձևավորվում է կանոնավոր կամ լանդշաֆտային հատակագծմամբ։

380. ԿԵՆԴԱՆԻ ԱՆԿՅՈՒՆ — ЗООУГОЛОК Զբոսայգիների, անտառապուրակների հատակագծում՝ կենդանիներ պահելու համար նախատեսված ցանկապատված տարածություն։

381. ԿԵՆԴԱՆԻ ՑԱՆԿԱՊԱՏ — ЖИВАЯ ИЗГОРОДЬ Ձևավորվող և ազատ աճող ծառերից կամ թփերից (երբեմն՝ դրանց զուգակցումից) կազմված հոծ, անանցանելի տնկարկ։ Սովորաբար խուզման միջոցով դրան տրվում է կանաչ պատի ձև։ Կենդանի ցանկապատերի համար օգտագործվում են լավ խուզվող բույսեր (սզնի, գլեդիչիա, չմենի, կենսածառ արևելյան, կիպրոս և այլն), ինչպես նաև լիաններ (կուսախաղող, կուլտուրական խաղող, մամրիչ և այլն)։

382. ԿԵՆԿՈՆԵ — КЕНКОНЕ Հնգյակներով ծառերի տնկման եղանակ։ Իրար մոտեցված շարքերով և մի գծով սաղարթը խուզված, ներքեում բաց բներով տնկում, որը առաջացնում է մեկ ծավալ և ապահովում է անկյունագծային ուղղություններով բների միջև տեսանելիություն։ Այս եղանակը օգտագործվել է Հին Հռոմի պարտեզների ձևավորման ժամանակ։

383. ԿԵՆՍԱԶԱՆԳՎԱԾ — БИОМАССА Տարածության միավորին բաժին ընկնող այս կամ այն բույսերի (տեսակ, տեսակների խումբ, ամբողջ համակեցություն) զանգվածի կենդանի նյութի քանակը՝ արտահայտված կշռի միավորներով։

384. ԿԵՆՍԱՁԵՎ — ЖИЗНЕННАЯ ФОРМА Որոշակի էկոլոգիական պայմաններին օրգանիզմների հարմարվածության ձև։ Նույն կենսաձևին պատկանող տեսակները ունեն օրգանների կառուցվածքի, էկոլոգիայի և այլնի միանման յուրահատկություններ։ Նույն կենսաձևին կարող են պատկանել նման պայմաններում աճող, բայց կարգաբանական տարբեր խմբերի բույսերը, օրինակ՝ էֆեմերները, չորաբույսերը, ֆաներոֆիտները։

385. ԿԻՍԱԹՓԻԿ — ПОЛУКУСТАРНИЧЕК Մինչև մեկ մետր բարձ-

ության բազմամյա բույս, որի ամենամյա աճի ցողունների մի մասը ամեն տարի մահանում է։

**386. ԿԻՍԱԹՈՒՓ** — ПОЛУКУСТАРНИК *Մեկ մետրից ավելի բարձրությամբ բազմամյա ծառանման բույս, որի ընձյուղների միայն ստորին մասերն են փայտանում, իսկ վերին մասերը ամեն տարի մահանում են։*

**387. ԿԻՍԱՄԱԿԱԲՈՒՅՍՆԵՐ** — ЭПИФИТЫ *Բույսեր, որոնք ապրում են այլ բույսերի՝ գլխավորապես ծառերի հաստ ճյուղերի խիչակներում և ների վրա։ Ունեն ասիմիլյացիոն մակերես, սակայն ձևափոխված ծծիչ արմատները այլ բույսերից ջուր և նրա մեջ լուծված հանքային աղեր են վերցնում։ Բնորոշ են արևադարձային և մերձարևադարձային մարզերին։ Դրանց նշանակալից մասը կարող է օգտագործվել ձմեռային պարտեզներ ստեղծելիս և որպես ամպելային բույսեր (ծարխոտեր, խոլորձներ և այլն)։*

**388. ԿԼԻՄԱՅԱՎԱՐԺՈՒՄ** — АККЛИМАТИЗАЦИЯ *Մարդու օգտակար բուսատեսակներով բնական համակեցություններ հարստացնելու նպատակով նախկինում այդտեղ չաճող որևէ բույսի կանխամտածված ներմուծում, և գոյության նոր պայմաններին այդ բուսատեսակների հարմարվելը։*

**389. ԿԼՈՆ** — КЛОН *Մեկ բույսից վեգետատիվ եղանակով բազմացված (տնկաշիվերով, պալարներով, սոխուկներով, անդալիսներով) առանձնյակներ, որոնք ճշտորեն կրկնում են ելանմուշի հատկանիշները։*

**390. ԿԼՈՆԱՅԻՆ ՍՈՐՏԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ** — КЛОНОВОЕ СОРТОВОДСТВО *Ընտրության և խաչասերման միջոցով արժեքավոր ձևերի ստացում և դրանց լավագույն օրինակների հետագա վեգետատիվ բազմացում (եղրևանի, արնգենի, բարդիներ)։*

**391. ԿՂԶԻ** — ОСТРОВ *Հողային կամ քարային փոքր չափերի բնական կամ արհեստական կառուցվածք ջրամբարում։ Կենդանացնում է զբոսայգու բնապատկերը, ստեղծում է բազմազան հեռապատկերներ։*

**392. «ԿՂԶԻ»** — «ОСТРОВ» *Մեկուսացած և հայեցողական հանգստի, մտորումների համար նախատեսված վայր զբոսայգում։ Հատկապես ժողովրդականություն վայելող ձև էր XIX դարի ռոմանտիկ զբոսայգիներում։*

**393. ԿՈԹՈՂ** — ОБЕЛИСК *Ուղղանկյուն, քառանիստ, բազմանիստ, կլոր, սովորաբար միաձույլ քարե սյուն կամ տախտակ, որն ունի հիմնականում հուշանշանակություն։ Բնորոշ է եղել Հին Եգիպտոսի, Ուրարտուի ճարտարապետությանը։ Օգտագործվում է, որպես զբոսայգու կոմպոզիցիայի գեղազարդային տարր՝ այս կամ այն կարևոր իրադարձությունը նշանավորող հուշարձան։*

**394. ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ** — ОРИЕНТАЦИЯ *Հատակագծային տարրերի տեղաբաշխումը ըստ աշխարհի կողմերի՝ հյուսիս-հարավի և արևելք-արևմուտքի նկատմամբ դրանց ունեցած տեղադիրքի։ Կարևոր նշանակություն ունի փողոցների նախագծման, ինչպես նաև տնկարաններում, ջերմոցներում և ջերմատներում տնկանյութի աճեցման համար։*

**395.** ԿՈՃՂԱՐՄԱՏ — КОРНЕВИЩЕ *Բազմամյա խոտաբույսերի ստորգետնյա ընձյուղ։ Ծառայում է բույսի վեգետատիվ բազմացման համար։ Երբեմն ունենում է զգալի երկարություն։ Նպաստում է նաև բույսի՝ հողին ամրանալուն։ Արմատից տարբերվում է հորիզոնական դիրքով, ծայրապատյանի բացակայությամբ և թեփուկանման չզարգացած տերևների առկայությամբ, որոնց ծոցերում ստորգետնյա նոր ընձյուղների բողբոջներ են առաջանում։*

**396.** ԿՈՄՊԱՐՏԻՄԵՆՏ — КОМПАРТИМЕНТ *XVII—XVIII դարերի պարտեզապուրակային կոմպոզիցիա, որի մասերից ստեղծվում էր ամբողջ անսամբլը։ Օրինակ, պարտերային կոմպարտիմենտը կազմված է 6 նույնատիպ ծաղկագորգերից, որոնք զուգաչափորեն տեղադրված են արձանի կամ ջրավազանի շուրջը։*

**397.** ԿՈՄՊՈԶԻՑԻԱ ՊԱՐՏԵԶԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ — КОМПОЗИЦИЯ В САДОВО-ПАРКОВОМ ИСКУССТВЕ *Պարտեզի, զբոսայգու կամ ամբողջ տարածքի առանձին բնապատկերի ստեղծումը որոշակի գեղարվեստական համակարգով, որն ապահովվում է բաղադրիչ մասերի (տնկարկներ, ռելիեֆ, ջրային մակերեսներ), փոխադարձ կապը, պայմանավորում է կանաչապատման օբյեկտի հիմնական մտահղացումը և դերը։ Օգտագործվում են կոմպոզիցիայի բազմազան միջոցներ և եղանակներ (գլխավորի և երկրորդականի առանձնացում, մասշտաբայնություն և համաչափություն, համամասնություն, ռիթմ և տպավորությունների հերթափոխում, զուգաչափություն և անզուգաչափություն, ցայտերանկություն և նմանություն, կողմնորոշում, լույս և գույն, նյութի ֆակտուրա և այլն)։*

**398.** ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅԻ ԱՌԱՆՑՔ — ОСЬ КОМПОЗИЦИИ *Կանաչ զանգվածի ճարտարապետական անսամբլի հիմնական ուղղությունը։ Տարբերում են կոմպոզիցիոն գլխավոր և երկրորդական առանցքներ։ Կանոնավոր ոճի դեպքում կոմպոզիցիոն առանցքները երկրաչափական կանոնավոր գծեր են։ Լանդշաֆտային ոճի դեպքում դրանք ուղիղ գծեր չեն, այլ բնական կոմպլեքսի կարևորագույն տարրերն են։*

**399.** ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ — ЦЕНТР КОМПОЗИЦИИ *Զբոսայգու յուրաքանչյուր կոմպոզիցիայի գլխավոր տարր։ Կանոնավոր ոճի դեպքում կոմպոզիցիայի կենտրոն կարող է լինել հրապարակը, շատրվանը, ճարտարապետական կառույցը, ծաղկանոցը, լճակը և այլն։ Լանդշաֆտային ոճի դեպքում կոմպոզիցիոն կենտրոն կարող է լինել բնության աչքի ընկնող, գեղեցկագույն տարրը՝ ջրային տարածությունը, բլրակը, մակրոլանդշաֆտի հեռավոր տեսարանները, որոշ դեպքերում՝ նաև արհեստական կառույցները։ Զբոսայգու կոմպլեքսում կարող են լինել կոմպոզիցիոն մի քանի կենտրոններ։*

**400.** ԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ ՀԱՆԳՈՒՅՑ — КОМПОЗИЦИОННЫЙ УЗЕЛ *Պարտեզի կամ զբոսայգու հատված կամ մաս, որը մեկ ամբողջության մեջ է միավորում ու կապում մի քանի հատվածներ կամ մասեր՝ դրանցով կազ-*

մեկով միասնական կոմպոզիցիա։ Օրինակ, բացատ, որը միավորում է բնապատկերի առանձին տեսարաններ։

**401. ԿՈՄՊՈՍՏ (խառնաղբ) — КОМПОСТ** *Միկրոօրգանիզմների կենսագործունեության հետևանքով զանազան օրգանական նյութերի քայքայումից առաջացող պարարտանյութ։*

**402. ԿՈՆԻՖԵՐԵՏՈՒՄ — КОНИФЕРЕТУМ** *Փշատերև բույսերով ձևավորված հողամաս։*

**403. ԿՎԱԼԻՄԵՏՐԻԱ — КВАЛИМЕТРИЯ** *Գիտություն՝ առարկայի որակի քանակական գնահատման մասին։ Օրինակ, տնկարկների, նախագծման տարբերակների, իրավիճակի գնահատման կվալիմետրիա և այլն։*

**404. ԿՏՐՈՆԱՊԱՏՎԱՍՏ — ПРИВИВКА ЧЕРЕНКОМ** *Պատվաստի տարածված եղանակ։ Պատվաստացուն կտրոնի ձևով անջատվում է մայրական բույսից։ Տարբերում են հասարակ և լեզվակավոր կտրոնապատվաստներ։ Հասարակի դեպքում պատվաստակալը և պատվաստացուն թեք կտրում են և հպելով մեկը մյուսին՝ կապում։ Լեզվակավոր կտրոնապատվաստի դեպքում պատվաստակալի և պատվաստացուի թեք կտրվածքի վրա լրացուցիչ ելուստ և ճեղք են պատրաստում, որոնք համապատասխանում են իրար, և հպելիս պատվաստացուն ամուր միանում է պատվաստակալին։ Դրանով սերտաճումը ավելի լավ է կատարվում։ Գարնանային կտրոնապատվաստը կատարվում է մինչև բողբոջների բացվելը։*

**405. ԿՏՐՈՆԱՎՈՐՈՒՄ — ЧЕРЕНКОВАНИЕ** *Գեղազարդային բույսերի բազմացման վեգետատիվ եղանակ, երբ օգտագործում են ցողունի որոշ հատվածները կամ շիվերը, արմատային ու բնային մացառները։ Գեղազարդային բույսերի պարտեզային ձևերի արժեքավոր հատկանիշները պահպանելու հուսալի մեթոդ է։ Օգտագործվում են ինչպես կանաչ (ամառային), այնպես էլ հասունացած (ձմեռային) կտրոնները։*

**406. ԿՐԱՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ — ИЗВЕСТКОВАНИЕ** *Անիոններով աղքատ (թթու ռեակցիայով) հողերի ավելորդ թթվայնությունը վերացնելու նպատակով հողի մեջ կիր ավելացնելը։ Հայկական ՍՍՀ-ում չի կիրառվում, քանի որ հանրապետության հողերը հիմնականում հիմնային են։*

**407. ԿՐԿՆԱՃՈՒՄ — ОТРАСТАНИЕ** *Ջարդվելուց կամ կտրելուց հետո սաղարթը կամ արմատային համակարգը վերականգնելու բույսերի ունակությունը։*

**408. ԿՐՊԱԿ — КИОСК** *Պարտեզների ու զբոսայգիների հաճախորդների կուլտուրական սպասարկման նպատակին ծառայող թեթև կառուցվածքի շինություն։*

**409. ԿՑԱՃՈՒՄ — СРАСТАНИЕ** *Պատվաստված երկու բույսերի միակցման վեգետատիվ պրոցես։ Հատուկ է բոլոր տեսակի պատվաստներին, աչքապատվաստներին։ Կանաչ շինարարությունում օգտագործվում է բույսերի բազմացման ու պահպանման նպատակով, հատկապես այնպիսի սորտերի,*

որոնք սերմեր չեն առաջացնում (բանջի պարտեզային՝ բույլնեն) կամ ստացված սերմերը անկայուն սերունդ են տալիս։

**410. ԿՑԱՓՈՂ** — НАСАДКА *Խողովակից դուրս հոսող հեղուկի շիթին ուղղություն տվող հատուկ հարմարանք։ Անձրևացման, ցողման սարքերի աշխատանքային հիմնական օրգանն է։ Տրամաչափված անցքեր ունեցող ծայրափողակ է։*

**411. ԿՈՒԼԻՍ** — КУЛИСЫ *Բազմապլանային հեռանկարի ստեղծման նպատակով տարածության մեջ մեկը մյուսին զուգահեռ մի քանի հարկ բույսերից կազմված վարագույր։ Ծածկում է զբոսայգու կամ շրջապատող լանդշաֆտի աչքի զարնող ոչ հիմնականը, ընդգծում՝ գլխավորը։ Ստացվում է նաև ստորին շարահարկի բույսերը արևից կամ տրորելուց պաշտպանելու։*

**412. ԿՈՒԼՏԻՎԱՐ** — КУЛЬТИВАР *Անսեռ եղանակով ստացված պարտեզաշարժը, փորվածքների լիցքը, բլրակների հարթեցումը, ավելորդ բնասերմերով։ Այդպիսի բույսի անվանումը գրվում է մեծատառով և վերցվում է չակերտների մեջ. օրինակ, մանդարինի «Ունշիու» սորտ։ Տե՛ս նաև՝ ԿԼՈՆ։*

**413. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐ** — КУЛЬТУРНЫЕ РАСТЕНИЯ *Սելեկցիայի, խաչասերման միջոցով վայրի նախնիներից ստացված կամ այլ մարզերից ներմուծված բույսեր, որոնք աչքի են ընկնում տնտեսական օգտակար հատկանիշներով։*

**414. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՕՐԵՆՍԳԻՐՔ** — КОДЕКС КУЛЬТУРНЫХ РАСТЕНИЙ *Կուլտուրական բույսերի անվանումներ ստեղծելու միջազգային կանոններ։ Կազմում է ՅՈՒՆԵՍԿՈ-ի կուլտուրական բույսերի անվանակարգության հանձնաժողովը։ Գործող օրենսգիրքը հաստատվել է 1958 թ. Նիցցայում (Ֆրանսիա) տեղի ունեցած միջազգային XV գյուղատնտեսական կոնգրեսում։ Ծաղկաբույսերի նոր ստացված սորտերի նկարագրությունը և անվանումը պետք է համապատասխանեն այս օրենսգրքի պահանջներին։*

**415. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԼԱՆԴՇԱՖՏ** — КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ *Մարդու տնտեսական գործունեության հետևանքով փոփոխված բնական լանդշաֆտ։ Քաղաքը ամենից մասնագիտացված կուլտուրական լանդշաֆտն է (տե՛ս նաև՝ ԼԱՆԴՇԱՖՏ)։*

**416. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՍԻԶԱՄԱՐԳ** — КУЛЬТУРНЫЙ ГАЗОН *Արհեստական ճմածածկ։ Ստեղծվում է ցանքսով կամ որոշակի, հիմնականում բազմամյա հացազգիների աճեցմամբ։ Մշտապես պահպանվում է որոշակի մակարդակի վրա։*

**417. ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԶԲՈՍԱՅԳԻ** — ПАРК КУЛЬТУРЫ И ОТДЫХА *Կուլտուր-լուսավորական հիմնարկ ՍՍՀՄ-ում։ Լինում է քաղաքային կամ շրջանային, 30 հա-ից ոչ պակաս տարածությամբ։ Առաջավոր փորձի փոխանակման, կուլտուրական ժամանցի, զանգվածային հանգստի կազմակերպման հետ քաղաքատիարակչական միջոցառումների անցկացումը*

կուլտուրայի և հանգստի զբոսայգու հիմնական խնդիրն է։ Կուլտուրայի և հանգստի զբոսայգում նախատեսվում է կանաչ թատրոն, գրադարան-ընթերցարաններ, մարզական համալիր, պարահրապարակ, խաղահրապարակներ, մանկական հրապարակներ և այլն։ Ամբողջ տարածքի հատակագծման հիմքը կազմում են տնկարկները, բացատները, ջրամբարները, ծաղկանոցները։ Մեր երկրում առաջին՝ Մոսկվայի Գորկու անվան Լենինի շքանշանակիր կուլտուրայի և հանգստի զբոսայգին բացվել է 1923 թվականին։

418. ԿՈՒՐԴՈՆԵՐ — КУРДОНЕР Պալատների մասնակիորեն բաց տարածությամբ ու մուտքերով շքաբակ, որը շրջապատված է շենքերով և փողոցից բաժանված է ցանցկեն ցանկապատով։

## Հ

419. ՀԱԲԻՏՈՒՍ — ГАБИТУС Տարբեր ծառերի և թփերի արտաքին տեսքը, ձևը։ Տե՛ս նաև՝ ԾԱՌՏԱՐԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ։

420. ՀԱՄԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ — СИМБИОЗ Տեսակների փոխկապակցության ձև, երբ երկու տեսակն էլ համատեղ բնակությունից վնաս չեն կրում, և դրանցից մեկը կամ զույգն էլ առավելություններ են ստանում։

421. ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ — ПРОПОРЦИЯ Համաչափություն, առարկաների և երևույթների առանձին մասերի փոխհարաբերակցություն, ներդաշնակության դրսևորումներից մեկը։ Հաշվի է առնվում դինամիկ փոփոխության ենթարկվող օբյեկտների՝ տեսակների ընտրության, տեղադրման, խմբերի ստեղծման, ինչպես նաև ծաղկային ձևավորման չափերը որոշելիս։

422. ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ — ПАНОРАМА Որոշակի բարձրությունից դիտվող ազատ, բաց տարածություն, լայն հեռապատկեր։

423. ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ — СОРАЗМЕРНОСТЬ Զբոսայգու տարբեր հատվածների միջև ստեղծվող հավասարակշռություն։ Արտահայտվում է զուգահեռ կողմերի առանձին տարրերի հայելանման կրկնությամբ (առանցքային գծի երկու կողմերում տեղադրվում են նույնանման բույսեր, որոնց դասավորությունը, քանակը և փոխադարձ դիրքը միանման են)։ Նույնը վերաբերում է նաև զբոսայգու կառույցներին և մանր ճարտարապետական ձևերին։

424. ՀԱՆԴԱԿ — УГОДЬЕ Տնտեսական նպատակներով օգտագործվող տարածքի հատված։ Լինում են հողային, անտառային, որսորդական, ձկնորսական և այլ հանդակներ։

425. ՀԱՆԳՍՏԻ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ ԵՎ ՎԱՅՐԵՐ — УЧРЕЖДЕНИЯ И МЕСТА ОТДЫХА Բնակչության հանգստի օբյեկտներ անտառապուրակներում, հանգստի գոտիներում (ամառային ճամբարներ, տուրիստական հանգրվաններ, լողափեր, նավակայաններ, նավամատույցներ և այլն)։

426. ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՇԱՐԺՄԱՆ ՄՈՏԻՎՆԵՐ — МОТИВЫ СПОКОЙСТВИЯ И ДВИЖЕНИЯ Զբոսայգու կոմպոզիցիաներում ստեղծվող մո-

տիվներ։ Հանգստի մոտիվը ստեղծվում է սիզամարգերի, ջրամբարների, ծաղկային ձևավորումների, իսկ շարժման մոտիվը՝ ծառերի, թփերի, հոսող ջրերի, դարավանդների, աստիճանների, քանդակների միջոցով։ Բույսերի սաղարթներն ըստ արտահայտչականության նույնպես լինում են դինամիկ՝ շարժուն և պասսիվ կամ հանգիստ։ Դինամիկ են բոլոր ցրված, անկանոն սաղարթները, հատկապես, երբ արտակենտրոն են, մի կողմ թեքված։ Պասսիվ են բույսերի այն պուրակային ձևերը, որոնք ունեն կնդի, սյան կամ բրգի ձև։

**427. ՀԱՆԴԻՊԱԿԱՑ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ** — ВСТРЕЧНОЕ ОЗЕЛЕНЕНИЕ *Ուղղաձիգ կանաչապատման եղանակ։ Ներքևից բարձրանում են փաթաթվող բույսերը, իսկ վերևից՝ պատշգամբներից ու տանիքներից կախվում կամ «ընդառաջ են գնում» ամպելային բույսերը։ Ստացվում է համատարած և գեղեցիկ կանաչ պատ։*

**428. ՀԱՏԱԿԱԳԻԾ** — ПЛАН *Աշխատանքային հիմք, պաստառ, որի վրա ծավալվում են կանաչապատման օբյեկտների նախագծման հետագա աշխատանքները։ Այն հստակ կերպով արտահայտում է կանաչապատման ենթակա հողամասի ռելիեֆի բոլոր մանրամասները (բարձրությունների տարբերություններ, դիրքորոշումներ), ճշգրիտ պատկերացում է տալիս կառույցների, ճանապարհային ցանցի, ջրային տարածությունների, առվակների, ոռոգման ցանցի, առկա կանաչ զանգվածների և այլնի մասին։*

**429. ՀԱՏՈՒԿ ՍԻԶԱՄԱՐԳ** — СПЕЦИАЛЬНЫЙ ГАЗОН *Ավտոմոբիլային ճանապարհների և երկաթուղային դարալանջերի, արհեստական լցակույտերի վրա, սանիտարապաշտպանական գոտիներում, օդանավակայաններում, մարզադաշտերում ստեղծվող ճմածածկ։*

**430. ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐ** — ПИЛОНЫ *Մի քանի մեծածավալ հենարաններ կամ սյուներ զբոսայգու մուտքի մոտ (բառացիորեն՝ դարպասներ)։*

**431. ՀԵՌԱՊԱՏԿԵՐ** — ПЕРСПЕКТИВА *Մակերեսի վրա առարկաների պատկերումը այնպիսի տարածական հարաբերակցությամբ, ինչպես այդ առարկաները երևում են դիտողին բնականում։ Այսինքն՝ հաշվի է առնվում դիտման կետից առարկաների ունեցած հեռավորությունով պայմանավորված գծագրության և մեծության (գծային հեռապատկեր), գույնի և ցայտունության (օդային հեռապատկեր), տեսողական ընկալման փոփոխումը։*

**432. ՀԵՏԻՈՏՆ ՃԱՆԱՊԱՐՀ** — ПЕШЕХОДНАЯ ДОРОГА *Հետիոտների շարժման ուղիներ բնակելի կամ արդյունաբերական շրջաններում, այդ շրջանների ու աշխատավայրերի, հանգստի վայրերի միջև։ Մեկուսացված է քաղաքային երթևեկությունից և սովորաբար անցնում է կանաչապատված տարածություններով (պարտեզ, պուրակ), հանդիսանալով վերջիններիս անքակտելի նախագծային տարրը։*

**433. ՀԵՏԻՈՏՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ** — ПЕШЕХОДНАЯ ДОСТУПНОСТЬ *Բնակարանից մինչև կանաչապատման օբյեկտը (շրջանային*

պարտեզ, գրոսայգի) հետիոտն հաղթահարվելիք հեռավորությունն արտահայտող ցուցանիշ։ Այն ընդունված է 1,5—2 կմ։

434. ՀԵՐԲԻՑԻԴՆԵՐ — ГЕРБИЦИДЫ *Քիմիական նյութեր, որոնք օգտագործվում են մոլախոտերի ոչնչացման համար, մասնավորապես սիզամարգում։ Լինում են համատարած ազդեցության հերբիցիդներ, որոնք ոչնչացնում են բույսերի բոլոր տեսակները, և ընտրողական ազդեցության հերբիցիդներ, որոնք ոչնչացնում են միայն որոշ տեսակի բույսեր։*

435. ՀԻԲՐԻԴ — ГИБРИД *Սովորաբար ցեղի տարբեր տեսակների կամ մեկ տեսակի ենթատեսակների (եղրևանի, ասպիրակ, վարդ, գեորգիններ, թրաշուշան) խաչասերումից ստացվող սեռական սերունդ։*

436. ՀԻԲՐԻԴԱՑՈՒՄ — ГИБРИДИЗАЦИЯ *Տե՛ս ԽԱՉԱՍԵՐՈՒՄ։*

437. ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱ — ГИДРОПОНИКА *Անհող, խճի և ավազի վրա, հանքային որոշ նյութեր պարունակող ջրային միջավայրում բույսեր աճեցնելու եղանակ։ Օգտագործվում է ծաղիկների, բանջարեղենի արագ աճեցման համար։*

438. ՀԻՄՆԱՃՅՈՒՂ — СКЕЛЕТНЫЕ ВЕТВИ *Ծառի ամենահաստ (3—4 սմ-ից ոչ պակաս) ճյուղը։ Լինում է առաջին, երկրորդ և երրորդ կարգի։ Կազմում է սաղարթի կմախքը։*

439. ՀՈՂԱԲԱՐԵԼԱՎՈՒՄ — МЕЛИОРАЦИЯ *Տե՛ս ՄԵԼԻՈՐԱՑԻԱ։*

440. ՀՈՂԱԾԱԾԿՈՒՅԹԱՅԻՆՆԵՐ — ПОЧВОПОКРОВНЫЕ *Բույսերի խումբ, որը կանաչապատման մեջ օգտագործվում է ճանապարհամերձ թեքությունները, լցակույտերը և ընդհանրապես հողը ծածկելու, գորգ առաջացնելու և դրանք էրոզիայից, լվացումից պաշտպանելու համար։ Այդ խմբի բույսերը բնորոշվում են գեղազարդային որակներով՝ տերևների խճանկարով, վերերկրյա փռվող զանգվածով (պուերարիա, բաղեղ, գիհի կազակական, կուսածաղիկ ցածրաճ) և այլն։*

441. ՀՈՂԱՃՄԱՊԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ — ЗАДЕРНЕННОСТЬ ПОЧВЫ *Հողի՝ խոտաբույսերով ծածկվածության աստիճանը։ Նկատի է առնվում վերերկրյա և արմատային համակարգերի միակցումը։ Հատկապես խիտ ճմածածկույթ է առաջանում մարգագետնային պայմաններում և արհեստական ճմաշերտերում։*

442. ՀՈՂԱՄԱՍԻ ԵՐԿՐԱՊԼԱՍՏԻԿ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ — ГЕОПЛАСТИЧЕСКОЕ ОФОРМЛЕНИЕ УЧАСТКА *Տե՛ս ՄԻԿՐՈԴԵՈՄՈՐՖՈՊԼԱՍՏԻԿԱ։*

443. ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՐԹԵՑՈՒՄ — ПЛАНИРОВКА *Կանաչապատման նախագծի իրականացման առաջին փուլ։ Հեռացվում են աղբը և ավելորդ քարերը, կտրված ծառերի բները, հնձվում է խոտածածկը։ Ճմակալած հողակտորների առկայության դեպքում ճիմը կտրատվում է 25—30 սմ$^2$ մակերես և 8—10 սմ հաստություն ունեցող շերտերով, դարսվում ստվերոտ, հարմար տեղում և սիստեմատիկաբար ջրվում մինչև օգտագործելը։ Հողամասի հարթեցման ժամանակ վերացվում են անցանկալի ըլրակները, լցվում չնախատեսված փոսերը և բուսահողը տեղափոխվում է, հարմար տեղում կուտակվում։*

**444. ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ** — ОПИСАНИЕ УЧАСТКА *Հողամասի նյութական գնահատման բնութագիրը։*

**445. ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔԱՐՏԱԳԻՐ** — КАРТОГРАММА ЗЕМЛЯНЫХ РАБОТ *Ուղղաձիգ հատակագծման աշխատանքային գծագիր։ Քանակային ցուցանիշներով պատկերում է հողային զանգվածների տեղաշարժը, փորվածքների լիցքը, բլրակների հարթեցումը, ավելորդ բնահողի հեռացումը։*

**446. ՀՈՂԱՅՐՈՒՄ** — ЗЕМЛЕВАНИЕ *Սիզամարգի խնամքի միջոցառում։ Հողակտորի մակերեսին բուսահողի, խառնուրդի շերտ է փռվում։ Սովորաբար կատարվում է աշնանը։*

**447. ՀՈԽԱԾԱՂԻԿ** — СТЕРИЛЬНЫЙ ЦВЕТОК *Անպտուղ ծաղիկ, թերզարգացած անդամներով (վարսանդ, առէջ), որոնք երբեմն ձևափոխված են ծաղկաթերթերի։ Ընդունակ չէ սերմեր առաջացնել (բոնչի, վարդ, դրախտավարդ և այլն)։ Տե՛ս նաև՝ ԼԻԱԹԵՐԹ ԾԱՂԻԿ։*

**448. ՀՈԽԱՇԻՎ** — СТЕРИЛЬНЫЙ ПОБЕГ (ЖИРОВОЙ, ВОЛЧЕК, ИВАНОВЫ ПОБЕГИ) *Սովորաբար բնի ստորին մասում առաջացող, շատ փարթամ, խոշոր տերևներով անպտուղ ընձյուղ։ Խոշոր տերևներով բույսեր ստանալու նպատակով, սովորաբար, երիտասարդ ծառերը (երկնածառ, թխկի հացենիատերև և այլն) պատվաստում են կոճղի վրա։*

**449. ՀՐԿԻԶՈՒՄ** — ПАЛ *1. Արոտավայրերի խոտածածկույթի բարելավման, անցանկալի բույսերի և թափվածքի ոչնչացման նպատակով անտառի ստորին շարահարկի խոտերի ու թփերի այրում։ 2. Մարդու գործունեության հետևանքով կամ բնական ծագման, երբեմն կանխամտածված, անտառային հրդեհ՝ անտառահատված արոտավայր կամ վարելահող դարձնելու համար։*

**450. ՀՈՒՄՈՒՍ** — ГУМУС *Քայքայված կամ մասամբ քայքայված օրգանական մնացորդներ հողում, հիմնականում «Ա» հորիզոնում։ Հատկանշական է մուգ գույնը։ Պարունակում է բույսերի սննդառության հիմնական տարրերը, որոնք մանրէների ներգործությունից դառնում են մատչելի նրանց համար։*

**451. ՀՈՒՄՈՒՍԱՅԻՆ ՀՈՐԻԶՈՆ** — ГУМУСОВЫЙ ГОРИЗОНТ *Հանքահողային կտրվածքի վերին մասում հումուսի կուտակման «Ա» հորիզոն։*

**452. ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ** — МЕМОРИАЛЬНЫЙ КОМПЛЕКС *Ճարտարապետական վիթխարակերտ կառույցներով՝ դամբարաններով, պանթեոններով, արձանախմբերով, փառքի կոթողներով և ժողովրդի պատմության նշանավոր իրադարձություններին նվիրված հուշարձաններով տարածք։ Ստեղծվում է որպես պատմահուշային զբոսայգի։ Ընդգրկում է խոշոր պարտերային հատվածներ, կանոնավոր ծառուղիներ։ Գերեզմանատները ձևավորվում են ծառերի վարսավոր ձևերով (օրինակ, Պիսկարևյան գերեզմանատունը Լենինգրադում, Տրեպտով զբոսայգին Բեռլինում և այլն)։*

## Ձ

453. **ՁԻԱՐՇԱՎԱՐԱՆ — ИППОДРОМ** *Վարգաձիերի, հեծելաձիերի փորձարկման և ձիասպորտի մրցումների վայր։ Խոշոր սպորտային համալիրի կամ համաքաղաքային նշանակության զբոսայգու հատակագծային տարրերից մեկն է։ Վարգաձիերի փորձարկման համար նախատեսված վազքուղիների երկարությունը 1600 մ է, հեծելաձիերի համար՝ 2000—3000 մ։ Լայնությունը համապատասխանաբար՝ 20—30 և 20—25 մ։ Ձիարշավարանները հայտնի են դեռևս մ. թ. ա. Հին Հունաստանում, Հռոմում, ինչպես նաև Հայաստանում։*

454. **ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՐՏԵԶ — ЗИМНИЙ САД** *Տարածք հասարակական շենքերի ներսում, որը գեղարվեստորեն ձևավորված է մեծ ծաղկամաններում, արկղերում, բուսարկղերում կամ հողում փոխատնկված տարբեր տեսակի, հիմնականում, արևադարձային բույսերով։ Ունի նաև գեղազարդիչ տարրեր՝ խեցեղեն, քար, փոքրիկ ջրավազաններ, քանդակներ։ Նախատեսված է կարճատև հանգստի համար։*

455. **ՁՄԵՌՆԱԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ — ЗИМОСТОЙКОСТЬ** *Ձմռան աննպաստ պայմաններին (ցածր ջերմաստիճան, ձմեռային երաշտ, ջերմաստիճանների հանկարծակի փոփոխություններ, սառցակալում և այլն) բույսերի դիմանալու ունակությունը։*

456. **ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԾԱՌԵՐ — ФОРМОВАННЫЕ ДЕРЕВЬЯ** *Ծառեր, որոնք էտման ու խուզման միջոցով ձևավորվել են կանաչապատման նախագծին համապատասխան։*

457. **ՁԵՎԱՎՈՐՈՒՄ — ФОРМОВКА** *Էտման, խուզման տեսակ։ Նպատակ ունի բույսին տալ նրան ոչ բնորոշ արտաքին տեսք (գնդի, խորանարդի, մեկ-երեք շարքանի, աստիճանաձև կանաչ ցանկապատի)։ Տե՛ս նաև՝ ԲՈՒՅՍԵՐԻ ԷՏՈՒՄ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ։*

458. **ՁԵՎԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ — ЕДИНСТВО ФОРМЫ И СОДЕРЖАНИЯ** *Գեղարվեստական ստեղծագործության մարքսիստական կարևորագույն օրենքներից մեկը, ըստ որի ձևը ներդաշնակորեն կապված է բովանդակության հետ և բնորոշվում է նրանով։ Կարևոր տեղ ունի պարտեզապուրակային արվեստում։*

## Ճ

459. **ՃԱՀՃԱՑԱԾ ՀՈՂ — ЗАБОЛОЧЕННАЯ ПОЧВА** *Հողամաս, որն աչքի է ընկնում ստորգետնյա ջրերի բարձր մակարդակով։ Դրա հետևանքով վատթարանում են հողի օդային ռեժիմը և ընդհանրապես՝ ագրոնոմիական պայմանները։ Դժվարանում է արմատների թափանցումը հողի խոր շերտերը, երբեմն դրանց փտման պատճառ դառնում։*

460. **ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԵԶ — ЯПОНСКИЙ САД** *Ճապոնական պարտեզային արվեստի ավանդական տեսակ։ Բնորոշվում է փոքր տարածություն-*

*ների վրա բնության ճշգրիտ վերարտադրմամբ, պարտեզի մանրամասերի նուրբ մշակմամբ։*

**461. ՃԱՐՏԱՐԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ — АРХИТЕКТОНИКА** *Ծառի սաղարթի կառուցվածքը գեղազարդային ծառաբանությունում։ Բնորոշվում է նրա չափսերով, ձևով, ճյուղավորման բնույթով, ճյուղերի և շիվերի փոխադարձ դասավորության գեղեցկությամբ։*

**462. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ — АРХИТЕКТУРНАЯ ГРАФИКА** *Գծանկարչական արվեստի հատուկ տեսակ, որի օգնությամբ պատկերվում է նախագծման, վերակառուցման օբյեկտը։ Ճարտարապետական գծանկարչության ոճաձևերով բացահայտվում են օբյեկտի և նրա մասերի (զբոսայգու հեռանկար, ճարտարապետական ձևեր) գեղարվեստական որակները։*

**463. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ — АРХИТЕКТУРНЫЙ ПРОЕКТ** *Լանդշաֆտի կազմակերպման կամ վերակառուցման նախագիծ։ Մշակվում է լանդշաֆտային տաքսացիայի հիման վրա։ Գծանկարչական ենթահիմք է ծառայում գլխավոր հատակագծի պատճենը։ Նախագիծը պարունակում է տարածքի լանդշաֆտի սկզբունքային լուծումները ամբողջությամբ, ցուցադրելով նրա կոմպոզիցիոն տարրերի՝ ռելիեֆի, ջրամբարների, հատակագծային ցանցի և կանաչ տնկարկների փոխադարձ կապվածության հեռապատկերային գծերը։ Պայմանական նշաններով ցույց են տրվում պահպանվող և նախագծվող կանաչ տնկարկները։ Հատուկ կերպով առանձնացվում են խիտ և նոսր տնկարկները, բաց տարածությունները, բացատները, ճանապարհները, կածանները, կառույցները։ Նշվում են հաղորդակցության բոլոր ուղիները, ճարտարապետական փոքր ձևերը, լուսավորության ցանցը և այլն։*

**464. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ ԶԲՈՍԱՅԳՈՒՄ — АРХИТЕКТУРНЫЕ ЭЛЕМЕНТЫ В ПАРКЕ** *Շենքեր և կառույցներ (կանաչ թատրոն, պարահրապարակ, ընթերցարան, բեմահարթակ, քանդակ և ճարտարապետական փոքր ձևեր) զբոսայգում։ Զուգակցող դեր են խաղում զբոսայգու ընդհանուր հատակագծային լուծման մեջ և ներդաշնակում լանդշաֆտի տարրերի հետ։*

**465. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՔՐ ՁԵՎԵՐ — МАЛЫЕ АРХИТЕКТУРНЫЕ ФОРМЫ** *Պարտեզապուրակային կոմպոզիցիայի տարրեր՝ տաղավարներ, ռոտոնդներ, թարմաներ, պատատավանդակներ, նստարաններ, կամարներ, բույսերով պատրաստված արձաններ, աղբամաններ, կրպակներ, մանկական հրապարակների սարքավորումներ, ծածկեր և այլն։*

**466. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ — АРХИТЕКТУРА** *Շենքերի, կառույցների նախագծման ու շինարարության, գեղարվեստական արտահայտիչ անսամբլների ստեղծման արվեստ։ Ճարտարապետությունը դրսևորվում է արդյունաբերական ճարտարապետության, գյուղատնտեսության, բնակելի, հասարակական, պարտեզապուրակային արվեստի և այլ բնագավառներում։ Ճարտարապետությունը սերտորեն կապված է պարտեզապուրակային ար-*

լեսափ, կանաչ շինարարության հետ: Պարտեզները, պուրակները և կանաչապատման մյուս օբյեկտները ծառայում են ինչպես առանձին շենքերի և համալիրների, այնպես էլ ամբողջ ճարտարապետական անսամբլների գեղարվեստական արժանիքներն ընդգծելու, ի հայտ բերելու համար:

**467. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ** — АРХИТЕКТУРНО-ПЛАНИРОВОЧНОЕ ЗАДАНИЕ *Կանաչապատման կարևոր և խոշոր օբյեկտի (հուշահամալիր, քաղաքային խոշոր զբոսայգի) նախագծման առաջին փուլ: Մշակվում է հիմնական նախագծային գաղափարը: Կազմված է քաղաքի (շրջանի) կանաչապատման սխեմայից, օբյեկտի գլխավոր հատակագծից, ինժեներական բարեկարգման ուրվագծից, բացատրական գրությունից և բոլոր աշխատանքների ֆինանսական նախահաշվարկից:*

**468. ՃԵՂՔԱՊԱՏՎԱՍՏ** — ПРИВИВКА ПОД КОРУ *Պատվաստման եղանակ: Պատվաստակալի կեղևի տակ ճեղք են բացում, այնտեղ մտցնելով պատվաստացուի կտրոնը՝ մերկացված կամբիումով: Պատվաստի այս եղանակը կիրառվում է այն դեպքում, երբ կտրոնների հաստությունը 2—4 սմ է: Լավագույն ժամկետը վաղ գարունն է, մինչև հյութաշարժը: Կտրոնները նախապատրաստվում են վաղօրոք: Պատվաստի հաջողությունը կախված է կտրվածքի լրիվ մեկուսացումից, օդից և խոնավությունից: Այդ նպատակով ճեղքը ծածկում են պարտեզային մածուկով և ամուր կապում խոնավության համար անթափանց հատուկ գործվածքով կամ սինթետիկ նյութով:*

**469. ՃԵՄԱՐԱՆ** — ЛИЦЕЙ *Դիցաբանական հերոս Ակադեմոսի անունը կրող պարտեզ Հին Հունաստանում, որտեղ փիլիսոփաները (Պլատոն, Արիստոտել, Թեոֆրաստ, Սոկրատ և ուրիշներ) դասախոսություններ էին կարդում աշակերտների հետ ճեմելով: Հայերեն ճեմարան բառը նույն ծագումն ունի: Հին Հայաստանում ևս եղել են նման պարտեզներ, որտեղ ճեմելով դասախոսություններ են կարդացել հայ փիլիսոփաներ Դավիթ Անհաղթը, Ներսես Շնորհալին, Գրիգոր Մագիստրոսը և ուրիշներ: Հետագայում ճեմարան են անվանվել մի շարք խոշոր կրթական կենտրոններ (Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Պոլսի Սկյուտարի ճեմարանը և այլն) և հոգևոր ակադեմիան, որոնք արդեն գործում էին շենքերում:*

**470. ՃՄԱԳՈՅԱՑՆՈՂ ԲՈՒՅՍԵՐ** — ДЕРНООБРАЗУЮЩИЕ РАСТЕНИЯ *Հողը հյուսապատող, ճիմ առաջացնող արմատային համակարգով բազմամյա խոտեր: Հիմնականում պատկանում են հացազգիների ընտանիքին: Ճմագոյացնող բույսերը ըստ թփակալման լինում են կոճղարմատայիններ, կոճղարմատաթփայիններ, փխրուն թփայիններ և խիտ թփայիններ:*

**471. ՃՄԱՀՈՂ** — ДЕРНОВАЯ ЗЕМЛЯ *Մարգագետինների և տափաստանների հողի վերին շերտը: Օգտագործվում է պարտիզահող ստեղծելու համար:*

**472. ՃՄԱՆՍՏԱՐԱՆ** — ДЕРНОВАЯ СКАМЬЯ *Ելուստաձև ճմային կառուցվածք զբոսայգիների պարիսպների և կածանների մոտ: Բնորոշ է եղել միջնադարյան պարտեզներին: Ժամանակակից մի շարք զբոսայգիներում դեռևս պահպանվում է:*

473. ՃՄԱՇԵՐՏ — ДЕРН *Բազմամյա հացազգի և տարախոտային բույսերից ստեղծված սիզամարգ, որտեղ բույսերի մեծ խտության և արմատային համակարգի խիտ ցանցի շնորհիվ առաջանում է թաղիքանման զանգված։ Կիրառվում է էրոզիայի ենթակա թեք լանջերի ամրացման և գեղազարդային ձևավորման համար։ Օգտագործվում է, ինչպես բնական, այնպես էլ արհեստական եղանակով աճեցված ճմաշերտ։ Վերջինս գերադասելի է, քանի որ էժան է և բնության մեջ էրոզիոն օջախներ չի առաջացնում։*

474. ՃՄԱՊԱՏՈՒՄ — ОДЕРНОВКА *30°-ից ավելի թեքության անկյան լանջերի և հողաթմբերի վրա կարճ ժամկետում սիզամարգ, գրոսայգու կածանների երկարությամբ և հարթ վայրերում սիզամարգի եզրաշերտեր ստեղծելու եղանակ։ Կատարվում է տնկարաններում բազմաէթիլենային հիմքի վրա աճեցված ճիմի կամ սիզամարգի փռման միջոցով։*

475. ՃՅՈՒՂԱՊԱՏՎՈՂ ՈՍՏԻԿՆԵՐ — ОБРАСТАЮЩИЕ ВЕТОЧКИ *Սովորաբար փոքր ոստիկներ, որոնց վրա առաջանում են ծաղկող ընձյուղներ։*

476. ՃՅՈՒՂԱՏՈՒՄ — ПОДРЕЗКА *Տե՛ս ԲՈՒՅՍԵՐԻ ԷՏՈՒՄ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ։*

## Մ

477. ՄԱԳԼՑՈՂ ԲՈՒՅՍԵՐ — ЛАЗАЮЩИЕ РАСТЕНИЯ *Խիզբերով և փշերով հենարաններին ամրացող լիաններ։ Օգտագործվում են կամարների, տաղավարների, թարմանների ստեղծման, շենքերի պատերի, պատշգամբների կանաչապատման համար (մամրիչ, վարդեր, խաղող, պարիլյակ)։*

478. ՄԱՁԱՐՄԱՏ — КОРНЕВАЯ МОЧКА *Արմատային համակարգի ամենագործուն, ներծծող արմատիկներ կրող մասը։ Բույսերի տեղափոխման ժամանակ արմատների վրա դրանց պահպանումը պարտադիր է։*

479. ՄԱԿՐՈԼԱՆԴՇԱՖՏ — МАКРОЛАНДШАФТ *Աշխարհագրական լանդշաֆտի հորիզոնից հորիզոն ձգվող խոշոր հատված։ Թելադրում է գրոսայգու ոճը։ Նրա առանձին տարրերը ֆոն են ծառայում գրոսայգու կոմպոզիցիաների համար (օրինակ, Սևանա լիճը, Արարատ լեռան համայնապատկերը)։*

480. ՄԱԿՐՈԿԼԻՄԱ — МАКРОКЛИМАТ *Աշխարհագրական զոնաների, մայրցամաքների, օվկիանոսների և այլ խոշոր ռեգիոնների կլիման։ Ծառաբանական և կանաչապատման շրջանացման ժամանակ հաշվի առնվող կարևոր գործոն է։*

481. ՄԱԿՐՈՌԵԼԻԵՖ — МАКРОРЕЛЬЕФ *Երկրագնդի մակերևույթի խոշոր անհարթությունները, ռելիեֆի խոշոր ձևեր, որոնց բարձրությունները տատանվում են մի քանի հարյուրից մինչև մի քանի հազար մետր (լեռնաշղթաներ, միջլեռնային իջվածքներ, հրաբխային կոներ, գետերի ավազաններ և այլն)։*

482. ՄԱՅԹ — ТРОТУАР *Քաղաքային փողոցի մասը, փողոցի կարմիր գծերի սահմաններում անցորդների համար առանձնացված շերտ։ Սովորաբար ունենում է 2,0 մ-ից ոչ պակաս լայնություն։*

**483. ՄԱՆԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳԻ** — ДЕТСКИЙ ПАРК *Շրջանային կառուցապատման օբյեկտ, երեխաների հանգստի համար նախատեսված տրն-յարկների խոշոր զանգված։ Ընդգրկում է երեխաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնող մի շարք խաղահրապարակներ, ֆիզկուլտուրական կառույցներ և այլն։*

**484. ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ** — ДЕТСКАЯ ПЛОЩАДКА *Զբոսայգու, պարտեզի կամ բնակելի տարածքի համակազմային տարր։ Նախատեսված է երեխաների հանգստի և շարժուն խաղերի համար։ Ստորաբաժանվում է առանձին հատվածների՝ մինչև 3 տարեկան, 4—6 տարեկան, 7—14 տարեկան երեխաների համար։*

**485. ՄԱՆՐԱԽԻՃ** — ГРАВИЙ *Փխրուն, խոշորաբեկոր նստվածքային ապարի և լեռնային ապարների 1—10 մմ չափսի հղկված բեկորների ամբողջություն։ Տարբերում են ըստ բեկորների մեծության (խոշոր, մանր և այլն) և ըստ ծագման (գետային, լճային, ծովային և սառցադաշտային)։*

**486. ՄԱՆՐԱԿԵՐՏ** — МАКЕТ *Կանաչապատման օբյեկտի տարածական մոդել։ Պատրաստվում է տարբեր նյութերից՝ փոքրացված մասշտաբով։ Արվում է նախագծի լուծումները ստուգելու և կատարելագործելու նպատակով։*

**487. ՄԱՆՐԱՀՈՂ** — МЕЛКОЗЕМ *1 մմ-ից փոքր տրամագիծ ունեցող հողային տարրական մասնիկ։*

**488. ՄԱՆՐԱԳՈՒԲԱԿ** — КУРТИНА *Ծառուղիներով, կածաններով կամ զբոսայգու կառույցներով ու հրապարակներով սահմանազատված կանաչ տարածություն։ Ձևավորված է սիզամարգով, ծառերով ու թփերով, ինչպես նաև ծաղկային օջախներով։ Կանաչապատման-նախագծման հիմնական միավորն է, ըստ որի կազմվում են աշխատանքային գծագրերը և ֆինանսական նախահաշվարկի առանձին բաժինները։*

**489. ՄԱՌԱԽՈՒՂԱՍՏԵՂԾ ՍԱՐՔԵՐ** — ТУМАНООБРАЗУЮЩИЕ УСТАНОВКИ *Տաձկած բնահողի պայմաններում (ջերմատներում, ջերմոցներում) մինչև մառախուղի վիճակի ջրի փոշիացում առեղծելու հատուկ սարքեր՝ գլխադիրներ, ջրմուղի խողովակների վրա։ Ապահովում են հողամերձ օդի հավասարաչափ խոնավացումը, պակասեցնում բույսերի կողմից ջրի կորուստները և նպաստում, հատկապես, կանաչ տնկաշիվերի արագ արմատակալմանը։*

**490. ՄԱՍՇՏԱԲ** — МАСШТАБ *Հատակագծի, աշխատանքային գծագրի կամ քարտեզի վրա որոշակի հատվածի երկարության հարաբերությունը բնության մեջ իրեն համապատասխանող հատվածի երկարությանը։ Եթե այդ հարաբերությունը արտահայտվում է թվով (1:500՝ 1 սմ = 5 մ)՝ թվային մասշտաբ։ Կազմվում է նաև գծային մասշտաբ։ Այն հավասար միավորների բաժանված ուղիղ գիծ է, որի թվերը ցույց են տալիս, թե այդ միավորներից յուրաքանչյուրը իրականում քանի կմ-ի կամ մ-ի է հավասար։*

491. ՄԱՎՐԻՏԱՆԱԿԱՆ ՍԻԶԱՄԱՐԳ — МАВРИТАНСКИЙ ГАЗОН *Ծաղկաբույսերի (կակաչներ, վուշ, տերեփուկներ, երեքնուկ) կամ դրանց ու բազմամյա հացազգիների խառնուրդի ցանքսով ստեղծվող խոտածածկ։*

492. ՄԱՐԳԱԽՈՏ — ГАЗОН *Տե՛ս ՍԻԶԱՄԱՐԳ։*

493. ՄԱՐԳԱԳԵՏՆԱՅԻՆ ՍԻԶԱՄԱՐԳ — ЛУГОВОЙ ГАЗОН *Մարգագետնային բազմամյա խոտերի մի շարք տեսակների խառնուրդից կազմված սիզամարգ։*

494. ՄԱՐԳԻԿ — ГРЯДКА *Ճմով, տախտակներով, ձողերով, քարերով կամ աղյուսով ամրացված եզրեր կամ շեպեր ունեցող, մշակվող նեղ հողաշերտ։ Նախատեսված է բանջարեղենի, ծաղկաբույսերի կամ ծաղիկների աճեցման համար։ Գերխոնավության պայմաններում ստեղծվում են գետնից բարձր մարգիկներ, իսկ չորային պայմաններում՝ գետնի մեջ խորացված մարգիկներ։*

495. ՄԱՐԶԱԴԱՇՏ — СТАДИОН *Մարզումների համար նախատեսված դաշտ։ Սպորտային մրցումների համար՝ տե՛ս ՍՏԱԴԻՈՆ։*

496. ՄԱՐԶԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳԻ — СПОРТИВНЫЙ ПАРК *Շրջանային կամ քաղաքային կանաչապատման օբյեկտ, որի հիմնական տարրը մարզական կառույցների և հրապարակների լավ զարգացած համալիրն է։ Տարածքի ոչ պակաս 50%-ը տնկարկներ են, որոնք բարենպաստ պայմաններ են ստեղծում հանգստի և սպորտով զբաղվելու համար։*

497. ՄԱՐԶԱԿԵՆՏՐՈՆ — СПОРТИВНОЕ ЯДРО *Սպորտով զբաղվելու հատուկ տարածք դպրոցամերձ հողամասում, զբոսայգում։ Ունի ֆուտբոլի դաշտ, վոլեյբոլի, բասկետբոլի, մարմնամարզության, հոկեյի և այլ մարզաձևերի հրապարակներ, վազքուղիներ։*

498. ՄԵԶՈԼԱՆԴՇԱՖՏ — МЕЗОЛАНДШАФТ *Տեղանքի միկրոգեոմորֆոլոգիական որոշակի առանձնահատկություններ (ձորակներ, բլուրներ, գետակ, ճանապարհային ցանց, ժայռաբեկորներ, զանազան կառույցներ, կանաչ տնկարկներ և այլն) և որոշակի սահմաններ ունեցող հատված։ Հիմք է ծառայում զբոսայգու նախագծման համար։*

499. ՄԵԶՈԿԼԻՄԱ — МЕЗОКЛИМАТ *Բավականին միատարր բնական պայմաններ ունեցող, համեմատաբար ոչ մեծ տարածքի (անտառազանգված, ծովափ, ոչ մեծ քաղաք) կլիմա։ Սովորաբար բնութագրվում է միևնույն տեղում, նույն օդերևութաբանական կայանում կատարված դիտումներով։ Տարածման մասշտաբով միջանկյալ տեղ է գրավում մակրոկլիմայի և միկրոկլիմայի միջև։*

500. ՄԵԶՈՌԵԼԻԵՖ — МЕЗОРЕЛЬЕФ *Միջանկյալ ռելիեֆ, որը փոքր է մակրոռելիեֆից և մեծ՝ միկրոռելիեֆից։ Երկրի մակերևույթի կոնկրետ հատված, ձև (օրինակ, գետի սանդղափուլ, իջվածք, հեղեղատ, ոչ մեծ կիրճ և այլն), որի բարձրությունը տատանվում է մի քանի տասնյակ մետրի սահմանում։ Կանաչ շինարարության բնագավառում, հատկապես ուղղաձիգ հատակագծման ժամանակ, ենթարկվում է զգալի վերափոխումների։*

501. **ՄԵԶՈՖԻՏՆԵՐ — МЕЗОФИТЫ** *Տարեկան 500 մմ-ից ավելի տեղումներ ունեցող չափավոր խոնավ մարզերի բույսեր (օրինակ, մարգագետինների և բարեխառն գոտու անտառների բույսերի մեծ մասը)։*

502. **ՄԵԼԻՈՐԱՑԻԱ — МЕЛИОРАЦИЯ** *Բնական միջավայրի (գլխավորապես գյուղատնտեսական հողերի) բարելավման կազմակերպական-տնտեսական ու տեխնիկական միջոցառումների գիտականորեն հիմնավորված ամբողջություն։ Տարբերում են ոռոգիչ և ցամաքեցնող մելիորացիա, անտառամելիորացիա, հողերի ու շրջապատող միջավայրի բարելավման այլ ձևեր։*

503. **ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ՏՆԿԱՐԿՆԵՐ — ОДИНОЧНЫЕ ПОСАДКИ** *Պարտեզապուրակային կոմպոզիցիայում գեղազարդային բարձր որակ ունեցող ծառեր, թփեր և խոշոր խոտաբույսեր։*

504. **ՄԵՆԱԾԱՌ — СОЛИТЕР** *Պարտեզապուրակային բաց տարածությունում իր ճարտարակերտությամբ աչքի ընկնող կամ հատուկ ուշադրության գրավող միայնակ տնկի (ծառ, թուփ կամ խոշոր խոտաբույս)։*

505. **ՄԵՆԶՈՒԼԱՅԻՆ ՀԱՆՈՒՅԹ — МЕНЗУЛЬНАЯ СЪЕМКА** *Անմիջապես տեղանքի հանույթի ժամանակ հատակագծի կամ քարտեզի ստեղծման աշխատանքների ամբողջություն։ Կատարվում է մենզուլի և կիպրեգելի (բարձրաչափ-հեռաչափ) միջոցով։ Կիրառվում է այն հողամասերում (անտառապուրակներ, խոշոր գրոսայգիներ, պաշտպանիչ գոտիներ), որտեղ այս կամ այն պատճառով հնարավոր չէ օդալուսահանույթ կատարել։*

506. **ՄԵՐՁԱԳՊԱՏՎԱՍՏ — АБЛАКТИРОВКА** *Պատվաստի եղանակ։ Պատվաստացուն, մինչև պատվաստակալի հետ սերտաճումը, չի անջատվում մայրական բույսից։ Պատվաստի այս եղանակի համար ամենահարմար ժամանակը հյութաշարժի շրջանն է։ Պատվաստակալի և պատվաստացուի ընձյուղները մոտեցվում են իրար, համապատասխան տեղում հեռացվում են երկու բույսերի ընձյուղների կեղևները և կամբիումները հպելով իրար՝ կապում։ Լրիվ սերտաճումը տեղի է ունենում կես տարվա ընթացքում։*

507. **ՄԹՆՈԼՈՐՏ — АТМОСФЕРА** *Երկրագնդի գազային թաղանթը։ Նրա հետ կապված է ծանրության ուժով և մասնակցում է օրական ու տարեկան պտույտին։ Մթնոլորտի վերին սահմանը պայմանականորեն ընդունված է 20 հազար կիլոմետր։ Մթնոլորտային օդը բնական և անտրոպոգեն ծագման տարբեր գազերի, ջրային գոլորշիների, սառցի և փոշու մասնիկների խառնուրդ է։ Բարձրության հետ օդի խտությունը պակասում է։ Այն ստորաբաժանվում է շերտերի, որոնք տարբերվում են ջերմաստիճանով, մոլեկուլների խտացմամբ և ֆիզիկական ու քիմիական որոշ հատկանիշներով։ Ստորին՝ երկրամերձ շերտը, ներքնոլորտն է (տրոպոսֆերա)։ Ավելի վեր շերտոլորտն է (ստրատոսֆերա), միջնոլորտը (մեզոսֆերա), ջերմոլորտը (թերմոսֆերա) և արտաոլորտը (էկզոսֆերա)։*

508. **ՄԻԱԳՈՒՅՆ ՊԱՐՏԵՐ — ОДНОТОННЫЙ ПАРТЕР** *Գունային ձևավորված պարտեր։ Բնորոշվում է միագույն բույսերի (կանաչ) գերակշ-*

ությամբ։ Առանձին հատվածները կարող են ունենալ այդ գույնի տարբեր երանգներով (բաց կանաչ, մուգ կանաչ) բույսեր։

509. **ՄԻԱԿՈՄՊԱԿՏ ԽՈՒՄԲ** — МОНОКОМПАКТНАЯ ГРУППА *Ծառաթփային կամ ծաղկային մեկ տեսակից կազմված պարզ խումբ։ Երկու տեսակից կազմված խմբերը կոչվում են երկկոմպակտ։*

510. **ՄԻԱԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍ** — МОНОКУЛЬТУРНЫЙ УЧАСТОК *Գեղագարդային հատուկ էքսպոզիցիա, որի ձևավորման համար օգտագործվում են բույսերի միայն մեկ ցեղի ներկայացուցիչներ կամ նույն տեսակի այլատեսակներ ու սորտեր։ Օգտագործվում են վարդեր (վարդանոց), եղրևանիներ (եղրևանոց), քաջվարդեր (քաջվարդանոց), շուշաններ (շուշանների հողամաս), սրնգենիներ (սրնգենիների հողամաս), վարդկակաչներ (վարդկակաչանոց) և այլն։*

511. **ՄԻԱՄՅԱՆԵՐ** — ОДНОЛЕТНИКИ *Կենսաբանական ու գեղազարդային տարբեր առանձնահատկություններ ունեցող տեսակներից կազմված ծաղկաբույսերի խումբ։ Տարբերում են իսկական միամյաներ և պայմանական միամյաներ։ Առաջինների կյանքի տևողությունը մեկ տարի է։ Երկրորդ խմբի ներկայացուցիչները բազմամյա են, բայց աճեցվում են որպես միամյաներ (կաննաներ, գեորգինիներ, հնդկոտեմ և այլն)։*

512. **ՄԻԱՊԱՐՏԵԶ** — МОНОСАД *Պարտեզ (վարդանոց, գեորգենանոց, վարդկակաչանոց), որտեղ տիրապետողը որևէ բուսատեսակ է (տե՛ս նաև՝ ՄԻԱԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍ)։*

513. **ՄԻԱՊՏՂԱԲԵՐ ԲՈՒՅՍԵՐ** — МОНОКАРПИЧЕСКИЕ РАСТЕНИЯ *Բույսեր, որոնք կյանքում ծաղկում և պտղաբերում են մեկ անգամ, որից հետո սովորաբար մահանում են։ Միապտղաբեր են բոլոր միամյա և երկամյա բույսերը, իսկ բազմամյաներից՝ որոշ տեսակներ (բալդրղան Սոսնովսկու, ագավա ամերիկյան, հնդկեղեգ, սրմավենու որոշ տեսակներ)։*

514. **ՄԻԿՈՐԻԶ** — МИКОРИЗА *Բարձրակարգ բույսերի հետ որոշ հողային սնկերի համարնակություն։ Տարբերում են արտաքին՝ էկտոտրոֆ (երբ սնկի հիֆերը արմատի շուրջը առաջացնում են արտաքին ծածկոց) և ներքին՝ էնդոտրոֆ (երբ հիֆերը արմատի բջիջների ներսում են) միկորիզներ։ Այն բարերար ազդեցություն է ունենում բույսերի վրա։ Սունկը մեծացնում է արմատի կլանող մակերեսը, քայքայում է բույսի համար անմատչելի որոշ օրգանական միացություններ, արտադրում վիտամիններ և աճման խթանող նյութեր։ Իր հերթին սունկը բույսի արմատներից ստանում է ածխաջրեր։ Հողում միկորիզի բացակայության դեպքում, գեղազարդային որոշ բույսեր (սոճի, մրտավարդ) վատ են արմատակալում։ Անտառատնկումների ժամանակ խորհուրդ է տրվում կատարել հողի միկորիզացում։*

515. **ՄԻԿՐՈԳԵՈՄՈՐՖՈՊԼԱՍՏԻԿԱ** — МИКРОГЕОМОРФОПЛАСТИКА *Արհեստական եղանակով ռելիեֆի միկրոտարրերի փոփոխություն։ Երբեմն անհրաժեշտություն է զգացվում բոլորովին հարթ հողամասում ստեղծել փոքրիկ բլուրներ, ձորակներ, փոսորակներ՝ գրոսայգու բնապատկերներն առա-*

վել հետաքրքիր ու ընդգծված դարձնելու համար։ Նման շինարարության հարուստ փորձ են ունեցել հին չինացիները, որոնք հսկայական հարթ տարածությունների վրա ստեղծել են արհեստական լեռներ, ձորեր, բլրակներ, լճեր և այլն։ Միկրոգեոմորֆոպլաստիկայի կանոններին լավ տիրապետելով կարելի է ապագա զբոսայգու տարածքի զանազան անհարթությունները հաջողությամբ օգտագործել տարբեր կոմպոզիցիաներում։

**516. ՄԻԿՐՈԹԵՐՄԵՐ — МИКРОТЕРМЫ** *Բույսեր, որոնք աճում են ցածր ջերմաստիճանների պայմաններում։*

**517. ՄԻԿՐՈԼԱՆԴՇԱՖՏ — МИКРОЛАНДШАФТ** *Հողակտորի փոքրիկ հատված՝ բնության անշարժ տարրերի որոշակի զուգակցությամբ։ Համապատասխանում է բնապատկեր հասկացությանը։ Միկրոլանդշաֆտները զբոսայգու կոմպոզիցիաների համար հիմք են հանդիսանում։ Ելնելով միկրոլանդշաֆտի կոնկրետ առանձնահատկություններից, այդ կոմպոզիցիաները ձևավորվում են առանձնակի խնամքով։*

**518. ՄԻԿՐՈԿԼԻՄԱ — МИКРОКЛИМАТ** *1. Երկրագնդի մակերևույթի ոչ մեծ հատվածների (քաղաքային զբոսայգի, պարտեզ, բնակելի թաղամաս) օդի երկրամերձ շերտի կլիման։ Ձևավորվում է միջավայրի տարբեր գործոնների (տաքացում, սառեցում, խոնավացում) փոխազդեցության հետևանքով ու շենքերի, կառույցների, բուսականության, ջրամբարների և այլնի ազդեցության տակ։ 2. Փակ շինություններում (ջերմատներ, ջերմոցներ) արտաքին անբարենպաստ ներգործությունից պաշտպանվելու համար ստեղծվող կլիմա։*

**519. ՄԻԿՐՈՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ — МИКРОУДОБРЕНИЯ** *Միկրոտարրեր պարունակող պարարտանյութեր։ Ստորաբաժանվում են երկու խմբի՝ միամիկրոպարարտանյութեր և բազմամիկրոպարարտանյութեր (պարունակում են 2 և ավելի միկրոտարր)։ Օգտագործվում են սերմերի նախացանքային մշակման, տնկումների ժամանակ։*

**520. ՄԻԿՐՈՌԵԼԻԵՖ — МИКРОРЕЛЬЕФ** *Ռելիեֆի մանր ձևեր, երկրագնդի մակերևույթի անհարթություններ, որոնք առաջացել են արտածին պրոցեսների ազդեցությամբ։ Գրավում են ոչ մեծ տարածություններ (մինչև մի քանի հարյուր $м^2$) և ունեն բարձրությունների ոչ մեծ տատանումներ (մինչև մի քանի մետրի սահմաններում), օրինակ, թումբ, բլրակ, ձորակ և այլն։*

**521. ՄԻԿՐՈՏԱՐՐԵՐ — МИКРОЭЛЕМЕНТЫ** *Հողում, լեռնային ապարներում, ջրերում պարունակվող քիմիական որոշ տարրեր։ Օգտագործվում են որպես պարարտանյութեր։ Մեծ մասը մետաղներ են (Fe, Cu, Zn, Mn, Mo և այլն), մյուսները՝ ոչ մետաղներ (Se, Br, F, As)։ Խիստ անհրաժեշտ են բույսերի աճի ու զարգացման համար և չեն կարող փոխարինվել P, K, N-ով։ Հողերում տարբեր միացությունների կազմում գտնվելով և անլուծելի կամ դժվար լուծելի լինելով՝ բույսերին անմատչելի են։ Տարբեր հողերում միկրոտարրերի պարունակությունը նույնը չէ։ Դրանց շարժունա-*

կության և բույսերի համար մատչելի լինելու վրա ազդում են հողի ռեակցիան, խոնավությունը, օրգանական նյութերի պարունակությունը:

**522. ՄԻՆԵՐԱԼԱՑՈՒՄ — МИНЕРАЛИЗАЦИЯ** *Օրգանական նյութերի տարրալուծումը պարզ անօրգանական նյութերի:*

**523. ՄԻՋԱՎԱՅՐ ԳՈՅԱՑՆՈՂ ԲՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ — СРЕДООБРАЗУЮЩАЯ ПРИРОДНАЯ ТЕРРИТОРИЯ** *Բնական կոմպլեքս ռեսուրսների (միջավայրի ռեսուրսների) անուղղակի շահագործման (տեղում կամ կից տարածքներում) նպատակով էկոլոգիական հավասարակշռության հարաբերականորեն հաշվեկշռված ռեժիմով տարածք: Այդպես են հյուսիսային կլիմայապաշտպան նոսր անտառները, մարդկանց հանգստի համար նախատեսված քաղաքամերձ կանաչ գոտիները, բնական պուրակները և ազգային պարկերը, առողջավայրային գոտիները և այլն:*

**524. ՄԻՋԱՏԱՍՊԱՆՆԵՐ — ИНСЕКТИЦИДЫ** *Վնասատու միջատների դեմ պայքարի քիմիական միջոցներ: Ունեն ինչպես անօրգանական, այնպես էլ օրգանական (բուսական) ծագում: Վերջիններս կոչվում են բուսական միջատասպաններ (Նրիցուկ):*

**525. ՄԻՔՍԲՈՐԴԵՐ — МИКСБОРДЕР** *Կանաչ հարդարման մեջ օգտագործվող ծաղկային ձևավորման տարատեսակ: Բնորոշվում է վեգետացիոն շրջանում բազմակի ծաղկմամբ, որը ստեղծվում է հիմնականում բազմամյա, տարբեր ժամանակներում գեղեցիկ ծաղկող խոտաբույսերի ընտրությամբ: Հաճախ օգտագործվում են նաև միամյա տեսակներ:*

**526. ՄՆԱՑՈՒԿ — РЕЛИКТ** *Երկրաբանական անցյալում լայնորեն տարածված, իսկ այժմ ոչ մեծ տարածք զբաղեցնող տեսակ կամ համակեցություն: Տարբերում են ըստ երկրաբանական որոշակի ժամանակաշրջանների (երրորդականներ, պլեյստոցենյաններ, հետպլեյստոցենյաններ և այլն):*

**527. ՄՆԱՑՈՒԿԱՅԻՆ ՏԵՍԱԿ — РЕЛИКТОВЫЙ ВИД** *Որևէ վայրում հնում գոյություն ունեցած բուսականության ներկայումս պահպանված տեսակ: Հաճախ միաժամանակ հազվագյուտ տեսակ է:*

**528. ՄՇՏԱԴԱԼԱՐ ԲՈՒՅՍԵՐ — ВЕЧНОЗЕЛЕНЫЕ РАСТЕНИЯ** *Ամբողջ տարին կանաչ տերևներով պատված փշատերև և լայնատերև բույսեր: Դրանց տերևաթափը և տերևակալումը տեղի են ունենում ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար (յուրաքանչյուր տերև կարող է ապրել մինչև մի քանի տարի), մշտապես պահպանելով կանաչ սաղարթը: Մեծ դեր են կատարում, հատկապես ձմռանը, պարտեզների և զբոսայգիների բնապատկերում: Պետք է տարբերել ձմեռնականաչ (կիսամշտադալար) բույսերից, որոնց տերևները ձմեռելուց հետո թափվում են և փոխարինվում նորերով:*

**529. ՄՇՏԱԾԱՂԿՈՒՆ ՊԱՐՏԵԶ — САД ВЕЧНОГО ЦВЕТЕНИЯ** *Զբոսայգում կամ բուսաբանական այգում զանազան ժամկետներում ծաղկող ծառաթփային և խոտային բույսերի հատուկ հողամաս, որտեղ ամբողջ տարվա ընթացքում ծաղիկներ կան: Մշտածաղկուն պարտեզներ կարող են լինել միայն մերձարևադարձային և արևադարձային գոտիներում (Հայաստանի*

պայմաններում նման պարտեզներ կարելի է ստեղծել հյուսիսարևելյան և հարավարևելյան մերձարևադարձային շրջաններում)։

**530. ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՊԱՐՏԵԶ** — МОДУЛЬНЫЙ САД *Ծաղկանոցի, պարտեզի ու մեծ տարածության կամ գրասայգու ձևավորված հատված, ստեղծվում է որոշակի տարածություններից հետո կրկնվող մոդուլների երկրաչափական համակարգով։ Օրինակ, եզրերից շարված սալիկներ և տարբեր կամ միատեսակ լիցք (ծաղիկներ, գեղազարդային ծառեր ու թփեր, սիզամարգ) ունեցող քառակուսիներ։*

**531. ՄՈԼԱԽՈՏ** — СОРНЯК *Մարդու կողմից չմշակվող, բայց մշակովի հողերում կուլտուրական բույսերի հետ աճող ու դրանց հետ մրցակցող, տնտեսությունում անցանկալի բույս։ Ճնշում են մշակվող բույսերի աճը՝ կլանելով հողից մեծ քանակությամբ ջուր և սննդանյութեր, ստվերով խանգարում են լուսասինթեզին։ Դրանց սերմերը կամ պտուղները հաճախ պարունակում են թունավոր նյութեր, որոնք խառնվելով բերքին կամ մթերքներին, իջեցնում են վերջիններիս որակը և այլն։ Ոչնչացվում են ագրոտեխնիկական, մեխանիկական, քիմիական, կենսաբանական միջոցներով։*

**532. ՄՈՆՈԿԱՐՊ ԲՈՒՅՍԵՐ** — МОНОКАРПИЧЕСКИЕ РАСТЕНИЯ *Տե՛ս ՄԻԱՊՏՂԱԲԵՐ ԲՈՒՅՍԵՐ։*

**533. ՄՈՆՈԿՈՄՊԱԿՏ ԽՈՒՄԲ** — МОНОКОМПАКТНАЯ ГРУППА *Տե՛ս ՄԻԱԿՈՄՊԱԿՏ ԽՈՒՄԲ։*

**534. ՄՈՆՈԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍ** — МОНОКУЛЬТУРНЫЙ УЧАСТОК *Տե՛ս ՄԻԱԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍ։*

**535. ՄՈՆՈՊԱՐՏԵԶ** — МОНОСАД *Տե՛ս ՄԻԱՊԱՐՏԵԶ։*

**536. ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԱՐՎԵՍՏ** — МОНУМЕНТАЛЬНОЕ ИСКУССТВО *Արվեստ, որի պարզ ու խոշոր ձևերով արտահայտված ստեղծագործությունները աչքի են ընկնում գաղափարագեղարվեստական բովանդակության խորությամբ ու վեհությամբ, լանդշաֆտի տարրերի՝ բուսականության, ռելիեֆի ձևերի, ջրային մակերեսների հետ ունեցած օրգանական կապով։ Իր արտահայտությունն է գտնում հուշահամալիրներում։*

**537. ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ** — ДЕТСКИЙ САД-ЯСЛИ *Մանկական հիմնարկ բնակելի միկրոշրջանում։ Սահմանափակ (տեղական) օգտագործման կանաչապատման օբյեկտներից մեկն է։*

**538. ՄՐՐԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ** — ТУРБУЛЕНТНОСТЬ *Օդի մրրկային շարժում։ Խառնում է մթնոլորտի օդային շերտերը։ Սանիտարապաշտպանական զոնաների համար հատուկ մշակված կանաչապատման նախագծերը և ծառաթփային բույսերի տնկման սխեմաները նպաստում են մրրկայնության օգնությամբ դեպի մթնոլորտի վերին շերտերը վնասակար խառնուրդների դուրս բերմանը։*

## Ն

**539. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ** — ПРОЕКТНОЕ ЗАДАНИЕ *Տեխնիկական փաստաթուղթ, որը գաղափար է տալիս ապագա կանաչ զանգ-*

վածի չափերի, ճարտարապետական բնույթի, ծառաբանական կազմի, միկրոկլիմայական և սանիտարահիգիենիկ նշանակության մասին։ Նախագծային առաջադրանքին կցվում է նաև կանաչապատման տեխնիկատնտեսական հիմնավորումը, նախագծման բացատրագիրը և նախահաշվաֆինանսական հաշվարկի հիմնական պայմանները (այն գումարի չափը, որի սահմաններում պետք է կազմել կանաչապատման նախագիծը)՝ ելնելով համանման զբոսայգիների կառուցման գոյություն ունեցող փորձից։ Նախագծային առաջադրանքը կազմում է պատվիրատու կազմակերպությունը։

**540. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՇՐՋԱՆ — ПРОЕКТНЫЙ ПЕРИОД** *Ժամանակամիջոց, որի ընթացքում նախատեսվում է իրագործել կանաչապատման օբյեկտի նախագծումը։ Բնակավայրերի կանաչապատման նախագծային շրջանը կարող է տևել մինչև 20 տարի, որը պայմանավորված է կանաչ շինարարության առանձնահատկություններով (տնկարկների դանդաղ աճ և աստիճանական ձևավորում)։*

**541. ՆԱԽԱԳԾԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ — ТЕХНИКО-ЭКОНОМИЧЕСКОЕ ОБОСНОВАНИЕ ПРОЕКТА** *Նախագծային առաջարկների տեխնիկական լուծման ճիշտ ընտրության և տնտեսական նպատակահարմարության հիմնավորում։*

**542. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՓՈՒԼ — СТАДИЯ ПРОЕКТИРОВАНИЯ** *Կանաչապատման օբյեկտների նախագծման փուլ։ Գոյություն ունեն հետևյալ փուլերը՝ աշխատանքային նախագիծ, տեխնիկաաշխատանքային նախագիծ, տեխնիկական նախագիծ։*

**543. ՆԱԽԱՀԱՇՎԱՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆ — СМЕТНО-ФИНАНСОВЫЙ ПЛАН** *Հանրապետության Մինիստրների խորհրդի կողմից հաստատված գնացուցակով կազմած կանաչապատման նախահաշվաֆինանսական հաշվարկ։ Կանաչապատման համար նախատեսված գումարների իրացման պլան։ Նշվում են գնացուցակի համարը, կատարվելիք աշխատանքի անվանումը, չափի միավորը, քանակությունը մեկ հեկտարի և տվյալ տարածության վրա, միավորի արժեքը ռուբլիներով, գումարը մեկ հեկտարի համար (ռուբլիներով), ընդհանուր գումարը տվյալ տարածության համար (ռուբլիներով)։ Նախահաշվաֆինանսական հաշվարկի մեջ նշվում են կատարվելիք բոլոր աշխատանքների, ինչպես նաև բուսականության գումարային արժեքը։*

**544. ՆԱԽԱՊԱՐՏԵԶ — ПАЛИСАДНИК** *Կանաչ գոտի փողոցի կարմիր գծի և բնակելի շենքի միջև։ Ունենում է մեկից մինչև 10—20 մետր լայնություն։ Պաշտպանում է շենքի ճակատային մասը արևգակի կիզիչ ճառագայթներից և միևնույն ժամանակ գեղեցկացնում է այն։ Սովորաբար օգտագործվում է քարաթմբեր, ծաղկանոցներ, թփերից կամ պտղատու ծառերից, փաթաթվող լիաններից կոմպոզիցիաներ ստեղծելու համար։*

**545. ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ — ГАРМОНИЯ** *Կանաչ զանգվածի առանձին մասերի համաչափությունը, զբոսայգու կոմպոզիցիոն միահյուսման համապատասխանությունը նրա ստեղծման պայմաններին։ Ճարտարապետա-*

ան ներդաշնակություն հասկացությունը ընդգրկում է նաև շրջապատի հետ ստույգ մասշտաբային համապատասխանություն, գեղազարդային մանրամասների և տարրերի փոխադարձ համաձայնեցվածություն, նրա առանձին մասերի ռիթմիկություն, կոմպոզիցիայի ամբողջականություն և միասնություն։

**546. ՆԵՐՔՆԱԲԱԿ** — ПАТИО *Բնակելի տան ներքնաբակ, որտեղ կան հանգստի և տնտեսական ոչ մեծ հրապարակներ, ջրավազան, կանաչապատ տարածքներ (սիզամարգ, ծաղկանոցներ, առանձին ծառեր ու թփեր)։ Բնորոշ էր միջնադարյան Իսպանիայի բնակելի տներին։*

**547. ՆՍՏԱՐԱՆ** — СКАМЬЯ *Պարտեզապուրակային պարզագույն կառուցվածք, զբոսայգու կահույք։ Նախատեսված է այցելուների կարճատև հանգստի համար։ Տեղադրվում է ծառուղիներում, պուրակներում, հրապարակներում, տրանսպորտային ուղիներում և հանգստի վայրերում։ Լինում են ամրացված և շարժական, թիկնակով կամ առանց թիկնակի։ Պատրաստվում են փայտից, մետաղից, քարից կամ դրանց համադրումով։*

## Ճ

**548. ՃԱԲԼՈՆ** — ШАБЛОН *Հարմարանք, որի օգնությամբ հատակագծից բնություն են փոխանցվում ծաղկանոցների նկարները, ստուգվում են զբոսայգիների ճեմուղիների, հրապարակների լայնակի թեքությունները։*

**549. ՇԱՄԻՐԱՄԻ ՊԱՐՏԵԶՆԵՐ** — САДЫ СЕМИРАМИДЫ *Աշխարհի 7 հրաշալիքներից մեկը։ Սանդղափուլերի վրա ստեղծված կախովի պարտեզներ Բաբելոնում։ Աչքի էին ընկնում ծաղիկների (վարդերի) և ջրի առատությամբ։ Վերջինս մղվում էր հատուկ սարքերի օգնությամբ։ Ժամանակակից կախովի պարտեզների նախատիպը։*

**550. ՇԱՏՐՎԱՆ** — ФОНТАН *Ջրհավաքից և ճնշման տակ ջուր ցայտող մեկ կամ բազմաթիվ փողրակներից կազմված կառուցվածք։ Երբեմն զարդարվում է քանդակներով, գունավոր լույսերով։ Պարտեզապուրակային ձևավորման հիմնական տարրերից մեկն է։*

**551. ՇԱՐԱՀԱՐԿ** — ЯРУС *Բուսական համակեցության հողից բարձր կամ ցածր շերտի մի մասը, որին կապված են բույսերի գործառականորեն տարբերվող օրգանները (տերևները կամ ընձյուղները, արմատները, կոճղեզները, պալարները և սոխուկները)։*

**552. ՇԵՇՏՈՒՄ** — АКЦЕНТ *Պարտեզապուրակային արվեստում մանրամասների (ծառերի խմբի, ծառի կամ թփի) ընդգծում (ուրվագծով, գունավորմամբ, լուսավորվածությամբ) ընդհանուր բնապատկերում։*

**553. ՇԵՐՏԱԴԱՐՍՈՒՄ** — СТРАТИФИКАЦИЯ *Դժվար ծլող սերմերը (լորենու, մասրենու, սզնու) պահվում են լավ օդափոխություն և բարձր խոնավություն, ոչ բարձր ջերմաստիճան (0+7°) ունեցող ավազում, թեփում (1:3 հարաբերությամբ)։*

554. ՇԻԹԱԿԱԹԻԼԱՅԻՆ ՋՐՈՒՄ — СТРУЙНОКАПЕЛЬНЫЙ ПОЛИВ *Ջրում՝ ջրի ճնշման կարգավորում ունեցող բազմաէթիլենային ճկուն խողովակների «Սոլի-պլայս» համակարգով։ Ջրումից բացի, «Սոլի-պլայս» համակարգը օգտագործվում է նաև բույսերին պարարտանյութեր տալու, հողը լուծույթներով (ֆորմալդեհիդ) մանրէազերծելու համար։*

555. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ — СТРОИТЕЛЬНЫЙ УЧАСТОК *Այս կամ այն օբյեկտի՝ այդ թվում պարտեզի կամ զբոսայգու, շինարարության համար առանձնացված տարածք։*

556. ՇԻՎԱԳՈՅԱՑՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ — ПОБЕГОПРОИЗВОДИТЕЛЬНАЯ СПОСОБНОСТЬ *Ծառի՝ նախորդ տարվա աճածի վրա նոր ուժեղ ընձյուղներ առաջացնելու ունակությունը։ Ինչքան շատ են առաջանում ուժեղ ընձյուղներ, այնքան բարձր է շիվագոյացման ունակությունը, որից էլ կախված է էտման բնույթը։*

557. ՇԻՎԱՆՄԱՆ ԲՈՒՅՍԵՐ — ПРУТЬЕВИДНЫЕ РАСТЕНИЯ *Երկար, չճյուղավորված շիվերով բույսեր (ուռենի, օրոճ և այլն)։*

558. ՇՈԳԱԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ — ЖАРОУСТОЙЧИВОСТЬ *Բարձր ջերմաստիճաններին դիմանալու բույսերի ունակությունը։ Հատուկ է հիմնականում հարավային և հատկապես կիսաանապատային ու անապատային ծագում ունեցող բույսերին։ Պայմանավորված է գոլորշիացման փոքր գործակցով և պաշտպանիչ մի շարք հարմարանքներով (տերևները ծածկված են մոմաշերտով, խավով, մազմզուկներով, տերևների գույնը բաց մոխրավուն է)։ Շատ հաճախ տերևները խիստ մանրանում են, որոշ դեպքերում (հատկապես խոնավության խիստ պակասի դեպքում) վերածվում են փշերի*

559. ՇՐՋԱՆԱՑՈՒՄ — РАЙОНИРОВАНИЕ *Լանդշաֆտի բնորոշ մասերի առանձնացում կանաչապատման խոշոր օբյեկտների նախագծման ժամանակ (օրինակ, հանգստի գոտիներ անտառապուրակների մոտ)։*

## Ո

560. ՈՃ — СТИЛЬ *Տվյալ պատմական ժամանակահատվածում պարտեզապուրակային արվեստում տիրապետող կոմպոզիցիոն— հատակագծային, շինարարատեխնիկական սկզբունքների և եղանակների ամբողջությունը։ Սերտորեն կապված է և արտացոլում է հասարակության սոցիալական կարգը, կանաչ շինարարության մակարդակը և բնույթը, գեղագիտական մտահղացումները և գեղարվեստական ճաշակները։*

*Պարտեզապուրակային արվեստի ժամանակակից ոճերն են՝ դասական-կանոնավոր, լանդշաֆտային-բնապատկերային, խառը կամ բարդ։*

561. ՈՌՈԳՄԱՆ ՄՈԴՈՒԼ — ОРОСИТЕЛЬНЫЙ МОДУЛЬ *Ջրի քանակ, որը ոռոգման նպատակով միավոր ժամանակահատվածում տրվում է միավոր տարածությանը (լ/վրկ 1 հա վրա)։*

**562.** ՈՌՈԳՈՎԻ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ — ОРОШАЕМОЕ ЗЕМЛЕДЕЛИЕ *Հողագործություն՝ արհեստական ոռոգման կիրառմամբ։ Բնորոշ է հատպես չորային կլիմա ունեցող շրջաններին։*

**563.** ՈՌՈԳՈՒՄ — ИРРИГАЦИЯ *Դաշտերի, բանջարանոցների, տնկարկների և այլ ագրոհամակարգերի (ագրոցենոզների) արհեստական ջրում։*

**564.** ՈՍՏ — СУК *Ծառի բնից աճած խոշոր կողային ճյուղ, որը կրում ընձյուղներ, տերևներ, ծաղիկներ, պտուղներ։*

**565.** ՈՍՏԱՀԱՏԻՉ — СУЧКОРЕЗ *Պարտեզային գործիք։ Օգտագործվում ծառերի ընձյուղները և ճյուղերը կտրելու համար։*

**566.** ՈՐՄՆԱՊԱՐՏԵԶ — НАСТЕННЫЙ САД *Թեք լանջի, նեցուկապատեր ունեցող, բնական ձևի քարերից դասավորված գեղազարդային կացվածք։ Քարերի միջև եղած ճեղքերը լցված են հողով և աճեցվում են զարդային խոտաբույսեր (չորասեր, ավելի քիչ՝ խոնավ ժայռերի բույսեր)։*

## Չ

**567.** ՉԱՓԱՎՈՐ ԱՃՈՂ ԾԱՌԵՐ — УМЕРЕННОРАСТУЩИЕ ДЕРЕВЬЯ *Ծառեր, որոնք բնորոշվում են վեգետացիայի ընթացքում ընձյուղների 0,5—0,6 մ հասնող աճով։ Այդպիսի ծառերից են թեղին, ժայռային կաղնին, սովորական բոխին, մանրատերև լորենին, կովկասյան և սիբիրյան գեղմանի և փշավոր եղևնիները, վիրգինյան գիհին, արևմտյան կենսածառ, թփերից՝ դրախտածառ, եղրևանին, խենոմելեսը, սրնգենին և այլն։*

**568.** ՉԵԶՈՔ ԲՆԱՊԱՏԿԵՐ — НЕЙТРАЛЬНЫЙ ПЕЙЗАЖ *Ջրոսայգու տարածքի մի հատված, որը իր հատուկ ձևավորմամբ ուշադրություն չի գրավում։*

**569.** ՉԵԶՈՔ ԲՈՒՅՍԵՐ — НЕЙТРАЛЬНЫЕ РАСТЕНИЯ *Ցերեկվա տևողության կամ հողի* pH *նկատմամբ անտարբեր բույսեր։*

**570.** ՉԻՆԱԿԱՆ ՊՈՒՐԱԿԻԿ — КИТАЙСКАЯ РОЩИЦА *Ծառերի տնկարկ ամֆիթատրոնի ձևով։ Օգտագործվել է Մոսկվայում XVIII դարի վերջում Շերեմետևների կալվածք, Օստանկինո)։*

**571.** ՉԻՆԱՄՊԱՍ ՊԱՐՏԵԶ — САД-ЧИНАМПАС *Լողացող պարտեզներ Մեքսիկայում։ Ծառի ճյուղերից և եղեգներից պատրաստված ոչ մեծ կղզյակներ, որոնց վրա հող է լցված և տարբեր բույսեր են տնկված։*

**572.** ՉԿԱՆԱՉԱՊԱՏՎՈՂ ՏԱՐԱԾՔ — НЕОЗЕЛЕНЯЕМАЯ ТЕРРИТОРИЯ *Քաղաքամերձ գոտու կանաչապատման ոչ ենթակա հատված։ Այդպիսին են, օրինակ, դաշտային և բանջարանոցային կուլտուրաների, խոտհարքերի, արոտավայրերի համար նախատեսված գյուղատնտեսական հանդակները, ինչպես նաև քարուտները, աղուտները, օգտակար հանածոների գործող հանքերը և այլն։*

573. ՉՈՐԱԲՈՒՅՍԵՐ — КСЕРОФИТЫ *Անբավարար խոնավության պայմաններում ապրող, մթնոլորտային և հողային չորայնությանը դիմացող բույսեր։ Սովորաբար բույսեր են, որոնք հարմարված են 500 մմ-ից պակաս տեղումներ ունեցող վայրերում աճելուն։ Ունեն գոլորշիացումը փոքրացնող մի շարք հարմարանքներ (նեղ, կոշտ տերևներ, խավոտություն և այլն)։ Հիմնականում տափաստանների, կիսաանապատների և անապատների բույսեր են։*

574. ՉՈՐԱԾԱՂԻԿՆԵՐ — СУХОЦВЕТЫ, ИММОРТЕЛИ *Տե՛ս ԱՆԹԱՌԱՄՆԵՐ։*

575. ՉՈՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ — СУХОВЕРШИННОСТЬ *Բույսերի սնուցման անբավարարության (խանգարման), արմատատերևային փոխանակության, ամբողջ էկոլոգիական պայմանների խանգարման արդյունք։*

576. ՉՈՐԱՅԻՆ ՆՈՍՐ ԱՆՏԱՌ — КСЕРОФИЛЬНОЕ РЕДКОЛЕСЬЕ *Ծառաթփային խիտ բուսականության զարգացման համար անհրաժեշտ խոնավության անբավարարության պայմաններում աճած անտառ։ Այդպիսին են պուրակային, լեռնային անտառները։*

577. ՉՐԱՏՈՒՄ — СКАРИФИКАЦИЯ *Որոշ բույսերի (մասրենի, գիհի, հոնի, լորենի) դժվար ծլող սերմերի նախացանքային մշակում։ Կատարվում է սերմային թաղանթը մեխանիկական (ավազով, զմռնիտի թղթով) վնասելու միջոցով։ Նպատակ ունի արագացնել ծլման պրոցեսը։*

## Պ

578. ՊԱԼԱՐ — КЛУБЕНЬ *Ստորգետնյա ընձյուղի հաստացած, կարճացած մաս, որը կրում է բողբոջներ (աչքեր)։ Սննդանյութերի պահեստավորման ու վեգետատիվ բազմացման օրգան է։*

579. ՊԱԼԱՐԱԲՈՒՅՍԵՐ — КЛУБНЕВЫЕ РАСТЕНИЯ *Հողում սննդանյութեր պահեստավորող օրգաններ՝ պալարներ առաջացնող բույսեր։*

580. ՊԱԼԱՐԱՍՈԽՈՒԿ — КЛУБНЕЛУКОВИЦА *Բույսերի վեգետատիվ բազմացման ստորգետնյա օրգան։ Ունի պալարային ծագում։ Տեսքով նման է սոխուկի, բայց զուրկ է թեփուկներից։*

581. ՊԱԼԱՐԱՐՄԱՏ — КЛУБНЕКОРЕНЬ *Պալար հիշեցնող ձևափոխված արմատ։ Օրինակ, գեորգինու արմատները։*

582. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՆԱՉ ԳՈՏԻ — ЗАЩИТНАЯ ЗЕЛЕНАЯ ЗОНА *Բնական կամ արհեստական անտառատնկարկներ քաղաքների, ձեռնարկությունների շուրջը։ Աշխատավորների հանգստի վայր է, միաժամանակ քաղաքը ապահովում է մաքուր օդով։*

583. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՏՆԿԱՐԿՆԵՐ — ЗАЩИТНЫЕ НАСАЖДЕНИЯ *Արդյունաբերության և ավտոտրանսպորտի արտանետումներից, աղմուկից, քամուց, փոշուց, ձնահյուսերից, էրոզիայից պաշտպանվելու, շրջապատող միջավայրի պահպանության գործում կարևոր դեր ունեցող կանաչապատման օբյեկտներ։ Հատուկ նշանակության տնկարկներ են։ Ստեղծվում են գազ*

փոշեկայուն բուսատեսակներից. 20—30 մ լայնության գոտիների տեսքով՝ լինում են քամու համար միջանցիկ կամ ցանցկեն (մինչև 60 % բացվածքներով), քամու համար ոչ միջանցիկ (սաղարթի ցանցկենությունը 30 %) և, ձնակուտակման նպատակով, խիտ տնկված։

**584. ՊԱՍՍԻՎ ԳՈՒՅՆ** — ПАССИВНЫЙ КОЛЕР *Երկնագույն, կապույտ, կանաչ գույները։ Ընդհանուր հանրանկարի վրա դրանք կարծես «մի կողմ են քաշվում», անցնում են հեռապատկերի խորքը։ Ամենապասիվ, մուգ և «սառը» գույնը կապույտն է։ Գուրակային կոմպոզիցիաներում սովորաբար պասիվ գույները տեղադրվում են բնապատկերի առաջին պլանում։ Երբ ցանկանում են շեշտել տվյալ օբյեկտի հեռավորությունը, բնապատկերի հետին պլանը հագեցնում են պասիվ գույներով։*

**585. ՊԱՏԱՏԱՎԱՆԴԱԿ** — ТРЕЛЬЯЖ *Ուղղաձիգ կանաչապատման տարր, հարթ հիմնակմախք՝ փաթաթվող բույսերի (վարդերի, բաղեղների և ուրիշների) համար։ Պատրաստվում է փայտից, մետաղից։ Վանդակավորված է տարբեր չափի բներով։ Երկարությունը և բարձրությունը կախված են փաթաթվող բույսի տեսակից և օգտագործման բնույթից։ Տեղադրվում է պարտեզներում, փողոցներում, կամուրջների աստիճանների երկարությամբ։ Միաժամանակ կարող է ծառայել որպես ցանկապատ։*

**586. ՊԱՏԱՏԱՅՈՂՈՒՆ** — ПЛЕТЬ *Հիմնականում փաթաթվող բույսերի միամյա ընձյուղ կամ ուռենու և ուրիշ բույսերի երկար, բարակ շիվ։*

**587. ՊԱՏՄԱԿԱՆ ՋՐՈՍԱՅԳԻ** — ИСТОРИЧЕСКИЙ ПАРК *Անցյալի պարտեզաշինական կուլտուրայի օրինակ։ Որպես հնության հուշարձան պետության կողմից ենթակա է պահպանության։*

**588. ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՆԱՅԱՎՈՐՈՒՄ** — ИСТОРИКО-АРХИТЕКТУРНОЕ ЗОНИРОВАНИЕ *Մշակույթի հուշարձանների տարածքի զոնայավորում։ Սկզբնականին մոտ միջավայրի պայմաններ ստեղծելու նպատակով պատմական հատակագծման հայտնաբերում։*

**589. ՊԱՏՎԱՍՏ** — ПРИВИВКА *Մի բույսի վեգետատիվ օրգանի որոշ մասի տեղադրումը այլ բույսի վրա և վերջիններիս սերտաճումը։ Պատվաստը հնարավոր է միայն նույն ցեղի տարբեր տեսակների կամ ազգակից ցեղերի ներկայացուցիչների միջև։ Բազմացման կարևոր միջոցառում է պտղազարդային պարտիզագործության բնագավառում։ Պատվաստի միջոցով կարելի է բազմացնել պարտեզային ձևեր (վարսավոր, բրգաձև, կոնաձև, կլորասաղարթ, սպիտակատերև, ոսկեգույն, կարմրասաղարթ, գաճաճ և այլն), որոնց սերմերի ցանքից մայրական հատկանիշներ կրող շատ քիչ բույսեր են ստացվում։ Պատվաստի ձևերն են՝ մերձապատվաստ, կտրոնապատվաստ, ճեղքապատվաստ, աչքապատվաստ։*

**590. ՊԱՏՎԱՍՏԱԿԱԼ** — ПОДВОЙ *Բույս, որի վրա պատվաստ է կատարվում։ Մեծամասամբ սովորական, վայրի հատկանիշներով բույսեր են։*

**591. ՊԱՏՎԱՍՏԱՑՈՒ** — ПРИВОЙ *Բույս, որից վերցնում են կտրոնը կամ աչքը՝ պատվաստակալի վրա տեղափոխելու նպատակով։ Աչքի է ընկ-*

նում գեղազարդային արժեքավոր հատկանիշներով (սաղարթի գեղեցիկ ձև, գույն, ծաղիկների լիաթերթություն, մեծություն և այլն), որոնք փոխանցվում են պատվաստակալին։

592. ՊԱՏՈՒՀԱՆ — ОКНО Բնապատկերին գեղատեսիլություն տալու նպատակով անտառային զանգվածներում կամ ծառախմբերում արված լուսանցքներ։ Մինչև 1 հա, ծառերից ու թփերից ազատ, խոտածածկ տարածք է։ Նպաստում է բնապատկերի ընկալման փոփոխմանը։

593. ՊԱՐԱՊՈՒՏ — ПУСТЫРЬ Տարածքի տնտեսական նպատակամղված օգտագործում չունեցող հատված։ Այդպիսին են դեռևս չկառուցապատված, բայց արդեն տնտեսական այլ օգտագործումից հանված հողամասը, շինարարական աղբով աննպատակ աղտոտված տարածքը և այլն։

594. ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹ — УДОБРЕНИЕ Բույսերի լավագույն աճի և զարգացման համար անհրաժեշտ սնուցման տարրեր։ Լինում են հանքային (ազոտ, ֆոսֆոր, կալիում), միկրոտարրերի (երկաթ, մարգանեց, մագնիում), օրգանական (միզանյութ, գոմաղբ), օրգանահանքային պարարտանյութեր։

595. ՊԱՐՏԵԶ — САД Կանաչապատման օբյեկտ։ Որոշակի հատակագծային կոմպոզիցիայում միավորված բեմահարթակ, մարզահրապարակներ, ծառուղիներ, մանկական խաղահրապարակներ, ջրամբարներ ունեցող և տնկարկներով, մարգագետիններով, ծաղկանոցներով ծածկված 5—10 հա-ից ոչ պակաս տարածք։ Նախատեսված է հետիոտն մատչելիության սահմանում ապրող բնակչության կարճատև հանգստի համար։ Լինում են քաղաքային, շրջանային բնակելի թաղամասի և հատուկ նշանակության (ակումբներին, հիվանդանոցներին, առողջարաններին, դպրոցներին, արդյունաբերական ձեռնարկություններին կից) պարտեզներ։

596. ՊԱՐՏԵԶԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԱՐԱՀԵՏԻ ՊԱՏՎԱԾՔ — ОДЕЖДА САДОВО- ПАРКОВОЙ ДОРОЖКИ Հետիոտն շարժման բեռնվածությունը կրող հիմնական տարր։ Բաղկացած է ծածկից (ցանքս, սալիկ), հիմքից (տարբեր բաղադրամասով խիճ) և ավազի փռվածքաշերտից։

597. ՊԱՐՏԵԶԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԱՐՎԵՍՏ — САДОВО-ПАРКОВОЕ ИСКУССТВО Կանաչապատման օբյեկտների՝ զբոսայգիների, անտառապուրակների, պարտեզների, պուրակների, ճեմուղիների նախագծման և ստեղծման արվեստ։ Հիմնված է բնական (հող, բույս, ջուր, քար) և այլ նյութերը կոմպոզիցիայի, հեռանկարի, լույսի և գույնի տեսության օրենքները օգտագործելու ունակության վրա։ Գեղարվեստական պատկերներով արտահայտվում է որոշակի գաղափարական բովանդակություն։

598. ՊԱՐՏԵԶԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏ — САДОВО- ПАРКОВЫЙ ЛАНДШАФТ Կուլտուրական կամ բնական լանդշաֆտի մի հատված, որը վերափոխվել է մարդու նպատակասլաց գործունեության հետևանքով։ Սահմանափակված է որոշակի սահմաններով, որում բնական տարրերը (ռելիեֆ

ջուր, բուսականություն, ռելիեֆ) զուգորդվում են նպատակահարմար տեղադրված արհեստական կառուցվածքների (ճարտարապետական փոքր ձևեր և այլն) հետ, առաջացնելով փոխկապված և փոխպայմանավորված ամբողջություն։ Մարդկանց կարճատև հանգստի միջավայր է։

**599. ՊԱՐՏԵԶԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ** — САДОВО-ПАРКОВЫЕ СТРОИТЕЛЬНЫЕ РАБОТЫ *Արահետների, հրապարակների, ջրամբարների, պարտեզապուրակային տարբեր կառույցների շինարարության, կանաչապատման օբյեկտում սարքավորումների մոնտաժի և տեղադրման աշխատանքներ։*

**600. ՊԱՐՏԵԶԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** — САДОВО-ПАРКОВОЕ СТРОИТЕЛЬСТВО *Կանաչապատման օբյեկտների ստեղծման տեսություն և պրակտիկա։ Ընդգրկում է տարածքը ագրոտեխնիկական և ինժեներական տեսակետից նախապատրաստելու և բարեկարգելու աշխատանքներ, որոնք կատարվում են նպատակահարմար ձևով մշակված նախագծերի ու նախահաշիվների հիման վրա։*

**601. ՊԱՐՏԵԶԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ՍԱՆԴՈՒՂՔ** — САДОВО-ПАРКОВАЯ ЛЕСТНИЦА *Քարե, բետոնե կամ փայտյա կառուցվածք, որը հնարավորություն է տալիս հաղթահարել լանջի բարձրությունների տարբերությունը և անցնել մեկ սանդղափուլից մյուսը։ Պարտեզապուրակային սանդուղքի աստիճանների լայնությունը ընդունված է 38—40 սմ, բարձրությունը՝ 10—12 սմ։*

**602. ՊԱՐՏԵԶԱՅԻՆ ՁԵՎ** — ФОРМА *Տաքսոնոմիական միավոր։ Հատկապես լայնորեն օգտագործվում է կանաչ շինարարության բնագավառում (գեղազարդային ծառաբուծություն, ծաղկաբուծություն), սելեկցիայում։ Բույսի ցեղի և տեսակի անունից հետո նշվում է պարտեզային ձևը։ Օրինակ՝* Acer platanoides Schwedleri (C. Koch) Schwerin.

**603. ՊԱՐՏԵԶԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ** — САДОВЫЙ КОДЕКС *Տե՛ս ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՕՐԵՆՍԳԻՐՔ։*

**604. ՊԱՐՏԻԶԻ ԿԱՄ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՏԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ** — ЕМКОСТЬ САДА ИЛИ ПАРКА *Այցելուների որոշակի քանակ սպասարկելու հնարավորությունը բնութագրող ցուցանիշ։ Հաշվարկվում է ըստ կանաչապատման օբյեկտի շրջակայքի բնակչության քանակի։ Արտահայտվում է բացարձակ (մարդ/հա) և հարաբերական (%) մեծություններով։ Օգտագործվում է բնակավայրի կանաչապատման հեռանկարային պլանի կազմման հետ կապված հաշվարկներում։*

**605. ՊԱՐՏԵՐ** — ПАРТЕР *Գեղազարդային ցածրահասակ բույսերից հորիզոնական հարթությունում երկրաչափական ձևերով ստեղծված կոմպոզիցիա։ Ստեղծվում է զբոսայգիների գլխավոր ծառուղիներում, վեհակերտ կառույցների և հուշարձանների, ինչպես նաև հասարակական ու վարչական շենքերի, կանոնավոր պարտեզների մուտքերի մոտ։ Պարտերում հատկապես շատ տեղ է հատկացվում գորգային բուսատեսակներից ստեղծված սիզա-*

մարգին։ Ջրամբարների, արձանների, շրջակայքի գեղազարդային ձևավորման հետ միասնական պատկեր է ստեղծում։ Բնութագրվում է գծերի ու ձևերի խստությամբ։

**606. ՊԱՐՏԵՐԱՅԻՆ ՊԱՐՏԵԶ — ПАРТЕРНЫЙ САД** *Սիզամարգերի, ծաղկանոցների և ջրամբարների գերակշռությամբ կանոնավոր ոճի պարտեզ։ Օգտագործվող ծառերը և թփերը սովորաբար տեղադրվում են սիզամարգերի և ծաղկանոցների ծայրամասերում, ենթարկվում են կանոնավոր խուզման (դրանց տրվում է գնդի, խորանարդի, քառակուսու և այլնի ձև)։*

**607. ՊԱՐՏԵՐԱՅԻՆ ՍԻԶԱՄԱՐԳ — ПАРТЕРНЫЙ ГАЗОН** *Կանոնավոր պարտեզներում և խառը տիպի զբոսայգիների կանոնավոր հատակագիծ ունեցող հողամասերում, վարչական և հասարակական շենքերի, զբոսայգիների մուտքի մոտ, փողոցների վայելչատես մասերում ստեղծվող համածածկույթ։ Ստեղծվում է հիմնականում հացազգի այնպիսի խոտերի ցանքսով, ինչպիսիք են դաշտավլուկը կամ շյուղախոտը։ Բնորոշվում է գույնի միատեսակությամբ, գեղազարդային բարձր հատկանիշներով։*

**608. ՊԱՐՏԻԶԱԲԱՆՎՈՐ — САДОВЫЙ РАБОЧИЙ** *Կանաչ շինարարության հիմնական բանվորական ուժ։ Կատարում է պարտեզային ամեն տեսակի աշխատանք։ Տարբերում են օժանդակ աշխատանքներ կատարող (հողի հատակագծում, փոսերի քանդում ու լցնում և այլն) 2—3-րդ կարգի և հիմնական աշխատանքներ կատարող (սիզամարգի ցանքս, բույսերի տնկում, ծառերի սաղարթի խուզում և այլն) 5—6-րդ կարգի պարտիզաբանվորներ։*

**609. ՊԱՐՏԻԶԱԲՈՒՅՍ — САДОВОЕ РАСТЕНИЕ** *Պարտեզում աճող, մշակվող գեղազարդային բույս։ Օրինակ, ձնագնդի, ի տարբերություն վայրի աճող սովորական բռնչիից։*

**610. ՊԱՐՏԻԶԱԳՈՐԾ — САДОВОД** *Նախկինում տերմինը վերաբերում էր ինչպես ծաղկաբուծության, գեղազարդային ծառաբուծության, այնպես էլ պտղաբուծության ու բանջարաբուծության մասնագետին (այժմ՝ ԳԻՏՆԱԿԱՆ ՊԱՐՏԻԶԱԳՈՐԾ)։*

**611. ՊԱՐՏԻԶԱՀՈՂ — САДОВАЯ ЗЕМЛЯ** *Մի շարք բաղադրամասերից (ճմահող, տերևահող, տորֆահող, փտած գոմաղբ, ավազ և այլն) կազմված հողային խառնուրդ։ Բնորոշվում է տարբեր սննդարարությամբ և մեխանիկական կազմով։ Ըստ մեխանիկական կազմի լինում է թեթև, միջին, ծանր։ Թեթև պարտիզահողը կազմված է տորֆահողի 3, տերևահողի 1, գետային ավազի 1,5 մասերից։ Ծանր պարտիզահողը կազմված է ճմահողի 2, փտած գոմաղբի 2, տերևահողի 2, գետային ավազի 2, փայտածուխի 1,5 մասերից։ Միջին պարտիզահողը կազմված է տորֆահողի 2, տերևահողի 1, փտած գոմաղբի 1, գետային ավազի 1,5, փայտածուխի 1 մասերից։*

**612. ՊԱՐՏԻԶԱՏՆԱԿ — САДОВЫЙ ДОМИК** *Բաց կամ մասամբ ծածկված շենք։ Հանգստի կամ վատ եղանակից պատսպարվելու համար օգտագործվող կառույց պարտեզում։*

613. ՊԱՐՏԻԶՈՒՂԻ — САДОВАЯ ДОРОЖКА Կանաչապատման օբյեկտների հատակագծային տարր։ Ծառայում է այցելուների անցուդարձի կազմակերպմանը։ Լինում են գլխավոր, երկրորդական և լրացուցիչ (միացնող պարտիզուղիներ)։

614. ՊԵՐԻՍՏԻԼ ՊԱՐՏԵԶ — САД ПЕРИСТИЛЬ Ուղղանկյունների բաժանված հարթ, կանոնավոր պարտեզ։ Ունի հստակ առանցքային կառուցվածք։ Ստեղծվում է քաղաքից դուրս գտնվող շենքերի առջև։ Ձևավորվում է սիզամարգով՝ եզերված ծաղկավոր եզրաշերտով, քանդակով կամ շատրվանով։ Ենթարկվում է շենքի հատակագծին ու ճարտարապետությանը։

615. ՊԼԱՆԻՄԵՏՐ — ПЛАНИМЕТР Գործիք, որով անկանոն, հիմնականում կորագիծ ֆիգուրների մակերեսների ճշգրիտ մեխանիկական հաշվարկ են կատարում։

616. ՊՈԼԻԿԱՐՊ ԲՈՒՅՍ — ПОЛИКАРПИК Տե՛ս ԲԱԶՄԱՊՏՂԱԲԵՐ ԲՈՒՅՍ։

617. ՊՈԼԻԿՈՄՊԱԿՏ ԽՈՒՄԲ — ПОЛИКОМПАКТНАЯ ГРУППА Տե՛ս ԲԱԶՄԱԿՈՄՊԱԿՏ ԽՈՒՄԲ։

618. ՊՈԼԻԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍ — ПОЛИКУЛЬТУРНЫЙ УЧАСТОК Տե՛ս ԲԱԶՄԱԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍ։

619. ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌ — ПЛОДОВОЕ ДЕРЕВО Գեղագարդային նպատակներով մշակվող բույս, որը նաև ուտելի պտուղներ է տալիս (ֆեյխոա, ձիթենի, խնձորենի, տանձենի, բալենի և այլն)։

620. ՊՐԱՏՈ — ПРАТО Միջնադարին բնորոշ հասարակական պարտեզ։ Ստեղծվում էր ունևոր բնակիչների զբոսանքի համար, քաղաքի բերդապարիսպներից դուրս։

621. ՊՈՒՐԱԿ — СКВЕР Քաղաքի կանաչապատման օբյեկտ։ Տեղադրվում է հրապարակում, փողոցների խաչմերուկում կամ բնակելի թաղամասի փողոցին հարող հատվածում։ Գրավում է 0,15—2,0 հա տարածություն։ Ունի կածաններ, փոքրիկ հրապարակներ, սիզամարգեր, ծաղկանոցներ, ծառերի, թփերի առանձին խմբեր։ Նախատեսվում է հետիոտների կարճատև հանգստի, ճարտարապետական անսամբլի գեղարվեստական ձևավորման համար։

## Ջ

622. ՋԵՐՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ — ЖАРОСТОЙКОСТЬ Օդի ցածր հարաբերական խոնավության պայմաններում դրական բարձր ջերմաստիճաններին դիմանալու բույսերի ունակությունը։ Ջերմակայուն բույսերից են փշենին, կարմրանները, գիհիները և այլն։

623. ՋԵՐՄԱՆՈՑ — ТЕПЛИЦА Բույսեր աճեցնելու կամ արագ կերպով սածիլներ ստանալու համար ապակեպատված կամ թաղանթով ծածկված, ջեռուցում ունեցող կառույց։ Սովորաբար աճեցվում են ջերմասեր

մերձարևադարձային բույսեր կամ ծաղկաբույսեր (վարդեր, փողաշուշաններ, մեխակներ, քրիզանթեմներ)՝ արագ ծաղկման հասցնելու և կտրելու համար։ Ըստ կառուցվածքի ջերմատները լինում են սովորական հիմնակմախքային (ապակեծածկ, թաղանթածածկ), աշտարականման (ջրաշրջիկ տանիքով՝ ջուրը շրջապտույտ է կատարում ջերմատան սնամեջ տանիքով ու պատերով), օդաճնշումային (օդահենարանային թաղանթով), օդաճնշումահիմնակմախքային, խցիկավոր և կոմբինացված։

624. ՋԵՐՄԱՆՈՑԱՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ — ТЕПЛИЧНО-ПАРНИКОВОЕ ХОЗЯЙСТВО Կանաչ շինարարությունում օգտագործվող տնկանյութի արտադրության կոմպլեքս։ Ունի ջերմատներ, ջերմոցներ, օժանդակ հողամասեր (չծածկված գրունտ), կտրոնների արմատակալման տեղամասեր, տնկանյութի տեսակավորման բաժին, շրջանակների վերանորոգման արհեստանոցներ, տնտեսական բակ, պահեստ, կաթսայատուն։

625. ՋԵՐՄԱՏՈՒՆ — ОРАНЖЕРЕЯ Արհեստական կլիմա ունեցող ապակե տանիքով կառույց։ Նախատեսված է կանաչ շիվապատվաստման, մերձարևադարձային և այլ էկզոտ բույսերի հավաքածուների, ինչպես նաև ձմռանը ծաղիկների և բանջարեղենի աճեցման համար։

626. ՋԵՐՄՈՑ — ПАРНИК Սածիլների, սերմնաբույսերի աճեցման, տնկաշիվերի արմատակալման կամ ծաղկամանային բույսերի աճը շարունակելու համար ապակեպատ կամ թաղանթածածկ կառուցվածք, հանվող շրջանակներով մարգ։ Ըստ նշանակության լինում է սառը, կիսասառը և տաք։ Ներկայումս կենսավառելիքի՝ գոմաղբի քայքայման ընթացքում անջատվող ջերմության փոխարեն լայն կիրառում են ստանում տեխնիկական ջեռուցում ունեցող (գոլորշաօդային, էլեկտրական, արդյունաբերական ձեռնարկությունների թափոն տաք ջրերով և այլն) ջերմոցները։

627. ՋՐԱՄԲԱՐ — ВОДОЕМ Լանդշաֆտի կամ կանաչապատման օբյեկտի բնական կամ արհեստական տարր (լիճ, արհեստական լճակ, գետակ և այլն), որը գրոսայգու կոմպոզիցիայում ուժեղացնում է նրա գեղագիտական ազդեցությունը։ Ջրամբարները ստորաբաժանվում են ջրավազանների և արհեստական լճակների։

628. ՋՐԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐ — ВОДНЫЕ РАСТЕНИЯ Ջրյա բույսեր։ Ստորաբաժանվում են լողացող ջրոսպերի, ջրիմուռների և ջրամբարի հատակին ամրացած, բայց ջրի վրա տերևներ ունեցող բույսերի (սպիտակ ջրաշուշան, վիկտորիա, ցիպերուս, լոտոս, նունուֆար)։ Օգտագործվում են ջրամբարների, ջրավազանների, ակվարիումների և այլնի կանաչապատման համար։

629. ՋՐԱՆՑՈՒՅՑ — АКВЕДУК Կամուրջ՝ ձորի կամ կիրճի վրայով ջրանցք կամ խողովակաշար անցկացնելու համար։

630. ՋՐԱՎԱԶԱՆ — БАССЕЙН Կանաչապատման օբյեկտի վայելչատես մասի գեղազարդային ձևավորման կամ երեխաների լողանալու համար նախատեսված արհեստական ջրամբար։

**631. ՋՐԱՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ** — ВОДОПОЛЬЗОВАНИЕ *Ջրային ռեսուրսների օգտագործման կարգը, պայմանները և ձևերը։*

**632. ՋՐՄԱՆ ՆՈՐՄԱ** — НОРМА ПОЛИВА *Միավոր տարածության (տնկարանի, սիզամարգի, ծաղկանոցի) կամ մեկ ծառի նորմալ աճի ու զարգացման և տեղափոխից հետո կպչելու համար անհրաժեշտ ջրի քանակը լիտրերով կամ խորանարդ մետրերով։ Հաշվարկվում է բանաձևով։*

**633. ՋՐՎԵԺ** — ВОДОПАД *Տարբեր մակարդակների վրա գտնվող ջրամբարների միջև բնական կամ արհեստականորեն ստեղծված թափվող ջրի հոսանք։ Արհեստական ջրվեժները ստեղծվում են պարտեզների և զբոսայգիների ռելիեֆի անկումների վրա (տե՛ս նաև՝ ՍԱՆԴՂԱՋՐՎԵԺ)։*

**634. ՋՐՈՒՄ** — ПОЛИВ *Չորային շրջանում բույսերի մշակման համար կամ գեղազարդային բույսերի տեղափոխից անմիջապես հետո հողի անհրաժեշտ խոնավության պակասը լրացնելուն նպատակաուղղված ագրոտեխնիկական միջոցառում։ Ջրման համար կիրառվում են ինքնահոս ջրանցքներ, խողովակների վերգետնյա և ստորգետնյա ցանց, անձրևացման ու մառախուղառաջացնող սարքեր։*

## Ռ

**635. ՌԱԲԱՏԿԱ** — РАБАТКА *Տե՛ս ԾԱՂԿԱՄԱՐԳ։*

**636. ՌԵԼԻԿՏ** — РЕЛИКТ *Տե՛ս ՄՆԱՑՈՒԿ։*

**637. ՌԵԼԻԿՏԱՅԻՆ ՏԵՍԱԿ** — РЕЛИКТОВЫЙ ВИД *Տե՛ս ՄՆԱՑՈՒԿԱՅԻՆ ՏԵՍԱԿ։*

**638. ՌԵԿՐԵԱՑԻԱ** — РЕКРЕАЦИЯ *Ուժերի վերականգնում արձակուրդի, դպրոցական արձակուրդների, հանգստյան օրերի, դպրոցական դասամիջոցների, ընդմիջման ժամանակ։*

**639. ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ԶՈՆԱ** — РЕКРЕАЦИОННАЯ ЗОНА *Մարդկանց ուժը և առողջությունը վերականգնող հանգստի համար առանձնացվող տարածք քաղաքում և քաղաքամերձ վայրերում։ Քաղաքում ռեկրեացիոն զոնա են հանդիսանում պարտեզները, զբոսայգիները, մերձքաղաքային վայրերում՝ անտառապուրակները, հանգստի գոտիները։*

**640. ՌԻԹՄ** — РИТМИКА *Վեգետացիայի ընթացքում ընձյուղի աճի բնույթը (մեկ կամ մի քանի աճ, դանդաղ կամ արագ աճ, արմատների և ընձյուղների աճի հերթագայում)։ Բույսի ռիթմը նրա ծագման վայրի ցուցանիշներից մեկն է։*

**641. ՌՈԿԱՐԻՈՒՄ** — РОКАРИЙ *Տե՛ս ՔԱՐԱԳԱՐՏԵԶ։*

**642. ՌՈՄԱՆՏԻԶՄ** — РОМАНТИЗМ *Ոճ պարտեզապուրակային արվեստում։ Ստեղծում է խաղաղ գյուղական բնապատկերներով, արհեստական ավերակներով, գոթական շինություններով ռոմանտիկ զբոսայգիների*

*նմանությունը։ Ռոմանտիկ պարտեզները բնորոշ էին XVIII դարի Ֆրանսիային։ Որոշ չափով արտացոլվել է Ռուսաստանի նույն դարի պարտեզներում։*

*643.* ՌՈՏՈՆԴ — РОТОНДА *Քարե կամ փայտե պահող սյուներով բաց, կլոր, գմբեթածածկ կառույց։ Բնապատկերային պարտեզների ու զբոսայգիների ձևավորման տարր։*

*644.* ՌՈՒՍՏԱՇԱՐՎԱԾ ՍԱՆԴՂԱՋՐՎԵԺ — РУСТОВАННЫЙ КАСКАД *Թափվող ջրով քարե կառուցվածք թեք ռելիեֆի վրա (տե՛ս նաև՝ ՍԱՆԴՂԱՋՐՎԵԺ)։*

## Ս

*645.* ՍԱԾԻԼՈՒՄ ԾԼՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ — ПИКИРОВКА В СТАДИИ ПРОРАСТАНИЯ *Ցանված բույսերի սածիլումը՝ շաքիլային տերևների երևան գալուց հետո։*

*646.* ՍԱՂԱՐԹԱԶԱՆԳՎԱԾ — МАССА КРОНЫ *Սաղարթի ամբողջությունը։ Ճյուղավորման համակարգի բնույթով որոշվող հատկանիշ։ Տարբերում են ծայրամասային խոշոր, քիչ ճյուղերով ցանցկեն՝ դիտվող (ընկուզենի մոխրագույն, թեղի գետնահար, սոճի սովորական), խիտ, զանգվածեղ՝ դիտվող (լորենի, եղևնի արծաթափայլ, սպիտակ ակացիա) և ծայրամասային բազմաթիվ ճյուղերով՝ գնդաձև սաղարթներ։*

*647.* ՍԱՂԱՐԹԱԹԱՓԱՆՑՈՒԹՅՈՒՆ — СКВОЗИСТОСТЬ КРОНЫ *Սաղարթի ցանցկեն լինելը։ Որոշվում է սաղարթի ճյուղերի ու տերևների դասավորության խտությամբ։*

*648.* ՍԱՂԱՐԹԻ ՖԱԿՏՈՒՐԱ — ФАКТУРА КРОНЫ *Ծառի, թփի մակերեսի կառուցվածքի կազմությունը, յուրահատկությունը։ Կախված է տերևների մեծությունից և ճյուղերի վրա դրանց տեղադիրքից։ Լինում են սաղարթի մանր ֆակտուրայով (տոսախ, ձյունաշարուկ) և խոշոր ֆակտուրայով (կատալպա, ընկուզենի մոխրագույն, սմախ բուրավետ) բույսեր։*

*649.* ՍԱՆԴՂԱՋՐՎԵԺ — КАСКАД *Սանդղափուլերով գահավիժող բնական կամ արհեստական ջրվեժ։ Արհեստական սանդղաջրվեժը իրենից ներկայացնում է գահավիժող ջրհոսքի ճանապարհին քարից կամ բետոնից պատրաստված բազմաստիճան կառուցվածք։*

*650.* ՍԱՆԴՂԱՓՈՒԼ — ТЕРРАСА *Հովիտների լանջերի, լճերի և ծովերի ափերի աստիճանաձև ռելիեֆ։ Կանաչ շինարարությունում՝ ռելիեֆի թեքության վրա սանդղափուլ առաջացնող բնական կամ արհեստական ստեղծված հորիզոնական կամ փոքր թեքությամբ հարթակ։ Բնորոշ էր հնագույն պարտեզներին, Վերածննդի և Բարոկկոյի ժամանակաշրջանի զբոսայգիներին, որոնք ստեղծվում էին ձորակների լանջերին, լեռնային պայմաններում։*

*651.* ՍԱՆԻՏԱՐԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԶՈՆԱ — САНИТАРНО-ЗАЩИТНАЯ ЗОНА *Հատուկ տարածք, որը արդյունաբերական ձեռնարկությունը կամ ձեռնարկությունները բաժանում է բնակելի շրջանից։ Ընդգրկում է պաշտպանա-*

կան տնկարկների հատուկ համակարգ՝ զուգորդված բաց հողամասերով, տնկարաններով, տնտեսական շինություններով։ Նախատեսված է արդյունաբերության անբարենպաստ ազդեցություններից (գազերի, փոշու, ծխի, գոլորշու և այլնի արտանետումներից) բնակելի թաղամասերը պաշտպանելու համար։ Տե՛ս նաև՝ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՏՆԿԱՐԿՆԵՐ։

**652. ՍԵՂԱՆԱՅԳԻ** — БОНЗАП *Գաճաճ ծառեր ու թփեր աճեցնելու և այդ բույսերը շենքում տեղադրելու ճապոնական արվեստ։*

**653. ՍԵԼԵԿՑԻԱ** — СЕЛЕКЦИЯ *Գեղազարդային բույսերի նոր սորտերի ստեղծման և ընտրության միջոցով գոյություն ունեցող հին սորտերի բարելավման տեսություն ու պրակտիկա։ Ներկայացնում է փոփոխականության և ժառանգականության պրոցեսների ուսումնասիրման հիման վրա կատարված սկզբնական նյութի ընտրություն և գեղազարդային բույսերի նոր ձևերի ու սորտերի ստացում։*

**654. ՍԵՆԵԿԱՇԱՐՔ** — АНФИЛАДА *Պարտեզապուրակային արվեստում տնկարկներով շրջափակված տարածություններ, որոնք իրար միացած են մեկ առանցքի վրա տեղադրված անցումներով։*

**655. ՍԵՆՅԱԿԱԲՈՒՅՍԵՐ** — КОМНАТНЫЕ РАСТЕНИЯ *Շենքի ներսի միկրոկլիմայական պայմաններում աճելուն ու զարգանալուն հարմարված բույսեր։ Օգտագործվում են շենքերի ներսի կանաչապատման համար։*

**656. ՍԵՐՄ** — СЕМЕНА *Բույսերի սաղմը կրող բազմացման գեներատիվ օրգան։*

**657. ՍԵՐՄԵՐԻ ԱՎԱԶԵՑՈՒՄ** — ПЕСКОВАНИЕ СЕМЯН *Ծառաթփային բույսերի սերմերի ծլումը արագացնելու նպատակով դրանց երկարատև պահումը $0+5°$ ջերմաստիճանի խոնավ ավազում։*

**658. ՍԵՐՄԵՐԻ ԲԱՑԱՐՁԱԿ ՔԱՇ** — АБСОЛЮТНЫЙ ВЕС СЕМЯН *Յուրաքանչյուր բույսի 1000 սերմի քաշը՝ օդաչոր վիճակում։*

**659. ՍԵՐՄԵՐԻ ԾԱՎԱԼԱՅԻՆ ՔԱՇ** — ОБЪЕМНЫЙ ВЕС СЕМЯН *Մեկ լիտր սերմերի քաշը՝ արտահայտված գրամներով։*

**660. ՍԵՐՄԵՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ** — ЖИЗНЕСПОСОБНОСТЬ СЕМЯН *Սերմերի ծլունակությունը պահպանելու տևողությունը։ Տևում է մի քանի օրից (ուռենի, բարդի) մինչև մեկ տարի (թեղազգիներ, կաղնի, հաճարենի, շագանակենի, ընկուզենի) և ավելի (լոբենի, սիզամարգային շատ խոտերի սերմեր)։*

**661. ՍԵՐՄՆԱԲՈՒՅՍ** — СЕЯНЕЦ *Սերմից աճեցված բույս տնկարանի ցանքային բաժանմունքում (մինչև 1—3 տարեկան), ծաղկաջերմոցի բուծման բաժանմունքում (մինչև 1—3 ամսական)։*

**662. ՍԵՐՄՆԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ** — СЕМЕННИКИ *Սերմեր ստանալու նպատակով աճեցվող առանձին բույսեր։*

**663. ՍԵՐՊԱՆՏԻՆ** — СЕРПАНТИН *Տե՛ս ՈՒՂԵԳԱԼԱՐ։*

**664. ՍԻԶԱՄԱՐԳ** — ГАЗОН *Միատեսակ վառ կանաչ հանրանկար ստեղծելու նպատակով արհեստական ճմածածկույթ, հիմնականում հացազգի*

խոտերով ցանված հողամաս։ Ըստ օգտագործման նպատակների լինում է գեղազարդային (պարտերային, սովորական, մավրիտանական), սպորտային, միամյա ծաղկող սիզամարգ։

665. ՍԻԶԱՄԱՐԳԱՀՆՁԻՉ — ГАЗОНОКОСИЛКА Սիզամարգերը հաճախակի հնձելու և ձևավորելու հատուկ մեքենա։ Ապահովվում է սիզամարգի համաչափ, որոշակի բարձրությամբ և ձևով հնձումը։

666. ՍԻԶԱՄԱՐԳԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐ — ГАЗОННЫЕ РАСТЕНИЯ Լավ ճիմ առաջացնող խոտաբույսեր, հիմնականում հացազգիներ, ծաղկախոտեր (դաշտավլուկ մարգագետնային, ոլոռնախոտ անգլիական, ոլոռնախոտ ֆրանսիական) և այլն։

667. ՍԻՄԲԻՈԶ — СИМБИОЗ Տե՛ս ՀԱՄԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ։

668. ՍԽԵՄԱ — СХЕМА Ընդհանուր գծերով պատկերման կամ նկարագրման հոմանիշ օգտագործվող տերմին։ Օրինակ, այցելուների շարժման երթուղու ուրվագիծ, քաղաքի (ավանի) կանաչապատման ուրվագիծ, ուղղաձիգ հատակագծման ուրվագիծ, բնատեսարանային կետերի ուրվագիծ, տարածքի զոնայացման ուրվագիծ և այլն։

669. ՍՅՈՒՆԱՆՄԱՆ ՍԱՂԱՐԹ — КОЛОННОВИДНАЯ КРОНА Ծառաթփային բույսերի բնամերձ ճյուղավորությամբ սաղարթ։ Օրինակ, Յարլոկովի բարդի, բրգաձև նոճի և այլն։

670. ՍՆՆԴԱՐԱՐ ԽԱՌՆՈՒՐԴ — ПИТАТЕЛЬНАЯ СМЕСЬ Հումուսով հարուստ հողի և հանքային ու օրգանական պարարտանյութերի որոշակի խառնուրդ։ Օգտագործվում է թաղարներում ծաղկաբույսեր կամ արկղերում ծաղկային սածիլներ աճեցնելու համար։ Արդյունավետ են ազոտական, ֆոսֆորական, կալիումական պարարտանյութեր խառնած անտառային բուսահողը և խառնաղբը։

671. ՍՆՈՒՑՈՒՄ — ПОДКОРМКА Վեգետացիայի ընթացքում բույսերին լրացուցիչ սննդանյութերի մատակարարում։ Հիմնականում օգտագործվում են ջրում հեշտ լուծվող ազոտային աղեր կամ գոմաղբահեղուկ։

672. ՍՈՂԱՑՈՂ ԲՈՒՅՍԵՐ — СТЕЛЮЩИЕСЯ РАСТЕНИЯ Թույլ զարգացած մեխանիկական կառուցվածքով բույսեր, որոնք ուղղահայաց դիրք չեն գրավում, այլ տարածվում են հողի մակերեսին կամ կառչում են ուղղաձիգ հենարանից։ Օգտագործվում են ուղղաձիգ կանաչապատման բնագավառում, իսկ բնորոշ սողացողները՝ որպես սիզամարգախոտ։ Ամենաբնորոշ տեսակներն են հեդերան (բաղեղ), արմատակալող կամպսիսը, ճապոնական իլենու սողացող այլատեսակը, կուսախաղողի որոշ այլատեսակները, ամպելոպսիսները և այլն։

673. ՍՈԽՈՒԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ — ЛУКОВИЧНЫЕ РАСТЕНИЯ Սոխուկի տեսքով պահեստավորող հյուսվածքներ առաջացնող բույսեր։ Ծառայում են որպես բույսի բազմացման օրգաններ։ Տարբերվում են ցողունասոխուկավորներ (դաշտավլուկ սոխուկավոր), արմատասոխուկավորներ (վարդ-

կակաչներ, նարգիզներ, սոխ), պայմանական պալարասոխուկավորներ (թրաշուշաններ):

674. ՍՈՃՈՒՏ — СОСНЯК Սոճու զանգված: Սոճու մաքուր տնկարկներ ազգատ, չոր ավազային և ավազակավային հողերի վրա:

675. ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍԻԶԱՄԱՐԳ — ОБЫКНОВЕННЫЙ ГАЗОН Բացատներում, լայն բուլվարներում ստեղծվող ճմածածկույթ: Այդպիսի սիզամարգ ստեղծելու համար օգտագործվում է դաշտավլուկի, շյուղախոտի, դաշտախոտուկի որոշակի հարաբերությամբ վերցված սերմնախառնուրդը:

676. ՍՈՐՏ — СОРТ Սերմնային բազմացմամբ առաջացող, շեղվող հիբրիդային ձևերի սելեկցիոն ընտրության միջոցով ստացված տնտեսական միավոր:

677. ՍՊՈՐՏԱՅԻՆ ՍԻԶԱՄԱՐԳ — СПОРТИВНЫЙ ГАЗОН Հատուկ մարզահրապարակների (ֆուտբոլ, թենիս և այլն) ու մասսայական խաղերի, զբոսահանդեսների համար նախատեսված ճմածածկույթ: Կայուն են կոխոտման հանդեպ, լավ վերականգնվող են: Ստեղծվում են ինչպես մեկ կուլտուրայի (օրինակ՝ ֆուտբոլային դաշտի համար), այնպես էլ խառնուրդի (40 % դաշտավլուկ մարգագետնային, 30 % ռայգրաս արոտավայրային և 30 % կարմրան) սերմերի տեղում կատարվող ցանքսով, ինչպես նաև սերմերից հատուկ աճեցրած ճիմակոճղերի շարման միջոցով:

678. ՍՏԱԴԻՈՆ — СТАДИОН Սպորտային զբոսայգու տարատեսակ: Սպորտային հրապարակների, մարզադաշտերի, մարզապարտեզների և այլնի զարգացած համալիր: Տնկարկները պետք է կազմեն ստադիոնի ընդհանուր տարածքի ոչ պակաս 50%:

679. ՍՏԱՑԻՈՆԱՐ ՋՐՈՒՄ — СТАЦИОНАРНЫЙ ПОЛИВ Ջրում՝ խողովակաշարերի և գլխադիրների անձրևացման համակարգի օգնությամբ:

680. ՍՏՈԼՈՆ — СТОЛОН Վեգետատիվ բազմացման օրգան (ստորգետնյա ցողուն): Կազմաբանորեն ձևափոխված ընձյուղ է:

681. ՍՏՎԵՐԱԴԻՄԱՑԿՈՒՆ ԲՈՒՅՍԵՐ — ТЕНЕВЫНОСЛИВЫЕ РАСТЕНИЯ Լույսի անբավարարությանը հարմարված բույսեր: Աճում են ծառերի կամ պատերի ստվերներում (շրընկալ, բաղեղ և այլն):

682. ՍՏՎԵՐԱԴԻՄԱՑԿՈՒՆ ԾԱՌԱԹՓԱՏԵՍԱԿՆԵՐ — ТЕНЕВЫНОСЛИВЫЕ ДРЕВЕСНЫЕ ПОРОДЫ Ստվերը լավ տանող ծառեր (հաճարենի, լորենի, թխկի սրատերև, կենի, եղևնի, տոսախ), թփեր (փշարմավ, ցախակեռաս թաթարական և այլն):

683. ՍՈՒԿՈՒԼԵՆՏՆԵՐ — СУККУЛЕНТЫ Անբավարար խոնավության պայմաններում աճող և կենսագործունեության համար անբարենպաստ պայմանները հեղուկի կուտակված պաշարների հաշվին հաղթահարող բույսեր: Ունեն հաստացած, հյութալի ցողուններ (ցողունային սուկուլենտներ) կամ տերևներ (տերևային սուկուլենտներ): Պատկանում են բույսերի շատ ընտանիքների: Հաճախ ունենում են արտասովոր ձև (կոզիներ, թանձրատերևավորներ, իշակաթնուկ, ագավա, հալվե):

# Վ

684. ՎԱՂԱԾԱՂԿՈՂՆԵՐ — РАННЕЦВЕТУЩИЕ *Վաղ գարնանը (մերձարևադարձներում՝ ձմռանը) ծաղկող բույսեր։ Հատկապես տպավորիչ են սովորական բույսերի տերևազուրկ վիճակի ժամանակ (նշենի, ծիրանենի, ռոնչի մշտականաչ, ոսկեզանգ, ակացիա դեալբաթի, խնձորենի ճապոնական)։*

685. ՎԱՂԱՆՑԻԿ ԲՈՒՅՍԵՐ — ЭФЕМЕРЫ *Տե՛ս* ԷՖԵՄԵՐՆԵՐ։

686. ՎԱՂԱՆՑԻԿԱՆՄԱՆ ԲՈՒՅՍԵՐ — ЭФЕМЕРОИДЫ *Տե՛ս* ԷՖԵՐԱՆՄԱՆՆԵՐ։

687. ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ — ТЕРРИТОРИЯ ДИКОЙ ПРИРОДЫ *Հատուկ պահպանվող բնական տարածք։ Մարդու տնտեսական գործունեությամբ բնության չխաթարված հատված (կամ այնպիսի հատված, որի վրա մարդը ազդում է միայն որպես կենսաբանական էակ կամ անմիջապես կենսոլորտի համընդհանուր փոփոխման միջոցով)։ Պահպանվում է բացառապես բնական պրոցեսների վայրի վիճակը։*

688. ՎԱՐԴԱՆՈՑ — РОЗАРИУМ *1. Բառացիորեն վայրի մասրենիների մացառուտ։ 2. Վարդերի կոլեկցիոն կամ գեղազարդային հողամաս (զբոսայգու, պարտեզի հատված)։ Նախատեսված է վարդերի տարբեր տեսակների և սորտերի աճեցման ու ցուցադրման համար։*

689. ՎԱՐԴԱՍՏԱՆ — РОЗОВЫЙ САД *Պարտեզ, որում գերակշռում են վարդերը։ Այդպիսի պարտեզը հատակագծվում է կանոնավոր ոճով։ Հայտնի են հնագույն ժամանակներից (պարսկական «դրախտ», Շամիրամի կախովի պարտեզներ, հայկական «վարդաստաններ»)։*

690. ՎԱՐՊԵՏ — МАСТЕР *Կանաչ շինարարությունում պաշտոն, որը շնորհվում է տեխնիկումը, արհեստագործական ուսումնարանն ավարտելուց հետո (համապատասխանում է պարտիզագործ, հազվադեպ՝ կանաչ շինարարության ինժեներ կոչումին)։ Պարտեզապուրակային աշխատանքների հիմնական կատարող։*

691. ՎԱՐՍԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ — ПЛАКУЧИЕ РАСТЕНИЯ *Գեղազարդային բույսեր։ Բնականորեն ստացվում են պատվաստաշիվերով վեգետատիվ բազմացման (ուռենի բաբելոնյան, ուռենի սպիտակ) և պատվաստման (թխենի սպիտակ, հացենի սովորական, հացենի վարսավոր, պրոսենի վարսավոր և այլն) միջոցով։ Լայնորեն օգտագործվում են ջրամբարների կանաչապատման ժամանակ և հուշահամալիրներում (գերեզմանատներում)։*

692. ՎԵԳԵՏԱՏԻՎ ԲԱԶՄԱՑՈՒՄ — ВЕГЕТАТИВНОЕ РАЗМНОЖЕНИЕ *Բազմացման անսեռ եղանակ, երբ օգտագործվում են բույսերի վեգետատիվ օրգանները (արմատ, ցողուն, ընձյուղ, տերև), պատվաստը (կտրոնապատվաստ, ճեղքապատվաստ, աչքապատվաստ, լեզվակապատվաստ), անդալիսը։ Կիրառվում է պարտեզային ձևերը բազմացնելիս՝ բույսերի գեղազարդային կարևոր հատկանիշները (սաղարթի ձև, գույն և այլն) պահպանելու նպատակով։*

**693 ՎԵԳԵՏԱՑԻԱՅԻ ՇՐՋԱՆ** — ВЕГЕТАЦИОННЫЙ ПЕРИОД *1. Տարվա ժամանակահատված, որի ընթացքում օդերևութաբանական պայմանները բույսերի նորմալ աճի և զարգացման հնարավորություն են տալիս։ Բարեխառն գոտում որպես դրա սահման պայմանականորեն ընդունված է այն ժամանակահատվածը, որի ընթացքում օդի միջին օրական ջերմաստիճանը բարձր է 5°-ից։ 2. Բույսի զարգացման լրիվ ցիկլին անհրաժեշտ ժամանակահատված (գյուղատնտեսական պրակտիկայում բույսի աճի սկզբից մինչև բերքահավաքը)։*

**694. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ** — РЕГЕНЕРАЦИЯ *Պատվաստի միջոցով բույսի վերականգնումը (հյուսվածքներից, պատվաստաշիվերով և այլն)։*

**695. ՎԵՐԱՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ** — РЕКУЛЬТИВАЦИЯ *Անբերրի հողերի, աղբավայրերի, լցակույտերի, բաց եղանակով շահագործվող հանքավայրերի վրա քամու և ջրային էրոզիայի երևույթները կանխելու համար կանաչապատման (կամ անտառապատման) միջոցառումների համակարգ։ Կատարվում է ինժեներական նախապատրաստման ու պարտեզապուրակային շինարարության մեթոդներով։*

**696. ՎԵՐԳԵՏՆՅԱ ՄԱՍ** — НАДЗЕМНАЯ ЧАСТЬ *Բույսի արմատավզիկից վեր գտնվող մասը (բունը, ճյուղերը, տերևները, ծաղիկները, պտուղները)։*

**697. ՎԻՍՏԱ** — ВИСТА *Բացվածք պարտեզի գլխավոր առանցքի երկարությամբ կամ սանդղափուլից՝ դեպի շրջապատող լանդշաֆտի հեռապատկերը։*

## Տ

**698. ՏԱԽՈՄԵՏՐԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ** — ТАХОМЕТРИЧЕСКАЯ СЪЕМКА *Տարածքի տեղագրական հանույթ։ Միաժամանակ որոշվում է իրադրության հորիզոնական և ռելիեֆային (ուղղաձիգ) վիճակը։ Հանույթը կատարվում է թեոդոլիտի միջոցով։*

**699. ՏԱՂԱՎԱՐ** — ПАВИЛЬОН *Համեմատաբար հավաք ծավալով թեթև կառուցվածք պարտեզներում և զբոսայգիներում։ Նախատեսված է խաղաղ հանգստի համար և տեղադրված է լինում բացատներում, ծառուղիների շրջադարձերում։*

**700. ՏԱՂԱՎԱՐԻԿ** — БЕСЕДКА *Պարտեզապուրակային կառուցվածք։ Հանգստի, ստվերի, անձրևից պաշտպանվելու համար ծածկված թեթև շինություն է, որի ծածկի մետաղական կամ փայտե հիմնակմախքը պատված է լիաններով։*

**701. ՏԱՆԻՔԱՊԱՐՏԵԶ** — САД НА КРЫШЕ *Շենքերի տանիքների լցովի հողաշերտով սահմանափակ հատված՝ ծառերի, թփերի, խոտաբույսերի աճեցման համար։ Լայնորեն կիրառվում է հյուրանոցներում, արդյունաբերական ձեռնարկություններում, գարաժներում, հանրակացարաններում։ Նախա-*

*տնկված է կարճատև հանգստի համար։ Պահանջում է մանրամասների կոմպոզիցիոն և կառուցվածքային մանրազնին մշակում։*

*702*. ՏԱՐԱԾՔԻ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԿԱՆԱՉ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ — АГРОТЕХНИЧЕСКАЯ ПОДГОТОВКА ТЕРРИТОРИИ В ЗЕЛЕНОМ СТРОИТЕЛЬСТВЕ *Կանաչապատման աշխատանքներ (ցանք, տնկում, հարդարում, բուժում) կատարելու համար հողամասերի նախապատրաստումը տնկարանում ու կանաչապատվող օբյեկտներում։*

*703*. ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ — БЛАГОУСТРОЙСТВО ТЕРРИТОРИИ *Կանաչապատման օբյեկտի ինժեներական նախապատրաստման, ջրամբարների ափերի ամրացման, ճանապարհների և ջրհոսքերի կարգավորման, բուսածածկույթի պահպանման, ուղղաձիգ հատակագծման, հին հիմքերի և անօգտագործելի շինությունների մաքրման կոմպլեքս միջոցառումներ։*

*704*. ՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ — ФУНКЦИОНАЛЬНАЯ ОРГАНИЗАЦИЯ ТЕРРИТОРИИ *Կանաչապատման խոշոր օբյեկտի տարածքի ստորաբաժանումը սպորտով զբաղվելու, զբոսանքի և խաղաղ հանգստի, մանկական հրապարակների, մասսայական զբոսանքների վայրերի և այլնի։ Միաժամանակ հաշվի են առնվում օբյեկտի բոլոր մասերի փոխադարձ գործառական կապերը։*

*705*. ՏԱՐԱԾՔԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ — ИНЖЕНЕРНАЯ ПОДГОТОВКА ТЕРРИТОРИИ *Պարտեզապուրակային շինարարությունում ուղղաձիգ հատակագծման, չորացման, ոռոգման, ջրամբարների և հեղեղատների ափերի ամրացման, էրոզիայից հողածածկույթի պաշտպանության, սողանքների դեմ պայքարի, հանքավայրերի լցակույտերի վերօգտագործման և այլն աշխատանքների ամբողջություն։*

*706*. ՏԱՐԱԾՔԻ ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ — ЛАНДШАФТНЫЙ АНАЛИЗ ТЕРРИТОРИИ *Կանաչապատման օբյեկտի նախագծման նպատակով տարածքի վերլուծություն։ Ընդգրկում է տնկարկների, ռելիեֆի, լանջերի տեղադիրքի գնահատումը, տեսարանային կետերի ընտրությունը, բնապատկերի հարստացման պոտենցիալ հնարավորությունների բացահայտումը։*

*707*. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱՉԱՊԱՏԵԼԻՈՒԹՅՈՒՆ — ОЗЕЛЕНЯЕМОСТЬ ТЕРРИТОРИИ *Կանաչապատվող տարածքի մակերեսի հարաբերությունը օբյեկտի ընդհանուր մակերեսին՝ արտահայտված տոկոսներով։*

*708*. ՏԱՐԱԾՔԻ ՉՈՐԱՑՈՒՄ — ОСУШЕНИЕ ТЕРРИТОРИИ *Ցամաքուրդային ցանցի կառուցմամբ ճահճակալած հողամասերի ստորգետնյա ջրերի մակարդակի արհեստական իջեցում։*

*709*. ՏԱՐԱՇԽԱՐՀԻԿ ԲՈՒՅՍԵՐ — ЭКЗОТИЧЕСКИЕ РАСТЕНИЯ *Տե՛ս ԷԿԶՈՏ ԲՈՒՅՍԵՐ։*

*710*. ՏԱՐԱՏԵՍԱԿ — РАЗНОВИДНОСТЬ *Ենթատեսակից մեկ կարգ ցածր տաքսոնոմիական միավոր։*

711. ՏԱՔՍՈՆ — ТАКСОН Բույսերի և կենդանիների դասակարգման կարգաբանական միավոր: Տարբեր աստիճանի տաքսոններ են ենթատեսակը, տարատեսակը, տեսակը, ցեղը, ընտանիքը, կարգը, դասը:

712. ՏԵԽՆԻԿԱԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ — ТЕХНИКО-РАБОЧИЙ ПРОЕКТ Կանաչապատման օբյեկտի նախագծի մշակման փուլ: Ընդգրկում է տարածքի գլխավոր հատակագծի, ուղղաձիգ հատակագծման նախագծերի, ինժեներական կահավորման ու ճարտարապետական փոքր ձևերի, նախագծի աշխատանքային գծագրերը: Կազմվում է կանաչապատման ոչ մեծ օբյեկտների համար:

713. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ — ТЕХНИЧЕСКИЙ ПРОЕКТ Կանաչապատման օբյեկտի նախագծի մշակման փուլ: Ընդգրկում է գլխավոր հատակագիծը, ծառաբանական, ուղղաձիգ հատակագծման, ինժեներական կառուցվածքների ու կահավորման և այլն առանձին նախագծերը, ինչպես նաև օբյեկտի շինարարության նախահաշիվը: Կազմվում է մեծ պարտեզների, զբոսայգիների, անտառապուրակների, ինչպես նաև կարևոր նշանակություն ունեցող կանաչապատման օբյեկտների համար:

714. ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ — ТЕХНИКО-ЭКОНОМИЧЕСКИЙ ПОКАЗАТЕЛЬ Կանաչապատման օբյեկտի պլանավորման արժեքի վիճակը, արդյունավետությունը և որակը բնորոշող հիմնական տվյալներն արտահայտող բացարձակ կամ հարաբերական թվային ցուցանիշ:

715. ՏԵՂԱԳԾՈՒՄ — РАЗБИВКА Կանաչապատվող հողամասում, անմիջապես բնության մեջ, նախագծի իրականացման առաջին փուլ: Ըստ մասշտաբի, հողամասում նշում են հիմնական կետերը, ճանապարհները, ապագա կառույցի տեղերը, հաղորդակցության ուղիները, ծաղկանոցները, մանրապուրակները և այլն: Պահանջվում է մեծ ճշտություն՝ նախագծից չշեղվելու համար:

